Azg Ազգ

3 ՆՈՅԵՄԲԵՐ 2007 ՇԱԲԱԹ 202 (3854)

Կոնդին ընդդեմ 106-ի

Պաշտոնական այցով Թուրքիայում գտնվող ԱՄՆ-ի պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը հանդիպել է այդ երկրի վարչապետ Էրդողանի հետ: Բանակցությունների հիմնական թեման է եղել քրդական հարցը: Ռայսը հայտարարել է, որ «PKK-ն բոլորի թշնամին է», համաձեռ գործողությունների ծրագիր է առաջարկել Անկարային: Հաղորդվում է, որ անդրադառնալով Ներկայացուցիչների պալատում քննարկվող 106-րդ բանաձևին, ԱՄՆ-ի պետքարտուղարը նշել է, որ շարունակելու է պայքարել, որ այն չընդունի Կոնգրեսը:

Ադրբեջանը եւ Թուրքիան ընդդեմ Հայաստանի

Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը ադրբեջանական լրատվամիջոցներին տված հարցազրույցի ժամանակ հայտարարել է, որ Թուրքիան եւ Ադրբեջանը պետք է միասնական դիրքորոշում դրսեւորեն հայերի դեմ: Ըստ Գյուլի, «այդ պայքարը պետք է մղվի ոչ թե Թուրքիայի սահմաններում, այլ ողջ աշխարհի քաղաքականությունը որոշող երկրներում»:

Սահակաշվիլուն չորս տարի անց ասում են «հեռացիր»

Եթե չփոխվեն պահանջները, թերեւս վրացիները առայժմ բավարարվեն 2003-ի հեղափոխությամբ

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Թբիլիսի

Վրաստանն առանց նախագահի, ընտրություններ սահմանադրական ժամկետներում, քաղբանտարկյալների ազատում, խորհրդարանում մեծամասնական կարգի վերականգնում: Սրանք էին այն հիմնական պահանջները, որոնք հրապարակել էին դեռեւս մեկ ամիս առաջ վրաց ընդդիմադիրները՝ պահանջները ներկայացնելով երկրի իշխանություններին:

Չորս տարի առաջ՝ նոյեմբերի 2-ին Վրաստանի խորհրդարանի առջեւ հավաքված բազմության համար որոշիչ ու առանձնահատուկ սկիզբ եղավ, որ հետո կոչվեց «վարդերի» հեղափոխություն: Այն ժամանակ երկրի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի հրաժարականն էին պահանջում մեծ մասամբ նրանք, ովքեր այսօր Վրաստանում իշխանություն են՝ ի դեմս նախագահ Միխեիլ Սաակաշվիլու:

Չորս տարի անց նույն տեղում հանրահավաք էին անցկացնում այսօրվա ընդդիմադիրները, որոնք թեեւ անմիջականորեն Սաակաշվիլու հրաժարականի հարց չէին ձեւակերպել, բայց դրա կարիքը եւս կարծես թե չկար, քանի որ

նախընտրությունը տվում է խորհրդարանական Վրաստանին:

Վաց խորհրդարանի շենքի առաջ երեկվա հանրահավաքը սկսվեց մոտ քառասուն րոպե ուշացումով եւ, տարբեր գնահատականներով, մինչեւ 70-80 հազար մասնակիցներով: Մինչ կիարթվելին տեխնիկական խնդիրները, Ռուսթավելու փողոցում սկսեցին բաժանել սպիտակ կտորներ, իսկ ժողովուրդը գնալով ավելանում էր:

Խորհրդարանի շենքի հարեւանությամբ, Վրաստանի հակամարտությունների կարգավորման հարցերով պետնախարարի աշխատակազմի շենքի տանիքից էլ կախված էր Բադրի Պատարկացիշվիլու ծաղրանկարը «Կարաբաս-Բադիբոս եւ բադրիոնեներ» մակագրությամբ եւ ընդդիմադիր ղեկավարների դեմքերով տիկնիկներով, որն, ի դեպ, հենց հանրահավաքի ընթացքում հանվեց ու կախվեց կրկին՝ մնալով արդեն անուշադրության մատնված:

Տես էջ 3

ՄԻՋԱԳԵՊ

Սադիզմ Աբովյան փողոցում

Երեւանի տարբեր բուերի առաջ միակերպ (հագուստով, խոսքով, շարժուձեւով) իրար գլխի հավաքված երիտասարդ տղաների կուսակումները սովորական բաներ են: Անցորդները գիտեն, որ նրանցից, այնուամենայնիվ, զգուշանալ պետք է: Սովորաբար դրանք «հաշիվ մաքրելու» հայկական տարբերակներ են, որոնք հիմնականում հայհոյախառը ծեծկռտումներով են ավարտվում: Բայց այն, ինչ երեկ պետհամալսարանի Աբովյան փողոցի «սեւ» մասնաշենքի դռների մոտ կատարվեց՝ սարսափելի էր, վայրագության աննկարագրելի երեւույթ: 18-20 տարեկան սեւազգեստ տղաների հսկայական ծավալի շուրջկալը արդեն չարագուշակ էր թվում առաջին իսկ հայացքից:

Հանկարծ շուրջկալածների 30-ից ավելի խումբը վայրագաբար հարձակվեց իրենց մեջ կանգնածներից մեկի՝ «դասապարտյալի» վրա ու բոլորը մեկ մարդու պես ոտքերով անխնա սկսեցին հարվածել գետնին տապալվածին: Ռիմակային մտածողությամբ այս տղաները պետք է ենթադրել, որ համալսարանի ուսանողներից են (այս շենքում տեղակայված են պատմության, տնտեսագիտության եւ ասպվածաբանության ֆակուլտետները): Սակայն, դասասան տեսնելու բնազդային, կենդանական, վայրենի մեթոդ, այն էլ՝ փողոցում, բոլորի աչքի առաջ: Եվ ոչ մի անցորդ չարձագանքեց, որեւէ միջամտություն չեղավ, օրենքի որեւէ «պահապան» մոտ չեկավ: Անտարբերությո՞ւն է, թե՞ վախ:

Մ. Ռ.

Սեֆիլյանի եւ Մալխասյանի հարցը այս ամիս չի քննարկվի

Վարդան Մալխասյանի փաստաբան Մուշեղ Շուշանյանը «Ազգին» հայտնել է, որ «Հայ կամավորականների համախմբում» նախաձեռնության ղեկավարներ Ժիրայր Սեֆիլյանի ու Վարդան Մալխասյանի վաղաժամկետ արձակման մասին դիմումը դասապարտյալներին վաղաժամկետ ազատ արձակող անկախ հանձնաժողովը այս ամիս չի լսի: Ըստ դասապաշտպանի, Ժիրայր Սեֆիլյանին վաղաժամկետ ազատ արձակելու հարցն ընդհանրապես չի քննարկվել, քանի որ հիմնարկի ղեկավարությունը Ժիրայր Սեֆիլյանին հայտարարել էր նկատողություն: Իսկ Մալխասյանի հարցի քննարկումը մերժվել է վերջինիս «անձը բավարար չափով ուսումնասիրված չլինելու պատճառով» տարօրինակ մեկնաբանությամբ:

Վարչապետը հանդիպեց վարորդների հետ

Երեկ գործադուլի էին դուրս եկել Երեւանի ավտոբուսների վարորդները: Վերջիններս իրենց մտավախությունն են արտահայտել կառավարության որոշման առիթով՝ «Ավտոբուս» ընկերությանը մեքենաները վարձակալության պայմանագրով մասնավորներին հանձնելու մասին: Սերժ Սարգսյանը հանդիպել է վարորդների հետ եւ հավաստիացրել, որ ավտոբուսները որեւէ մեկի սեփականությունը չեն, որոնցզի տնօրինվեն ըստ հայեցողության, այլ պետական սեփականություն են՝ տրված վարձակալության, եւ չկա մասնավորեցման մասին կառավարության այդպիսի որոշում:

Հանդիպումից հետո վարորդները դադարեցրել են գործադուլը, եւ երթուղային ավտոբուսները նորից են սկսել աշխատել:

ՀԱՄԱՌՈՏ

Տոյոտայում գործել է մահապարտ ահաբեկիչ

Ռուսաստանի Տոյոտի քաղաքի երթուղային ավտոբուսում 3 օր առաջ տեղի ունեցած պայթյունը մահապարտ ահաբեկիչ է կազմակերպել: Այս մասին հաղորդել է Ռուսաստանի հետաքննության դաշնային ծառայության ներկայացուցիչը: Հիշեցնենք, որ պայթյունի հետեւանքով զոհվել էր 8 մարդ, 51-ը՝ վիրավորվել:

Ամերիկացի դիվանագետները չեն ցանկանում աշխատել Իրաքում

ԱՄՆ-ի պետքարտուղարությունը որոշում է ընդունել այսուհետեւ Իրաքում աշխատելու համար դիվանագետների ուղարկել պարտադրաբար: Մինչեւ վերջերս աշխատանքը Բաղդադում կամավոր էր, սակայն շատ էլեր էին համաձայնում մեկնել այնտեղ աշխատանքի: Իրաքում ԱՄՆ-ի դեսպան Ջոնը պաշտպանել է պետքարտուղարության որոշումը պարտադրաբար Բաղդադ դիվանագետներ ուղարկելու մասին: Հաղորդվում է, որ այս որոշմանը չենթարկված դիվանագետները կազատվեն աշխատանքից:

73 քաղբանտարկյալ Ադրբեջանում

Ադրբեջանի իրավապաշտպան կազմակերպությունների դաշնությունը հրապարակել է այդ երկրի քաղբանտարկյալների նոր ցանկը: Քաղաքական հալածանքների ենթարկվածների հիշատակման օրը ադրբեջանցի իրավապաշտպանները հրապարակել են 73 մարդու անուն, ովքեր, նրանց կարծիքով, քաղբանտարկյալներ են: Հաղորդվում է, որ վերջին մեկ տարվա ընթացքում այս ցուցակում ավելացել են նաեւ մի քանի լրագրողների անուններ:

Նորածնին վաճառեց 200 դոլարով

ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչությունում ավարտվել է երեխայի վաճառքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը: Իջեւանում ժամանակավոր բնակվող, երկու երեխաների մայր Ա. Գրիգորյանն, արտաքնաական կարգերից հղիանալով, 2006-ի հունիսի 24-ին Իջեւանի վագոն-տնակներից մեկում ծննդաբերել է տղա երեխա, ապա տեղափոխվել Իջեւանի հիվանդանոցի ծնունդների բաժանմունք: Երբ օր անց, Իջեւանի բնակիչ Ս. Բլբուլյանի դրդմամբ, 200 ԱՄՆ դոլարով Ա. Գրիգորյանը իր նորածին որդուն վաճառել է Ռ. Բալասյանին: Ա. Գրիգորյանին եւ Ռ. Բալասյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ Ս. Բլբուլյանին՝ 38-168-րդ հոդվածի 1-ին մասով: Քրեական գործն ուղարկվել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան:

Մ. ՄԱՆԿԱՐՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Մահակ, թե՞ հակակոռուպցիոն մարմին

Ազգային ժողովում քննարկվում է քարշքաշտիանի պաշտոնյաների հանցագործությունները նպաստող մարմին ստեղծող նախագիծ

ՄԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկ Ազգային ժողովը առաջին ընթերցմամբ քննարկում էր մի օրենքի նախագիծ՝ «Հատուկ քննչական ծառայության մասին», որով նախատեսվում է օրենսդիր, գործադիր, դատական իշխանության ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց կամ նրանց կատարած հանցագործությունների, նաեւ՝ ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն իրականացնող մարմին ստեղծել: Այդ ստեղծվելիք հատուկ քննչական խումբը պետք է նախաքննություն իրականացնի դատախազության, ոստիկանության, ազգային անվտանգության, հարկային եւ մաքսային մարմինների, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող այն պաշտոնյաների հանցագործությունների հետ կապված, ովքեր դրանք կատարում են իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս: Այս մարմնի ղեկավարին նշանակում եւ ազատում է ՀՀ նախագահը՝ գլխավոր դատախազի ներկայացմամբ, իսկ անցկացվող նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնում է երկրի գլխավոր դատախազը:



Օրենքը միանշանակ չէր ընդունվում հասկապես ընդդիմադիր պատգամավորների կողմից, անգամ գտնվեց նրանցից մեկը՝ «Ժառանգությունից» **Սյոռա Սաֆարյանը,** որ այս օրենքի նախագծի ստեղծման քաղաքական ենթատեքստ տեսավ՝ կապելով առաջիկա նախագահական ընտրությունների հետ, թե՝ այսպիսով, մահակ ենք տալիս երկրի նախագահի ձեռքը՝ պաշտոնյաների գլխին պահելու եւ ընտրությունների ընթացքում նրանց կողմից վերեւներին ցանկալի գործելակերպ որդեգրելու համար: Մահակի կողքին իր մտահոգությունը դրեց նաեւ ՀՅԴ-ից **Արսաքես Շահբազյանը՝** մի փոքր ավելի մեղմ տոնով զգուշանալով. «Ասված չանի, որ այս մարմնի ստեղծումով քաղաքական խնդիրների մեջ էլ մտնենք հանկարծ՝ այս մարմինը մտրակ դառնա»:

Տես էջ 3

«Անկախություն» թերթի գաղափարներով սնվում էին բոլորը

80-ականներին անկախություն բառն արտաբերելն արդեն իսկ խիզախում էր, ուր մնաց թե այդ անունով պարբերական ստեղծելն ու տարածելը, այն էլ առանց սեփական անունը կեղծելու եւ ողորկվելու, բանից եւ ախորից սարռալու: Երբ 1988-ի շարժման սկզբում Մովսես Գորգիսյանը Մատենադարանի հարթակից անկախություն էր գոչում հոգու ամբողջ ուժով, մարդիկ մի պահ կարկամում էին՝ սպասելով ինչ-որ բանի, այնպիսի ներին վախ կար, ասես այդ խոսքերից հետո ինչ-որ բան պիտի կատարվեր, սարսափելի ու ահարկու մի բան: Մովսեսի անունն այսօր իչ է ինչում, նրա մասին իչ գրվում, բայց նրա ազատասեր ոգին անկարող են մոռանալ բոլոր նրանք, ովքեր գեթ մեկ պահ ունկնդրել են նրա խոսքը: Այդ տարիներին լեգենդի պես էր ինչում նաեւ անկախության գաղափարի համար խորհրդային բանտերում իր երիտասարդ կյանքն աորած Պարույր Հայրիկյանի անունը: Հենց նրա, ով ուղիղ 20 տարի առաջ ստեղծեց եւ անձամբ խմբագրեց «Անկախություն» թերթը, սակայն կարճ ժամանակ անց՝ 1988-ի մարտի 25-ին, ձերբակալվեց Մեխակ Գաբրիելյանի եւ գաղափարակից մի քանի այլ ընկերների հետ: Թերթի խմբագրի գործը հանձն առավ Ռաֆայել Համբարձումյանը՝ խմբագրատեսի Համազասպ կեղեանունով:

Թե գաղափարական ինչ ազդեցություն ունեցավ «Անկախությունը» հասարակական մտքի ձեւավորման վրա՝ 1987-ի հոկտեմբերի 24-ից մինչեւ փակվելը՝ 1990-ը, խոսվեց Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ ակադեմիայի կլոր սրահում երեկ հրավիրված գիտաժողովում: Պատմության ինստիտուտի տնօրեն **Ատոս Մելքոնյանը** հիշեց, որ երբ 1988-ի հանրահավաքների ժամանակ առաջին անգամ լսեց անկախություն վանկարկող ժողովրդի ձայնը, մի տեսակ համրացավ ու չկարողացավ իսկույն ձայնակցել նրան: Սակայն իչ անց, երբ ձեռքն ընկավ «Անկախություն» շաբաթաթերթը, այդ բառը լսելը չափազանց հաճելի դարձավ, քանի որ այդ գաղափարից ավելի վեհ բան մարդու համար գոյություն չունի: «Հիմա, երբ խոսվում է, թե այլ քաղաքական ուժեր եկան ու սահուն ձեւով այդ գաղափարը յուրացրին, Պարույր Հայրիկյանը կարեւոր չի համարում, թե այդ պահին ովքեր էին կանգնած իշխանության գլուխ: Նրա համար կարեւորը երեւույթն է, գաղափարը, որ մեր ժողովրդի մեջ վաղուց խմորվել էր ու հասարակական որոշ ուժերի շնորհիվ հասավ մեր ժողովրդին՝ դառնալով իրողություն», ասաց Մելքոնյանը:

Ռաֆայել Համբարձումյանը նախ պատմեց Հայրիկյանի հետ իրենց հանդիպման ու գաղափարական միասնության մասին, հետո անցավ ներսում կուսակված այլ հարցերին՝ «Բոլշեւիկյան պատմագիտությունը հայոց պատմության մեջ բացի անուններից ուրիշ ոչինչ ճիշտ չի գրել: Մենք հիմա իրավունք չունենք այդպիսի բան անելու, բայց նույնը շարունակվեց անկախությունից հետո՝ կեղծ սպարապետներ, հերոսներ: Ամենից շատ ես գիտեմ այդ իրողությունների մասին, ինձնից բացի դրանց մասին կարող է խոսել նաեւ Պարույր Հայրիկյանը: Անկախության շարժումը ես անվանեցի հայոց համազգային եւ այդ ՀՀՇ կոչվածը վերցրեց եւ իր վրա դրեց: 1988-ին առաջինը ես ցույց տվեցի ՀՀՇ-ի դրածո լինելը»:

Իրեն հատուկ զուսպ տոնով **Պարույր Հայրիկյանը** միայն ասաց, որ իր ղեկավարած «Ազգային ինքնորոշում» կուսակցությունն ընդամենը «Ազգային միացյալ կուսակցության» ընդհատակից դուրս եկած հատվածն էր: «Այսինքն՝ մենք եղել ենք Հայկազ Խաչատրյանի երախտապարտ զինվորները: Այդ նա էր, որ կարողացավ նախ եւ առաջ կոտրել վախի զգացումն ու հոգեբանական հեղափոխություն նախապատրաստելով մարդկանց մղել անկախության համար պայքարի»:

Նշյալ ելույթներից առաջ թերթի գործունեության ու ազդեցության մասին զեկուցումներով հանդես եկան պատմաբաններ **Էդիկ Մինասյանը, Լիլիթ Զաքարյանը, Ներսես Հայրապետյանը**: «Թերթն ունեցավ մի շատ կարեւոր դերակատարում՝ ամենից առաջ մեկ ընդհանուր դրոշի ներքո համախմբեց քաղաքական բոլոր գործիչներին, ամրապնդեց անկախ պետականության գաղափարը, զորացրեց արցախյան ազատագրական շարժումը: Արցախի ինքնորոշման իրավունքի գաղափարն առաջինը առաջ քաշեց «Անկախությունը», դրան հաջորդեցին ազգային բանակ ստեղծելու, ազգային դրամ ունենալու եւ շատ այլ գաղափարներ: Այսինքն՝ թերթում ամփոփված էին անկախության այն բոլոր գործոնները, որոնք հետագայում կենսագործվեցին մեր իսկ կյանքում», ասաց Էդիկ Մինասյանը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Ամենամյա միջազգային զբոսաշրջային ցուցահանդես Երեւանում

Երեկ «Մոսկվա» կինոթատրոնում տեղի ունեցավ «Խոսող քարերի երկիր» «CTS 2007» ամենամյա 7-րդ միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսի պաշտոնական բացման արարողությունը: Միջոցառումը հետաքրքրում է երկու նպատակ՝ խթանել ներին եւ տարածաշրջանային զբոսաշրջությունը, տեղեկացնել հասարակությանը, հաճախորդներին, մասնագետներին, պաշտոնյաներին եւ մյուս շահագրգիռ կողմերին զբոսաշրջության ոլորտի զարգացման միտումների մասին եւ ստեղծել ֆորում զբոսաշրջության ոլորտի բոլոր շահագրգիռ կողմերի համար:

ՖՈՏՈԼՈՒՐ

Ցուցահանդեսին մասնակցում են 48 կազմակերպություններ: Ցուցահանդեսում տաղավարներ են հատկացված Հայաստանի հետեւյալ մարզերին՝ Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ եւ Վայոց ձոր:

Ըստ ամերիկահայ համայնքի հետազոտության, 2006-ի հունվարին 600 հոգու հեռախոսային հարցումից պարզ է դարձել, որ ամերիկահայ համայնքի կեսից ավելին չափազանց հետաքրքրված է Հայաստան այցելելու հարցով: Հայաստանի զբոսաշրջության ոլորտը պետք է օգտվի սփյուռքի ճանապարհորդելու հետաքրքրվածությունից եւ ակտիվորեն խրախուսի սփյուռքի համայնքին՝ այցելել Հայաստան: Հայաստանը, որպեսզի զբոսաշրջության համաշխարհային շուկայում կարողանա մրցունակ լինել, պետք է տեղյակ լինի, թե որքանով է մրցունակ՝ մրցող երկրների համեմատությամբ:

Զբոսաշրջության զարգացման համաշխարհային լավատեսական կանխատեսումները հուսադրող են Հայաստանի համար, սակայն զբոսաշրջության մրցունակության տեսանկյունից Հայաստանի դիրքերը բավականին թույլ են: Զբոսաշրջության աղբյուր-երկրներից Հայաստանի համար առավել կարեւոր են Ռուսաստանը, ԱՄՆ-ն, Իտալիան, Մեծ Բրիտանիան եւ Ֆրանսիան, որոնց վրա պետք է կենտրոնացվեն մարկետինգի եւ խթանման միջոցները: Հեղինակավոր միջազգային կազմակերպությունների կողմից հաշվարկվող զբոսաշրջությունը եւ այդ ոլորտին առնչվող համաթվերի վերլուծությունը մատնանշում է, որ Հունգարիան, Էստոնիան եւ Իսրայելը կարելի է դիտել որպես լավագույն փորձի օրինակներ, որոնց փորձը ուսանելի կլինի Հայաստանի համար զբոսաշրջության ոլորտի զարգացումը խթանելու գործում:

Ն. Մ.

ԱՏՈՒԳԱՅՑ

Նախագահը կաջակցի փաստերի վերլուծությունից եւ գրավոր դիմում ստանալուց հետո

Երեւանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանում էր երեկ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը աշխատանքային այցով, որի ընթացքում կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանի, առողջապահության նախարար Հարություն Քուրկչյանի ուղեկցությամբ ծանոթացավ բուհի հիմնանորոգված մասնաշենքի, ժամանակակից տեխնիկայով զինված կաբինետների հնարավորություններին եւ մասնակցեց բուհի գիտխորհրդի խորհրդակցությանը: Համատեղ քննարկվել են կրթօջախին առնչվող խնդիրներ, որոնցից կարեւորագույնը, ԵՊԲՀ ռեկտոր **Գոհար Քյալյանի** հավաստմամբ, տարածքային հարցն է: Բժշկական համալսարանին մերձակա տարածքը համալսարանական քաղաք է: Սակայն այնտեղ գտնվող որոշ շենքեր ու շինություններ 1995-96 թվականներին կամ մասնակի սեփականաշնորհվել են, կամ փոխանցվել այլ հիմնարկների:

Վիճակը շտկելու՝ կրկին նախկինում ունեցած տարածքների տերը դառնալու համար բուհի ղեկավարությունը նախագահի աջակցությունն է խնդրել, նպատակ ունենալով լիովին վերականգնել համալսարանական քաղաքը: Բժշկական համալսարանի ղեկավարությունը վստահեցրել է, որ ներկայումս ունի հաստատությանը նախկինում պատկանող շենքերի եւ շինությունների դիմաց փոխհատուցմամբ դրանք իրենց հաշվեկշիռ վերադարձնելու բոլոր հնարավորությունները: Այդ հնարավորության իրականացումն անհրաժեշտ է կրթօջախի զարգացման ու եվրոպական բոլոր չափանիշներին համապատասխան կրթական համալիր ունենալու համար: Հանրապետության նախագահը խոստացել է առաջարկությունը վերլուծելուց հետո ընթացք տալ բուհի ղեկավարության խնդրանքին, նաեւ գրավոր բոլոր հիմնավորումներն ու անհրաժեշտ փաստաթղթերը ստանալն է կարեւորել:

Ինչպես փոխանցեց նախագահի մամուլի խոսնակ **Վիկտոր Սողոմոնյանը**, Ռոբերտ Քոչարյանը տպավորված է բժշկական համալսարանի հիմնանորոգված մասնաշենքի եւ նոր կաբինետների հնարավորություններից: Առաջինը եւ ոչ միջնորդավորված նախագահի տպավորությունները հասու են դարձել Երեւանի քաղաքապետին եւ էներգետիկայի նախարարին, որոնց հետ զրույցում նախագահը կարծիք է հայտնել, որ կատարվածը ուսանելի փորձ է եւ կիրառելի ոչ միայն այլ ուսումնական հաստատություններում, այլեւ տարբեր հիմնարկներում: Իսկ կիրառելին գերժամանակակից կաբինետաշունն է, որն աշխատում է գազով, արտադրում էլեկտրաէներգիա: Այն բավարարում է կրթօջախի կարիքները, ավելին՝ հնարավորություն է տալիս որոշ քանակությամբ էլեկտրաէներգիա վաճառել էներգացանցերին: Կաբինետաշունը հնարավորություն է տալիս ձմռան համար պահանջվող ջերմությունը ամռանը վերածել օդափոխիչ-զովացուցիչ համակարգի: Ներկայացվածը, բուհի ռեկտոր Գոհար Քյալյանի հավաստմամբ, առաջընթաց քայլերի մի մասն է ընդամենը: Իսկ բուհի զարգացման եւ միջազգային մակարդակում մրցունակ մասնագետներ պատրաստելու համար հաստատության ղեկավարությունը նպատակ ունի վերականգնել համալսարանական քաղաքը, որը նույնպես պետք է համապատասխանի բարձր չափանիշներին:

Ն. Պ.

Մուշեղ Գյուլբենկյանի բարեգործությունները Նոր Խարբերդում

Դեռեւս 90-ականներից Հայաստանի տարբեր շրջաններում իր լուման ներդրած բոստոնաբնակ Մուշեղ Գյուլբենկյանն Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղում վերանորոգել ու գյուղի բնակիչներին է տրամադրել մսուր-մանկապարտեզը, մշակույթի տունն ու երկու դպրոց: 1998-2001-ին հիմնովին վերանորոգված Նոր Խարբերդի մսուր-մանկապարտեզը Արեւմտյան Հայաստանի Խարբերդ նահանգի Դաղեմ գյուղի բնակիչներ Կիրակոս եւ Եվա Գյուլբենկյանների, Աբրահամ եւ Թագուհի Տեր-Գրիգորյանների զավակները՝ Մուշեղ եւ Արմենուհի Գյուլբենկյանները, նվիրել են Հայաստանում քրիստոնեության 1700-ամյակին:

«Մինչեւ վերանորոգումը մանկապարտեզն անմխիթար վիճակում էր, պետությունը ոչ մի գումար չէր տրամադրել շինության բարեկարգմանը, պարոն Գյուլբենկյանի շնորհիվ գյուղի միակ մանկապարտեզը շունչ ստացավ՝ ձեռք բերելով անհրաժեշտ բոլոր պայմանները: Եթե նախկինում 5 երեխա էր հաճախում մանկապարտեզ, այժմ մեզ մոտ 96 երեխա է հաճախում», նշեց Նոր Խարբերդի մսուր-մանկապարտեզի տնօրեն **Նելլի Գորիբյանը:** Մսուր-մանկապարտեզն ամբողջովին գազաֆիկացված է, պատուհանված նոր ջրագծերով, տեղադրված պատուհաններով եւ, ինչպես նշեց մանկապարտեզի տնօրենը, ավելի քան 80000 դոլար է ծախսվել մանկապարտեզը ոտքի կանգնեցնելու համար: Շինարարական աշխատանքների ժամանակ կարիքավոր ընտանիքներն աշխատավարձով օրվա հացի տեր դարձան:

Դպրոցաշինությունը նույնպես բազում աշակերտների առջեւ նոր դռներ էր բացել: Մուշեղ Գյուլբենկյանն էլ դարձել էր արցախյան ազատամարտի հերոս Մնացական Ղազարյանի անունը կրող միջնակարգ դպրոցի սիրելի հյուրը: Այստեղ էլ «Հովհաննես Պուճիգյանի» թանգարանը 93-ից հովանավորում է տրն Գյուլբենկյանը: Թլկատինցու անվան թիվ 1 միջնակարգն էլ, բացի շինարարական աշխատանքներից, ստացել է համակարգիչներ՝ վերանորոգված նոր դասասենյակով:

Մշակույթի տունը, երաժշտական դպրոցը նույնպես գործում են շնորհիվ Մուշեղ Գյուլբենկյանի բարեգործության:

ՆԱՒԲԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԶ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հասարակություն (գրավոր) / հեռ 582960
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գրավազրային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

«Կարող են գլխիս գործ սարքել ու դատել»

«Գալա»-ի տնօրենը չի բացառում, որ մինչեւ նախագահական ընտրությունները իր հեռուստաընկերությունը կփակեն



Հարկային ոլեական ծառայությունը երեկվա եռօրյա սուգումներով Գյումրիի «Գալա» հեռուստաընկերությունում որեւէ խախտում չի հայտնաբերել: Երեկ այս մասին երեւանյան լրատվամիջոցների հետ հանդիպմանն ասաց Գյումրիի «Գալա» հեռուստաընկերության հիմնադիր տնօրեն **Վահան Խաչատրյանը**, ում հայտարարությանը զուգահեռ հեռուստաընկերությունում հայտնվեցին հարկային ծառայության աշխատակիցները՝ սուգումները շարունակելու: Հարկային ոլեական ծառայության «բուռն հետաքրքրությունը» «Գալա»-ի նկատմամբ առաջացել է այն բանից հետո, երբ հանրաոլեության 40-ից ավելի հեռուստաընկերություններից միայն վերջինս էր համարձակվել հեռարձակել Լեւոն Տեր-Ոլեսրոսյանի ամբողջական ելույթը: Խոսքի ազատության ոլաշտպանության կոմիտեի նախաձեռնությամբ երեկ երեւանյան մի շարք լրատվամիջոցներ եղան Գյումրիում՝ ծագած խնդրին անմիջականորեն ծանոթանալու համար:

Հեռուստաընկերության հիմնադիր Վահան Խաչատրյանի խոսքով, ելույթը հեռարձակելուց առաջ իրեն զանգահարել են հանրաոլեության ամենավերին օղակներից՝ նախագահի աշխատակազմից, ԱԱԾ-ից, ոստիկանությունից, եւ հորդորել ելույթը չհեռարձակել, մինչեւ անգամ սպառնացել են, որ նա կկորցնի իր ունեցվածքը: «Ասացին, որ եթե ես գործընթացը շարունակեմ այս ոճով, այսինքն՝ օբյեկտիվ լուսաբանեմ իրականությունը, սուգումներ կլինեն, տույժեր կլինեն, մինչեւ անգամ ես իմ սեփականությունը կկորցնեմ Գյումրիում եւ Երեւանում ու սիրված կլինեմ հեռանալ երկրից», իր ընդունած հեռախոսազանգերի բովանդակության մասին ասաց Վահան Խաչատրյանը, որն առաջին նախագահի ելույթը հեռարձակելուց առաջ վստահ է եղել, որ նման խնդիրներ ունենալու է: «Գալա»-ի հիմնադիրը նշեց, որ 26-27 գովազդատուներից այժմ մնացել են 3-4-ը, որոնք այս մի քանի օրը թերեւս կհրաժարվեն համագործակցությունից: «Կորցրած» գովազդների փոխարեն հեռուստաընկերությունն սկսում է մի ակցիա, որով գովազդային բլոկների փոխարեն հեռարձակելու է սահմանադրության խոսքի ազատությանը վերաբերող հատվածներ:

Վահան Խաչատրյանը չբացառեց, որ մինչեւ նախագահական ընտրությունները կարող են «իր գլխին գործ սարքել ու դատել», հեռուստաընկերությունն էլ փակեն: Ինչ վերաբերում է ելույթը հեռարձակելուն, Վահան Խաչատրյանը «իրեն չի համարում Լեւոն Տեր-Ոլեսրոսյանի կողմնակիցը: Ես պարզապես արել եմ այն, ինչ պիտի անեմ՝ տրամադրում եմ եթեր անխտիր բոլոր ցանկացողներին»:

«Գալա»-ում մեր ներկայության ժամանակ այցելեցին սուգումներ անցկացնող հարկային ծառայության աշխատակիցները, որոնք սառնասրտորեն «չշփվեցին» մեզ հետ: Հարկային ոլեական ծառայության օպերատիվ հետախուզության վարչության առաջին բաժնի ոլես **Գագիկ Օհանյանը** միայն հորդորեց ամեն ինչ չքաղաքականացնել. «Ամեն ինչ քաղաքական ռելսերի վրա չի կարելի դնել: Սրանք պլանային սուգումներ են, որով սուգում ենք բյուջեի հետ փոխհարաբերությունների համապատասխանությունը»:

Լրագրողներիս բավական բարեհաճությամբ ընդունեց Շիրակի մարզի նորանշանակ մարզպետ **Լիդա Նանյանը**, որը նախկինում զբաղեցրել է հարկային ոլեական ծառայության Շիրակի տարածքային կառույցի ղեկավարի պաշտոնը: Մարզպետը նախ նշեց, որ ինքը տեղյակ չէ «Գալա»-ի շուրջը ծագած խնդիրներին, այնուհետեւ հավելեց, որ հեռուստաընկերության հարկային գործունեությանը եւ մյուս գործերին խառնվելն իր իրավասությունից դուրս է: «Խախտում հայտնաբերելն էլ նորմալ է եւ հեռուստաընկերության աշխատանքի հետ կապ չունի: Իմ կարծիքով, ոչ մեկը չի խոչընդոտում հեռուստաընկերության աշխատանքին եւ այդտեղ քաղաքական ենթատեքստ չկա»: Մարզպետը հավատիացրեց, որ ինքը խստությունը չի դնում Գյումրիի լրատվամիջոցների միջեւ եւ իր այցերին էլ բոլորին հրավիրում է:

Մարզպետ Նանյանի ընդունելությունն ու լրագրողներիս հարցերին պատասխանելը որքան էլ լավ տպավորություն թողեցին, այդուհանդերձ նրա ասածները լսելիս մի պահ թվաց, թե այլ՝ իդեալական իրականության մասին է խոսքը: Մի՞թե զարմանալի է, որ մեր երկրում «ընդունված մոտեցումից» դուրս դրսեւորումները անբարեհաճ վերաբերմունքի են արժանանում:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Գյումրի-Երեւան

Սաակաշվիլուն չորս տարի անց ասում են «հեռացիր»

1-ին էջից

Ընդդիմադիր առաջնորդներն ամենից առաջ շեշտեցին, թե Սաակաշվիլին եւ խորհրդարանի նախագահ Բուրջանաձեն դուրս չեն գալիս ընդառաջ, թեեւ հրաշալի իմանալով, որ առնվազն երկրի նախագահը Թբիլիսիից դուրս էր գտնվում: Սաակաշվիլին «Եվրոպայի արեւելքի կառուցում» խորագրով միջազգային կոնֆերանսի հյուրերի հետ մեկնել էր Կախեթի շրջանի Սիղնախի քաղաք:

Ընդդիմության լիդերները, հանգստություն ու կայունություն ապահովելու կոչերին եւ որեւէ սադրանքի չգնալու խնդրանքին զուգահեռ, նախ հայտարարեցին, որ կձեւավորեն պատվիրակություն եւ նշված պահանջներով կուղարկեն Սաակաշվիլու մոտ: Այնուհետեւ ինքնաբավության որակներ ունեցող հայտարարություններ էին հնչում. «Ձիջումները բացառվում են, քանի որ մենք վրացի ենք», «Սուտ չենք ընդունում», «Ուզում ենք աշխատել ու ապրել, իսկ դրա համար իշխանությունները պիտի հեռանան», «Վրացիները եւս մեկ անգամ ապացուցեցին, որ իմաստուն են», «Կեցցե վրաց ժողովրդի հանճարն ու արժանապատվությունը» եւ այլն: Ի դեմ, հնչող ելույթների մեծագույն մասում դիմում ու հիշատակում էին միայն վրացիներին:

Բավականին յուրօրինակ ու ընդհանուր ֆոնին իր ակտիվությամբ խիստ տարբերվող էր Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի որդու՝ Կոնստանտինի ելույթին ամբոխի արձագանքը, թեեւ առանձնակի ոչինչ չասվեց: Դրա փոխարեն հաջորդ ելույթներում գոչները խստացան, խոսքն արդեն ոչ թե ինչ-որ պահանջների բավարարման էր վերաբերում, այլ Սաակաշվիլու հրաժարականին, իշխանությունների հեռանալուն:

«Հեռացեք», «Հրաժարական» ձայնարկությունները կամաց-կամաց զուգակցվեցին հրապարակում մնալու, մինչեւ վերջ իշխանություններին ներկայացված պահանջների կատարմանը հետամուտ լինելու կոչերը:

Ժամը 16:15-ին Վրաստանի նախկին պետնախարար Գեորգի Խաինդրավան հայտարարեց, որ պատվիրակությունն արդեն կազմված է, իշխանություններին վերջնաժամկետ է ներկայացվում մինչեւ ժամը 18-ը:

«Աջ ընդդիմություն» խորհրդարանական ընդդիմադիր խմբակցությունը, որ ի սկզբանե միասնական ընդդիմության մաս էր կազմում, չմասնակցեց հանրահավաքին՝ պատճառաբանելով, թե ակցիան կարող է վերածվել հեղափոխական գործընթացների, ինչին այս կուսակցությունը դեմ է: Դրա փոխարեն բողոքի ցույցին միացավ «Արդյունաբերությունը կփրկի Վրաստանը» կուսակցությունը, որի նախագահ Գոգի Թոփաձեն հայտարարեց, որ ներկա եւ նախկին իշխանություններին շատ բան է ներվել ու էլ բավական է:

Խորհրդարանական մեծամասնության ղեկավարներից Գիգա Բոկերիան նույն օրը հայտարարել էր, թե հանրահավաքը կանցնի խաղաղ, եթե ինչ-որ մեկի խելքին չփչի ինչ-որ հիմարություն անել: Իսկ եթե նման բան պատահի, կկանխվի օրենքի շրջանակներում: Ինչ վերաբերում է ընդդիմության «վերջնագրին», ապա Բոկերիան, իր կուսակիցների հետ քննարկումից հետո այն անլուրջ էր որակել եւ անարժան անգամ քննարկման:

Ընդդիմությանը ֆինանսավորող Բադրի Պատարկացիշվիլին էլ իր հերթին հայտարարել էր, որ թեեւ Լոնդոնից ժամանել էր Թբիլիսի, բայց չի լինի հանրահավաքին: Այնուամենայնիվ, Պատարկացիշվիլու խոսքերով, պայքարն իշխանության հետ հնարավորինս պիտի կազմակերպվի սահմանադրական դրույթներին համապատասխան եւ իրականացվի ընտրություններով: «Ընտրություններում պիտի հաղթի արժանի եւ ժողովրդի ընտրած մարդը: Դա է այն գլխավորը, ինչով ես կզբաղվեմ»:

Չնայած այդ հայտարարությանը՝ գրեթե գերմանական ճշգրտությամբ ժամը 18-ին «Վարդերի» հրապարակում հայտնվեց Պատարկացիշվիլին: Ողջունելով վրացիներին, որ հրապարակում «Բադրի» էին վանկարկում (ինչպես ժամանակին նույն կերպ ողջունում էին Վրաստանի առաջին նախագահին կամ էլ վարդյա հեղափոխության ժամանակ՝ ներկայիս նախագահին), Պատարկացիշվիլին հայտարարեց, թե ոչ մի հավակնություն չունի, բացի Վրաստանի քաղաքացի, վրացի, շարքային զինվոր լինելուց:

Պատարկացիշվիլու հեռանալուց հետո հանրահավաքի մասնակիցներին տեղեկացրին, որ իշխանությունները համաձայնել են երկխոսության եւ ժամը 19-ին տեղի կունենա հանդիպում խորհրդարանի նախագահ Նինո Բուրջանաձեի հետ: Հանդիպման մեկնեց յոթ հոգուց բաղկացած պատվիրակություն, որի կազմում էին ԱԳ նախկին նախարար Սալոմե Զուրաբիշվիլին, Կոբա Դավիթաշվիլին, Թինաթին Խիդաշելին եւ այլք:

Նինո Բուրջանաձեի հետ հանդիպումը տեղի ունեցավ՝ ակնհայտորեն հիասթափություն պատճառելով ընդդիմության պատվիրակներին: Վերջիններս հենց խորհրդարանի շենքում հանդիպումից հետո հայտարարեցին, որ Բուրջանաձեն միայն կփոխանցի իրենց պահանջները նախագահ Սաակաշվիլուն:

Բուրջանաձեն ինքը հայտարարեց, թե չի հասկանում ընդդիմության ցանկությունը՝ որեւէ գնահատական լսել հենց Սաակաշվիլուց, ավելին, ըստ խորհրդարանի նախագահի կարծիքի, վրաց բնակչության համար կարեւոր չէ, թե երբ, օրինակ, կանցնեն ընտրությունները: Հեղափոխության սեփական փորձն ունեցող Բուրջանաձեն ընդգծեց, որ ամենամեծաթիվ ակցիան անգամ պահանջներ կատարելու հիմք չէ: Ամենայն հավանականությամբ, Բուրջանաձեն այդ հանդիպմամբ կարողացավ վերացնել ընդդիմության վերջնագրով դրված ժամկետը, իսկ որոշում կայացնելու ժամանակը մնաց Սաակաշվիլու տնօրինությանը:

Համենայնդեպս, բազմության մի մասը մնաց հրապարակում, «նարնջագույն» հեղափոխությունը կրկնելու հույսով:

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

◆Ժամը 10.00-ին Շախմատի տանը տեղի կունենա գիտաժողով «Հայաստանը նախագահական ընտրությունների շեմին» թեմայով:

◆Ժամը 10.30-ին Ծիծեռնակաբերդի այգում 400 ծառ կտնկվի «Սինոփսիսի» աշխատողների ու ուսանողների ուժերով:

◆Իսկ ժամը 12.00-ին «Ազդակ» ակումբում տեղի կունենա Ալբերտ Բազեյանի հետ հանդիպում:

Երկուշաբթի

◆Ժամը 11.00 «Կոնգրես» հյուրանոցի «Միտ եւ Կլիմս» հանդիպումների սրահում ԵԱՀԿ գրասենյակը կազմակերպում է մամլո ասուլիս նվիրված Հայաստանում սեփականության իրավունքի պաշտպանությանը:

◆Ժամը 12.20-ին ԱԳՆ-ում տեղի կունենա Վարդան Օսկանյանի եւ Թերի Դեփսի մամուլի ասուլիսը:

Մահակ, թե՞ հակակոռուպցիոն մարմին

1-ին էջից

Ընդհանուր առմամբ նախագիծը ներկայացնող արդարադատության նախարար **Գեւորգ Դանիելյանը**, ներկայացնելով փաթեթը (եւ երկու օրենքում փոփոխություններ պետք է կատարվեն այս օրենքի ընդունումով), բացահայտեց դրա հակակոռուպցիոն բնույթը եւ հատկապես ընտրական հանցագործությունների դեմն առնելու պարագան՝ հղում անելով, որ մյուս քննչական մարմիններից համեմատաբար ավելի անկախ է այս կառույցը լինելու: Նա փորձեց ցրել նաեւ «ժառանգությունից» **Ռաֆֆի Հովհաննիսյանի** եւ **Զարուհի Փոստանջյանի** այն մտահոգությունները, թե այս օրինագիծը շահերի բախում է պարունակում, քանի որ դրանով խախտվում է հակակշիռների մեխանիզմը՝ քննիչների խմբին հետաքննելու ուղարկելով, ասենք, իշխանության այսպիսի մարմիններ (դատախազություն, նախագահի գրասենյակ եւ այլն), որոնք իրենց նշանակել են: Նա նկատեց, որ առաջարկվել է մի տարբերակ, որը շահերի բախումը նվազագույն է դարձնում, իսկ Ազգային ժողովը սահմանադրությամբ այդպիսի լիազորություն չունի, որպեսզի նախագծով ստեղծվող ծառայության ղեկավարին նշանակի: Ընդհանրապես օրինագծի ընդդիմախոսները գտնում էին, որ հիմնավորված չէ գլխավոր դատախազի կողմից այս մարմնի ղեկավարի ներկայացումը՝ դա պետք է ԱԺ-ն անի, սահմանադրական բարեփոխումների ոգուն հակառակ՝ երկրի նախագահի կողմից այս մարմնի ղեկավարի նշանակումն ավելացնում է նախագահի լիազորությունները, անհասկանալի էին համարում, թե իշխանության ո՞ր օրենսդիր, գործադիր, թե՞ դատական ճյուղին է պատկանում նոր ստեղծվելիք կառույցը: Նախագծի ձեւակերպումների մեջ առկա են միայն հանցագործության սուբյեկտները, բայց օբյեկտներն անհայտ են, չի մասնավորեցված, թե ինչ հանցագործությունների մասին է խոսքը, շատ էլ հստակ չէ՝ պատշաճական պարտականությունների ժամանակ կատարած հանցագործությունների մասի՞ն է միայն խոսքը, թե կարող է վերաբերել, ասենք, երբ պատշաճության ավտոքարի է ենթարկել որեւէ մեկին: Օրինագծի հեղինակ արդարադատության նախարարը գտնում էր, թե կարող են լինել իշխանության այնպիսի մարմիններ, որոնք որեւէ ճյուղի մեջ չեն տեղավորվում, բացի այդ՝ այնպես է արվել, որ մարմինը չափազանց կենտրոնացված չդիտվի ու անկախ լինի: Ի դեմ, ԱԺ պեսիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ **Դավիթ Հարությունյանն** էլ խոստովանեց օրենքում բաց մնացած հարցերի մասին՝ մեր վերը նշած հարցերից մի քանիսի հետ նա նաեւ համաձայն չէր, որ գլխավոր դատախազն է ներկայացնում ծառայության ղեկավարին: Նրա կարծիքով, այս ծառայությունը գործադիր իշխանության մարմին է, որպեսզի հետագայում նրա գործունեությունը հսկող դատախազությունն այդ մարմնի ղեկավարին չներկայացնի նշանակման, հակակշիռներ ապահովելու համար, վարչապետի առաջարկով պետք է նախագահը նշանակի:

Դ. Հարությունյանը նաեւ տեղեկացրեց, որ այս փաթեթը պեսիրավական հանձնաժողովում բուռն քննարկվել է, շատ առաջարկներ են եղել, որոնց մի մասը նախագիծը ներկայացնողներն ընդունել են:

Այս օրենսդրական փաթեթի ընդունումից ամենից շատ անհանգստացած Զարուհի Փոստանջյանի (անհանգստությունն իր իսկ խոսքերով՝ ավելի վաղ «գործ սարքած» եւ դատախազության բարեփոխման հետեւանքով համակարգից դուրս մնացած քննիչներին տեղավորելու փորձ է) ելույթն արդեն կինչի երկուշաբթի:

Ընդհանրապես՝ Հայաստանի նախագահի նախաձեռնությամբ երեկ հրավիրված ԱԺ արտահերթ նիստը մի քանի այլ հարցերի հետ պետք է քննարկեր ընտրական օրենսգրքի նոր փոփոխությունները, ինչպես նաեւ վերահսկիչ պալատի նախագահ նշանակեր: Դրանք եւս մնացին երկուշաբթի:

Անգլիան ռազմատիկ երկիր է...

Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Վահե Գաբրիելյանի հարցազրույցը «Ազգ» օրաթերթին

- Պարոն Գաբրիելյան, կա կարծիք, որ հայ-բրիտանական հարաբերությունների զարգացմանը խանգարում է Լոնդոնի ադրբեջանամետ դիրքորոշումը: Ընդհանրապես համարվում է, որ Մեծ Բրիտանիան այս տարածաշրջանում միշտ էլ վարել է թուրք-ադրբեջանամետ քաղաքականություն: Ինչքանո՞վ է նմանատիպ կարծիքը մոտ իրականությանը:

- Կարծում եմ, ընդհանրապես երկու երկրների հարաբերությունների կարգավիճակը բացառապես դրանցից մեկի՝ երրորդ երկրի հետ հարաբերություններով պայմանավորելը ճիշտ չէ: Ճիշտ է, Միացյալ Թագավորությունն Ադրբեջանում ունի հսկայ արտահայտված շահեր եւ կարող է որոշակի պահերի դրանք հաշվի առնել մեզ կամ այլ երկրների հետ իր հարաբերություններում, սակայն դա չի նշանակում, որ մենք այդ պատճառով չենք կարող այդ երկրի հետ լավ հարաբերություններ ունենալ: Չէ՞ որ կան այլ երկրներ, որոնք հարեւան երկրներում շահեր ունեն, բայց մեզ հետ նույնպես լավ հարաբերությունների մեջ են: Մեր խնդիրն այն է, որ կարողանանք գտնել համագործակցության փոխադարձաբար շահավետ ոլորտներ եւ դրանք զարգացնենք: Որեւէ կասկած չկա, որ եթե այդպիսի ոլորտները շատ լինեն, արտաքին գործոնների դերն ավելի նվազ է լինելու:

- Ցանկալի է, որ մեր տնտեսության մեջ լինի ներդրումների հնարավոր ամենամեծ բազմազանությունը, եւ ես շատ կցանկանայի, որ եվրոպական եւ արեւմտյան, տվյալ դեպքում՝ բրիտանական ներդրումները Հայաստանում ավելի շատ լինեին: Սակայն ես ներդրումների կարեւորությունը միայն դրանց քանակով չէի չափի: Այսպես կոչված մակնիշի կամ «բրենդի» հասկացությունը շատ կարեւոր է: Իմ կարծիքով, «Բրիթիշ էյրվեյզի» (կամ «bmi»-ի) եւ HSBC-ի ներկայությունը մեր երկրի իմիջի համար ավելի մեծ նշանակություն ունի, քան, ասենք՝ որեւէ անհայտ ներդնողի թեկուզ շատ ավելի մեծ ծավալի ներդրումը:

Իհարկե, սա չի նշանակում, որ եղածը բավարար է: Ես համոզված եմ, որ բրիտանական հայտնի եւ մեծ ընկերությունների մուտքը մեր շուկա անհրաժեշտություն է: Պետք է նաեւ, որ մեր շուկան նրանց համար գրավիչ լինի: Ջեր նշած շահերը պետք է գտնել կամ ստեղծել, թեեւ հասկանում եմ, որ դժվար է: Դրանց ստեղծումը երկրի՝ համապատասխան օրենսդրությամբ, բայց անպայման կիրառվող պրակտիկայի շնորհիվ է կատարվում, ողջ երկրի մակարդակով եւ պետք է հանգեցնի այն աստիճանի, որ երկու երկրների տարբեր ոլորտների համապատասխան գործարար շրջանակներում միմյանց նկատմամբ հետաքրքրություն առաջանա: Անգլիայի՝ դարերի ընթացքում ձեւավորված, յուրահատուկ տնտեսական համակարգի պայմաններում դեսպանությունների դերը տարբեր է շատ այլ երկրներից: Բիզնեսները հակված են ոտիղ աշխատել այլ երկրների գործընկերների հետ եւ սովորաբար խուսափում են պետական գերատեսչությունների ներգրավումից, եթե խոսքը շատ մեծ ծրագրերի մասին չէ: Իհարկե, ամեն մի հարցման կամ խնդրանքի մենք արձագանքում ենք անհապաղ: Մեր հիմնական խնդիրն այսօր մեր երկիրը եւ ներդրման համար նրանում առկա բարենպաստ պայմանների պատշաճ ներկայացումն է, ինչը մենք անում ենք ամեն հնարավոր առիթով: Այս առումով, իհարկե, ցանկալի է, որ ՄԹ պես տնտեսական ներուժ ունեցող բոլոր երկրներում մեր դեսպանություններում ունենանք առեւտրի կցորդներ կամ ներկայացուցիչներ, կամ համապատասխան որակավորմամբ մասնագետներ, եւ առհասարակ՝ ավելի մեծ թվով դիվանագետներ: Այս ամենն ասելիս հաշվի առնում եմ, իհարկե, որ այսօր այս ոլորտում խնդիրները նույնպես առաջվանը չեն, քանի որ բավարար չափով բաց տեղեկատվությունը հասանելի է արդեն շատ աղբյուրներից:

Բնականաբար, անհրաժեշտ է նաեւ, որ Հայաստանում լինի ՄԹ հետ առեւտրական հարաբերությունները զարգացնելու իրական հետաքրքրություն. մի կողմից մերոնց համար հետաքրքիր է գործել աշխարհագրորեն ավելի մոտ, մեզ ծանոթ կամ ավելի մոտ մշակույթ ունեցող, համեմատաբար էժան շուկաներում, մյուս կողմից՝ բրիտանացիները ցանկանում են գործ ունենալ համեմատաբար մեծ՝ ավելի գնողունակ եւ իրենց ծանոթ ու հասկանալի շուկաների հետ: Տարբերություններ կան իհարկե, սակայն ընդհանուր եզրեր եւ նմանություններ գտնելը թեեւ դժվար, բայց հնարավոր գործ է, նաեւ այն պատճառով, որ ես հայաստանցիներիս մեջ տեսնում եմ աճող հետաքրքրություն Բրիտանիայի նկատմամբ: Ավելացել են նաեւ Հայաստանում բնակարան, առանձնատուն կամ հողամաս գնող բրիտանահայերը, նաեւ գործարար ծրագրեր ունեցող անհատները եւ կազմակերպությունները: Վստահ եմ, որ միտումը շարունակվելու է: Կարծում եմ նաեւ, որ Եվրամիության հետ «Նոր հարեւանության» ծրագիրը նույնպես կնպաստի, որ մեր տնտեսությունն ավելի մոտենա նրանց ստանդարտներին եւ ավելանա փոխգործունեությունը ԵՄ անդամ պետությունների հետ նաեւ երկկողմ մակարդակով:

- Եվրամիության անդամ երկրներից 12-ը խորհրդարանների մակարդակով ճանաչել եւ դատապարտել են Հայոց ցեղասպանությունը: Ինչ վիճակ է այս հարցում Մեծ Բրիտանիայում եւ արդյոք հայկական համայնքը այս ուղղությամբ աշխատանքներ տանո՞ւմ է:

- Բրիտանական համայնքն իհարկե այդ ուղղությամբ ուժերը ներածին չափ աշխատանք տանում է եւ դեսպանության հետ էլ ակտիվ համագործակցում է: Սակայն համայնքը բավականին փոքրաթիվ է եւ չունի մի շարք այլ երկրներում հայտնի համայնքների ուժը: Թեեւ կան այցելում են ավելի քան 1,5 մլն զբոսաշրջիկներ: Թուրքիայում ՄԹ-ն համարում են իրենց ամենաբարեկամ երկիրը: Ավելացնեմ նաեւ, որ հազարավոր բրիտանացիներ Թուրքիայում գնել են ամառանոցներ, կան այնտեղ մշտական բնակության տեղափոխվողներ: Այսքանը հաշվի չառնել բրիտանացիները չեն կարող, համենայն դեպս քանի դեռ ավելի զորավոր հակափաստարկներ մենք չենք ներկայացրել:

- Համարու՞մ եք արդյոք, որ հայ-բրիտանական հարաբերություններում կա չօգտագործված ռեսուրս, եւ ի՞նչ է հարկավոր անել երկկողմ կապերը քաղաքական եւ տնտեսական նոր որակի հասցնելու համար:

- Նախ, կցանկանայի փաստել, որ Միացյալ Թագավորությունը Հայաստանում ակնհայտորեն տեսնում է քաղաքական շահեր եւ ակտիվորեն աշխատում է մեր հասարակության տարբեր շերտերի եւ կառույցների հետ: Ի տարբերություն շատ այլ երկրների, բրիտանացիները սովորաբար գործում են առանց մեծ շուքի, հաճախ խուսափում են մեծ, համաշխարհակ ծրագրերից: Շատ հաճախ էլ այնտեղ, որտեղ բրիտանական կառավարությունը ներգրավված չէ անմիջականորեն, աշխատում են բրիտանական հասարակական կազմակերպություններ, որոնք թեեւ համագործակցում են իրենց կառավարության հետ, միաժամանակ ունեն գործելու ավելի մեծ ազատություն: Օրինակ, արդեն չորրորդ տարին է, ինչ ստեղծված է հասարակական (ոչ կառավարական) կազմակերպությունների կոնսորցիում, որի խնդիրը ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման համար բարենպաստ պայմաններ ստեղծելը, հասարակություններին հետկարգավորման խաղաղությանը նախապատրաստելն է: Այս նպատակով նրանք գործունեություն են ծավալել թե՛ Հայաստանում, թե՛ Լեռնային Ղարաբաղում, թե՛ Ադրբեջանում:

Այնուամենայնիվ, Միացյալ Թագավորությունում աշխատանքիս տարիները եւ ունեցածս շփումները հուշում են, որ բրիտանացիների հետ հարաբերությունները նոր մակարդակի բարձրացնելու համար ամենավստահելի եւ կարճ ճանապարհը առեւտրատնտեսական կապերի խորացումն է, Հայաստանում բրիտանական ներդրումներ ապահովելը, ինչն այս պահին դժվար կարող է թվալ: Պետք է, սակայն, մտածել, որ այլ ռեսուրսներ չկան: Միացյալ Թագավորությունը հարուստ երկիր է, թեեւ նրա շուկան մտնելու մրցակցությունը չափազանց մեծ է, հատկապես փոքր հնարավորություններ ունեցող երկրի համար, կարծում եմ՝ շուկային պետք է նայել ավելի լայն առումով: Կրթական, մշակութային, առողջապահական եւ գիտահետազոտական ոլորտներում ես տեսնում եմ համագործակցության բավականին իրական հնարավորություն: Այստեղ եւս, սակայն, մեր ներկայացրած «ապրանքը» պետք է համապատասխան լինի ոչ միայն որակի միջազգային չափանիշներին, ինչը ոչ միշտ, սակայն որոշ դեպքերում մենք կարող ենք ապահովել, այլեւ միջազգային «փաթեթավորման» չափանիշներին: Պետք է կարողանանք ներկայացնել մեր ուզածը եւ ներկայացնելու համար էլ ընտրել լավագույնը: Մեզ գովելը բավարար չէ, հարկավոր է նայել եւ սովորել, թե ինչի պահանջարկ կա, ժամանակակից գիտության, արվեստի եւ կրթության չափանիշները որոնք են, եւ ինչպես կարող ենք դրանք ապահովել: Հասկանալի է, որ որոշ երկրների նման չենք կարող հույսներս բացառապես կամ հիմնականում դնել հանածոների արտահանման վրա, պետք է շեշտը դնենք գիտական, կրթական, մշակութային բարձրարժեք արդյունքի, բանկային, կառավարչական հմտությունների, բարձր տեխնոլոգիաների, զբոսաշրջության վրա: Այս ամենը ժամանակ է պահանջում, մեր բոլորի խնդիրը նաեւ այդ ժամանակը որքան հնարավոր է կրճատելն է: Ես վստահ եմ, որ այս ամենով մենք կկարողանանք մեր երկկողմ հարաբերությունները ոչ միայն Միացյալ Թագավորության, այլեւ բոլոր այլ երկրների հետ բարձրացնել որակապես այլ մակարդակի:

Հարցազրույցը վարեց
ԱՐՄԵՆ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

3 ՆՈՅԵՄԲԵՐ 2007 ԷՋ Ա

ՀԱՅԵԼԿԱՅ ԱՇԽԱՐՀՈՒՅՑ

Պարբերականությունը՝ երկշաբաթյա

Թիվ 21(40)

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉՅԱՆ

ԻՆՉԵՐԵՂ ԵՆՔ... ԼՍՈՒՄ

Վասն բազմաչարչար հայերենի

Ժյուլ Վեռնի վեպերից մեկում այսպիսի տեսարան կա. Ժակ Պագանելը, հեռավոր Ավստրալիայի տափաստաններում հանդիպում է մի պատանու, որը կարծում է, թե աշխարհում գոյություն ունի ընդամենը մեկ լեզու՝ անգլերենը, որ երկրագունդն ամբողջությամբ պատկանում է Մեծ Բրիտանիային, եւ որ անգամ լուսինն է անգլիական տարածք: Պատանուն հատկապես զարմացնում է այն փաստը, որ աշխարհում խոսում են նաեւ ուրիշ լեզուներով:

Որքան էլ չափազանցված թվա այդ տեսարանը, այնուամենայնիվ հարազատորեն ներկայացնում է XIX դարի երկրորդ կեսի բրիտանական գաղութատիրության ոգին, անշուշտ, ֆրանսիացի գրողի աչքերով: Եվ ընդգծենք՝ մշակութային, լեզվական գաղութատիրությունը:

Բայց այն, ինչ հասկանալի էր XIX դարի՝ հաղորդակցության միջոցներից զերծ հեռավոր Ավստրալիայի համար, որտեղ խաղաղիրք մշակույթի ոչ մի ավանդ չկար եւ իրոք անգլիացիք էին տիրապետողը, կասարելապես անհեթեթ է հնչում այսօրվա Հայաստանի պայմաններում, ուր արդեն տարիներ շարունակ ամերիկյան անգլերենի աղեցալի մի հաղթարշավ է գնում գրեթե բոլոր ասպարեզներում: Կուզեինք առանձնապես խոսել երկուսի՝ ամենից շատ տեսանելիի ու ամենալսելիի մասին, այն՝ ինչից պրծում չունես, սիրված պիտի լես ու տեսնես ամեն օր. փողոցը եւ զանգվածային լրատվության միջոցները՝ հատկապես հեռուստատեսությունը:

Խորհրդային շրջանում մշակվել էր օտար տեղանունների, անձնանունների, գիտական եզրաբանությունների եւ այլ՝ առանց թարգմանության գործածվող օտար բառերի տառադարձման մի սկզբունք, որն առավել մոտիկ էր արեւելահայերենի ուղղախոսությանը, կառուցված էր գերազանցապես արեւելյան հասվածի մասուլի, գրական-լեզվաբանական ավանդների վրա եւ կիրառվում էր ամենուր: Ասենք, որեւէ խմբագրի մտքով չէր անցնի եվրոպական խաղաթի անվան գրության երկու-երեք տառադարձում օգտագործել: Հ2-ով հեռարձակված միեւնույն ռեպորտաժի մեջ հաղորդավարն ասաց «Նիս», Երեւանի խաղաթեսը՝ «Նիցցա»: Ճիշտը խաղաթեսն էր: Արեւելահայերենում գործածվում է վերջին ձեւը, խաղաթի իտալական անվանումը: Չէ՞ որ այն ժամանակին Իտալիայի մի մասն էր, Գարիբալդիի ծննդավայրը...

Անկախությանը հաջորդած ավերների շարքում պետք է դասել նաեւ լեզվական-ուղղագրական անարխիան, որ շարունակվում է մինչեւ այսօր, ամրապնդվում եւ նույնիսկ խորանում: Այն վաղուց թափանցել է պետական մարմիններ, մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, հասարակչություններ, կրթական համակարգ, թատրոն եւ վերջապես հասատուն տեղ գտավել ամենուր, ամեն քայլափոխին աչքդ ծակող ցուցանակների վրա: Ի դեպ, ոչ բոլորի: Դրանց մեջ կան ճաշակով, բարեհնչուն եւ տեղին ընտրված անվանումներ: Սակայն մեծ մասը...

Ցուցանակի հիմնական նպատակն է գրավել հաճախորդին, մաստչելի լինել նրա համար եւ, վերջապես, նպաստել առեւտրին: Հայկական ցուցանակներից շատերը տեսնելով, կարելի է կարծել, թե այդ հասատությունների տերերը ճիշտ հակառակն են հետապնդում. հնարավորին չափ արագ եւ վերջնական հեռու վանել ամենահավանական հաճախորդին՝ հայերին, նրանց առջեւ դնելով կտրուկ պայմաններ. պիտի անգլերեն հասկանաս ըստ որում՝ ամերիկյանը, (ավելի ճիշտ՝ գլենդելյանը), իսկ եթե չես հասկանում, ռադդ քաշի՛ր եւ գնա շուտ սովորիր:

Համոզված եմ՝ նրանցից ոչ մեկը չի ընդունի, որ այդպես է մտածում, ընդհակառակը, երազում են բազմահազար գնորդների մասին, բայց, ըստ էության, իրենց առածով, հեռու են վանում նրանց: Ասես, այդ հաստատությունները բացել են հատկապես յանկիների կամ անգլերեն իմացող այցելուների համար, նրանք էլ խակները փողով լցած, գլխապատառ գալիս են Երեւան, որ այստեղ վերջապես իրենց ուզած առեւտուրն անեն:

Եթե որեւէ մեկը փորձի այդ ցուցանակներով կարծիք կազմել մեր ժողովրդի մասին, պիտի նկատի նախեւառաջ երեւակայության բացակայությունը եւ ողբալի աղքատությունը: Անգրագիտությունը չորրորդ տեղում է, իսկ երրորդում առաջին երկուսից անմիջականորեն բխող տրամաբանության կատարյալ բացակայությունն է: Ազգային արժանապատվության մասին էլ չենք խոսում:

Օրինակ՝ Բժշկական համալսարանի դիմացի մայթին, նկուղային հարկում, այսպես ասած, սննդի մի «օբյեկտ» կա, որ կնքել են «**Թեսթի** թաուն» անունով: Այո, անգլերենի կողքին այդպես է գրված մաշտոցյան տառերով: Դրա տերն, ամենայն հավանականությամբ, հայերեն գիտի: Բայց առանց կասկածելու կարող ենք ասել, որ կատարելապես զուրկ է հումորի զգացումից եւ, մանավանդ, հայերեն չի լսում: Այլապես, ոչ մի դեպքում այդ բառը, գոնե բառի առաջին երեք տառերը չէր թողնի իր հաստատության ճակատին: Քանզի պիտի մտածեր, որ այնտեղ, ուր մարդիկ մտնում են ուտելու, համի եւ բույրի եթե ոչ գարշահոտության) տիաճ զուգորդումներ չպիտի լինեն: Բիզնես բառն անպայման ծանոթ է նրան, բայց բիզնեսի օրենքները հավանաբար՝ ոչ: Մնում է մի Գիքոր կանգնեցնի առջեւը, որ հաճախորդ կանչի. «**Թեսթի** համեցեք»:

Սակայն նա միակը չէ, որ այդ բառը հայերեն չի լսում: Մամուլի էջերում եւ եթերում գնալով ավելի հաճախակի է հանդիպում եւ մանավանդ հնչում **թեստ, թեստ**ավորում բառերը: Եվ այնպիսի համառությամբ, որ քիչ է մնում քիթդ բռնես: (Թող ներող լինի հայերեն լսելու կարողությունը չկորցրած ընթերցողը՝ առաջին երեք տառերն ընդգծելուս համար): Անգամ ացտեկների արքային չխնայեցին, հիմա նրա անունը գրվում է այսպես. Մոնթեսումա: Մեղա, Տեր Աստված, բայց ի՞նչ կարող եմ անել, իմ ականջն այդպես է լսում:

Աբովյան փողոցի վրա հանդիսավորությամբ բացված «Տեռռանովայի» տերերն էլ հայերեն չեն լսում: Կրկնակի «Ռ»-ն կացությունը չի փրկել, ավելի է բարդացրել՝ եղբայրացնելով «Թեսթիթաուն»-ին:

«Սթար» բառն էլ ականջ ծակողներից է: Անգլերեն, իրոք, այդպես է արտասանվում star-ը: «Սթաաա՜ռռռ», - էքսպազի մեջ ըմբոշխնում են մեր հեռուստաշխոները: Բայց արդյո՞ք գիտեն, որ «սթար» հայերեն նշանակում է ձիու ծանկոց, ինչն ասպի հետ շատ հեռավոր կապեր ունի:

«Մենթալիտետի» մասին արդեն խոսվեց մի քանի անգամ, բայց դարձյալ պիտի ուշադրություն հրավիրենք լեզվական այդ անհեթեթության վրա՝ ոչ միայն որ ոտղակիորեն զուգորդվում է խոսակցական հայերեն մտած «մենթ» բառի հետ, այլեւ վկայում բառն ընդհանրապես գործածողների («թ»-ով կամ «տ»-ով, միեւնույն է) մտավոր ծուլությունը: Բառը փոխառնված է ռուսերենից, այդ է վկայում բառավերջի «տ»-ն, ռուսներն էլ, իրենց հերթին, վերցրել են ֆրանսերենից (mentalite): Ֆրանսիացիք էլ ընդունում են, որ փոխառել են անգլիացիներից (mentality): Բոլոր դեպքերում բառի հիմքը միտն է, մտայինը: Ուստի, եթե չծուլանային, ապա դյուրությամբ կգտնեին հայերեն հարյուր տոկոսանոց համարժեքը. մտայնություն: Ի դեպ, ֆրանսերենում բառը նշանակում է նաեւ գաղափարախոսություն, հոգեբանություն, հոգեվիճակ:

Բայց այս դեպքում էլ երաշխիք չկա, որ բառը չի աղավաղվի եւ չի դառնա «մթայնություն», քանզի արեւելահայերենի մի համատառած, մի անտրամաբանական, մի ավերիչ ՔԹՓացում է ընթանում: Թող ներողամիտ լինեն լեզվաբանները մեր նորամուծության համար, բայց դժվարանում ենք՝ մեր գրական լեզվի հանդեպ կիրառվող այս դավադրությունը (գիտակցված թե՝ ոչ, միեւնույն է) ուրիշ կերպ անվանել: Բառացիորեն պայթեցվում են մեր բոլոր պայթականները: Մանավանդ օտար բառերի անսկզբունք, անգրագետ տառադարձման մեջ: Որտեղ «տ»-ն տեսնում՝ դարձնում են «թ», «պ»-ն՝ «փ», «կ»-ն՝ «ք»: Առանց մտածելու, առանց հաշիվ տալու՝ տեղին է, թե ոչ, մոռանալով (ավելի շուտ չիմանալով) գրաբարի արտասանական համակարգին առավել մոտիկ մնացած արեւելահայերենի տառադարձման սկզբունքները:

Օրինակ՝ կարո՞ղ են բացատրել, թե Ալբեր Կամյուի ազգանունն անկախացումից հետո ինչու սկսեցին ամենուր գրել Քամյու: Նույնիսկ այնտեղ, ուր խորհրդային տարիներին գրում էին առաջին տարբերակով: Հավանաբար գտան, որ դա եւ բոլշեվիկյան ժառանգություն է, որից պետք է անմիջապես հրաժարվել: Բանիմաց մարդկանց խորհուրդները, հորդորները ու տարական գրագիտության պահանջները մնացին ձայն բարբառոյ յանապատի: Իսկապես աղբեցնող մի համառություն: Եթե սկզբունք են ընդունում բնագրի արտասանությունը, ապա չարաչար սխալվում են. Ֆրանսախոս բոլոր երկրներում եւ մանավանդ Ֆրանսիայում այդ ազգանունն արտասանվում է առավել քան ընդգծված «Կ»-ով:

Մնում է երրորդ բացատրությունը՝ ավստրալիացի տղայի պարագան. աշխարհում ընդամենը մեկ օտար լեզու կա՝ ամերիկյան անգլերենը, «ֆոլեջը»: Ջեռը կոտրվեց այդ բառը բերողի, կարծես չէր կարող դպրոց, ուսումնարան, վարժարան, վարժատուն եւ այլն գործածել: Չէ՛, պիտի անպայման «ֆոլեջ» գրվի, այդպես ավելի տպավորիչ է, ավելի լուրջ... Ահա չտեսի, խաղենու, «բիրդանաղայի» տպմաբանությունը:

Անհեթեթությունն առավել ցցուն է դառնում, երբ այդ բառը՝ վերոնշյալ արտասանությամբ, գրվում եւ հնչում է ֆրանսերենից թարգմանված տեքստերում: Հ1-ով ցուցադրված ֆրանսիական ֆիլմում (գլխավոր դերում Պիեռ Արդիտին), աշակերտուհին իր հորը հայտնում է, որ մտադիր է «դուրս գալ ֆոլեջից»: Կկամենայինք արդյոք կրկնօրինակման պատասխանատուները (թարգմանիչ, խմբագիր, ռեժիսոր, դերասանուհի, ընդունող մարմին) բացատրել, թե ինչու պիտի ֆրանսիացի աղջիկը, ֆրանսիական միջավայրում, իր ֆրանսիացի հոր հետ խոսելիս, հատկապես այդ բառի համար անգլերենի արտասանական օրենքները կիրառեր եւ «կոլեժ»-ի փոխարեն «ֆոլեջ» ասեր:

Որովհետեւ այդ բառն աջ ու ձախ, օրինքուն աչքի ու ականջ խոթվելով այնքան սովորական է դարձել, որ անգամ հայերենը մասնագիտական առումով գործածող պատասխանատու անձինք այլեւս չեն մտածում՝ տեղի՞ն է արդյոք, թե ոչ: Ինչպես «յողուրթը», ներողությո՞ւն, «յոգուրտը», որը ռուսերենի ճամփով, դավադրաբար, առանց որեւէ դիմադրության հանդիպելու նախ թափանցեց Հայաստանի աղազգային, իսկ որոշ դեպքերում հակազգային, առեւտրի ցանց, իսկ հաղթական մուտքից որոշ ժամանակ անց՝, «Աշտարակ-կաթ» գործարանի բարձր հովանավորությամբ մտավ լայն սպառման ապրանքների ցանկի մեջ: (Մենք արդեն այդ բառի ժողովրդական սուգաբանությունն ունենք. «յոբուրթ», որը Գուրգեն Խանջյանի թեթեւ ձեռքով մտել է նույնիսկ գրականություն, իհարկե, տեղին հնչելով մարգինալացված պերսոնաժի բերանում):

Ազգային նկարագիրը կորցրած մի հայ, ժամանակին «մաճուն-յողուրթը» տարավ Ֆրանսիա, որպեսզի այնտեղից եվրաթրքացած գա եւ հաստատվի Հայաստանում: Պատմա-մշակութային առումով ավելի մեծ զավեշտ դժվար է պատկերացնել, երբ նախկինում հոչվոր ցեղն, ուրիշի ձեռքով, աստիճանաբար դուրս է մղում հազարամյակների պատմություն ունեցող տոհմիկ, առարկայի էությունը ճշգրիտ ներկայացնող բառը, որն աշխարհում գործածում են միայն հայերն ու վրացիները: (*)

Մենք ավելի քան հարյուր վաթսուն տարի հայտնվեցինք ռուսերենի եւ ռուսականի ուժեղ ազդեցության ոլորտում, սակայն մեր լեզվում եւ մեր մշակութային գիտակցության մեջ այսպիսի աղեցալի ավերներ չեղան, ինչպես անցած այս տարիներին՝ «ամերիկերենի» եւ ամերիկյան ենթամշակույթի ագրեսիվ, նպատակամղված գործունեության հետեւանքով:

Շարունակ ասվում է, թե Մոսկվան (ցարական, թե կոմունիստական) ռուսականացման քաղաքականություն էր վարում: Չենք ժխտում: Բայց եթե անում էր, ապա բարձր մշակույթով, որն, ի դեպ, գաղութացված ժողովուրդներին խթանում էր ստեղծել սեփական, ազգային մշակույթը: Վերջին հարյուր հիսուն տարվա մեր գիտության, արվեստի եւ գրականության պատմությունը դրա անժխտելի ապացույցն է:

Տես էջ 5

(*) Ի դեպ, «յողուրթ» բառն էլ ունի հայկական ծագում՝ «իւղորդ», «իւղ», «յուղ»բառից - Ծ.խ.

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Հունական գրականություն

Զորբան՝ Կրետից

Հիսուն տարի առաջ, 1957 հոկտեմբերի 26-ին Ֆրայբուրգում (ԳՖՀ) վախճանվեց համաշխարհային գրականության մեջ մի ազգի ներկայացուցչի լավագույն հավաքական կերտար ստեղծողներից, խաղաղության միջազգային մրցանակի դափնեկիր (1956), Կրետե կղզու ծնունդ հույն գրող Նիկոս Կազանձակիսը, որի հախուռն բնավորության եւ ոգեշող մտքի մասին անգլիական «Թայմս լիտերի Սափլիմենտի» էջերում (2007 հունիս 22) տպագրված Ռոդերիկ Բիթոնի հոդվածը թարգմանաբար ներկայացնում ենք ստորեւ չնչին հապավումներով:

«Հույն Զորբան» եւ «Քրիստոսի վերջին գայթակղությունը» ստեղծագործությունները մարդկանց հիշողության մեջ տպավորված են առավելապես որպես ֆիլմեր՝ համապատասխանաբար Մայլզ Կոկոյանիսի եւ Մարտին Սքորսեզեի ռեժիսորությամբ, քան որպես վեպեր, որոնց հիման վրա նկարահանված են այդ ֆիլմերը: Նույնը կարելի է ասել նաեւ Բոհուսլավ Մարտինույի «Հունական չարչարանքներ» օպերայի մասին, որ Կովենս Գարդենի լեփ-լեցուն դահլիճում վերջերս ֆանիցս ներկայացվեց: Դրա լիբրետոյի հիմքում ընկած է «Քրիստոսը կրկին է խաչվում» վեպը: Այդ երեք, այլոց շարքում, հատորների հեղինակը Նիկոս Կազանձակիսն է, որի ստեղծած «Զորբան» ամբողջ աշխարհում զուգորդվում է կենսասեր ու եռանդուն հույն կերպարի հետ: Աշխարհի տարբեր անկյուններում ծվարած հունական երաժշտության եւ պարարվեստի երկրպագուները չեն կարող անտարբեր մնալ Զորբայի պարին՝ սիրթակիին, որը 1965-ին հենց այդ ֆիլմի համար ստեղծվեց՝ եւ որի երաժշտությունը գրեց տաղանդավոր Միխիս Թեոդորակիսը, իսկ գլխավոր դերում հանդես եկավ անկրկնելի Անթոնի Քուինը:

Կրետեում, որտեղ տեղի են ունենում «Հույն Զորբան» ֆիլմի դեպքերը, պանդոկների մեծամասնությունը «Զորբա» անունն է կրում: Այդ անունով են «մկրտված» նաեւ աշխարհի այլ վայրերում գործող հայրենավոր բարեր, գարեջրատներ, ռեստորաններ եւ գիշերային ակումբներ:

Մյուս կողմից Սքորսեզեի «Քրիստոսի վերջին գայթակղությունը» վերնագրով ֆիլմի բարձրացրած աղմուկը, հատկապես Մ. Նահանգներում, կարելի է համարել կրոնական արմատականների եւ «արեւմտյան» աշխարհիկ լիբերալիստների միջեւ ծագած առաջին հակամարտությունը կամ տարաձայնությունը, որը դեռեւս շարունակվելով 21-րդ դարում՝ գուցե նորանոր մեկնաբանությունների առիթ հանդիսանա: Կրոնական խմբավորումների հակազդեցությունը այն ասիճանի ուժեղացավ, որ ֆիլմի ցուցադրությունը որոշ երկրներում արգելվեց քսան տարի առաջ: Կրոնական այդ խմբավորումներին ամենաշատը զայրացրել էր Հիսուս Քրիստոսի եւ Մարիամ Մագդաղենացու մտերմիկ հարաբերությունների տեսարանները: Բայց այդ երկրային ցանկությունների ցուցադրումը Սքորսեզեի մտահղացումը չէր, այլ Կազանձակիսինը, որը չորս տասնամյակներ առաջ համարձակություն էր ունեցել երեւակայելու նման երեւույթներ:

Ճիշտ է՝ հիմա նրա անունը հաճախ չի հիշատակվում, բայց պետք է նշել՝ որպես գրող, որն արդեն 50 տարի մեզ հետ չէ, արժանացել է պատշաճ ճանաչման: Մեծ Բրիտանիայում նրան համբավ բերած բոլոր 7 գործերի թարգմանությունները դեռեւս տպագրվում են եւ հրատարակվում շատ անգամ, ավաղ, առանց բնագրի հիշատակության եւ երբեմն անթույլատրելի սխալներով:

«Զորբայից» եւ «Վերջին գայթակղությունից» հետո երրորդ ճանաչված գիրքը «Քրիստոսը կրկին է խաչվում» ստեղծագործությունն է, որն Ամերիկայում հրատարակվեց «Հունական չարչարանքներ» անվանումով եւ դարձավ Մարտինուի օպերայի խորագիրը: Այդ վեպում հույն գյուղացիների մի խումբ Անատոլիայում պատրաստվում է բեմականացնել Քրիստոսի չարչարանքները, երբ հարեւան գյուղերից փախստականների ժամանումը իրադարձության են վերածում այդ բոլորը: Օսմանյան կոտորածներից մազապուրծ ամբոխին ի տես դերասանները հարկադրված իրենց «բիբլիական» դերերը փոխարինում են ողբերգական դեպքերին մասնակից դառնալու իրական դերակատարումներով:

«Քրիստոսը կրկին է խաչվում» վեպը Կազանձակիսի լավագույն եւ գուցե նրբագույն հյուսված ստեղծագործությունն է, որտեղ հեղինակն ամենաարդյունավետ ձեւով է կարողացել համատեղել երկու խոշոր թեմաներ: Մեկը՝ հունական ավանդական ողբերգի եւ մարդկանց՝ կերպարների վառ անհատականության (նույնիսկ գրոտեսկայինի հասնող) ներկայացումը («Զորբա») եւ մյուսը՝ հեղինակին, որպես քրիստոնյայի հուզող հարցերի ներքին պայքարը, որը այլ կրոնների ներկայացուցիչների մոտ էլ կարելի է նկատել («Վերջին գայթակղություն»):

Մյուս վեպերի ճակատագրերը միանշանակ չեն եղել: Անձամբ ես արժեւորում եմ «Կապիտան Միխալիսը: Մահ կամ ազատություն» (1953 թ.) ստեղծագործությունը: Այդ հատորի լավագույն սահմանումը գուցե «Ֆաբեր» հրատարակչատան թողարկած օրինակների շապիկներին գրված «Մեր ժամանակների Իլիականը» բառերն են: Հատորում նկարագրված դեպքերը իրական են, տեղի են ունենում 1889-ին իր հայրենիք Կրետեում, երբ ինքն ընդամենը 6 տարեկան էր: Նկարագրությունները հիմնված են իր եւ իրեն շրջապատող մարդկանց հիշողությունների վրա: Նյութը Կրետեի քրիստոնյաների օսմանյան լծից ազատագրվելու եւ Հունաստանին միանալու հայրենասիրական ազատագրական պայքարից վերցրած որոշակի մի դրվագ է: Պատմական իրադարձությունն առատորեն է վերածված վեպում, իսկ թուրք-հունական ձգձգված պատերազմը՝ Տրոյայի պատերազմի արդիական տարբերակի:

Մյուս վեպերից «Եղբայրասպանները» առանձնանում է մեկ ուրիշ տաբու վերացնելու իր առաքելությամբ: 1949-ին գրված այդ

ստեղծագործությունը, որը հրատարակվեց միայն գրողի մահվանից հետո, պատկերում է այդ օրերին ավարտված Հունաստանի քաղաքացիական պատերազմը: Մինչեւ 1980-ականները ուրիշ ոչ մի հույն գրող չի անդրադարձել այդ թեմային այնքան իրապատշաճորեն, որքան Կազանձակիսը, հավանաբար որովհետեւ միջանկյալ 30 տարիների ընթացքում մի կողմից ժողովրդին հասցված վնասվածքն (տրավման) ու մյուս կողմից տարբեր կառավարական ասյանների գրաքննչական արգելքները չափազանց մեծ ազդեցություն են թողել բնակչության վրա:

Կազանձակիսի վերջին երկու հատորները առավելապես վիպականացված կենսագրություններ են: Մեկը վերնագրված է «Ասծո ընտրյալ մուրացկանը» եւ պատկերում է սուրբ Ֆրենսիս Ասիզեցուն, իսկ մյուսը՝ «Զեկույց Գրեկոյինը»՝ իր սեփական կյանքը: Երկուսն էլ նախորդ վեպերի ուժգնությունն ու եռանդը չունեն: Ափսոս, որ այդպես է, հատկապես երկրորդի՝ ինքնակենսագրականի դեպքում, որովհետեւ Կազանձակիսի ապրած կյանքն իրոք արժեր ներկայացնել ամբողջությամբ:

Կենսագիրներ եղել են, անշուշտ: Նրանց թվում եւ իր առաջին կինը (որից բաժանվել է), եւ երկրորդը (որն իրենից մոտ հիսուն տարի ավելի ապրեց) եւ ուրիշներ՝ մոտիկ բարեկամներ: Սակայն բոլորի գրածներն էլ ամբողջական չեն, դժբախտաբար: Գուցե միայն իր ընկեր եւ հայրենակից վիպասան Պանտելիս Պրեվելակիսն է, որ մեզ տվել է ինչ թե շատ մանրամասն եւ փաստացի տվյալներ հիմնված առավելապես նրա 400 նամակների վրա: Բայց նույնիսկ Պանտելիսը չի կարողացել հասկանալ, թե ինչու Կազանձակիսը վիպասան է դարձել: Ինքը նրան համարում է բանաստեղծ:

Երբ Կազանձակիսը 1883-ի փետրվարի 18-ին[1] ծնվեց Իրակլիոնում, Կրետեն Օսմանյան կայսրության հետամնաց եւ աղքատ եռանախորշերից էր: Մեկ դարից էլ ավելի ժամանակահատվածում երկրի քրիստոնյա մեծամասնությունը մի քանի անգամ ապստամբել էր՝ բարձրանալով սարերը եւ պատերազմ մղելով Օսմանյան իշխանությունների եւ կղզու մահմեդական տարրերի դեմ: Այսօր կղզում ոչ հետքեր են մնացել մահմեդականներից, որոնք մի ժամանակ (19-րդ դարում) բնակչության 40 տոկոսն են կազմել: Քրիստոնյա կրետեցիների պայքարը հիմնականում նպատակաուղղված էր Հունաստանին միանալու իրենց ջանքերի հետ: Դա իրականություն դարձավ 1913-ին:

Բայց կար նաեւ կրոնական միջհամայնքային պայքարը, որն իր մեջ ներառում էր «տիրակալի» եւ «հոգատակի» գործոնը, մի գործոն, որի ամենօրյա առկայության եւ չընդհատվող հակամարտության շրջանակներում էր հատակ առել ինքը՝ Կազանձակիսը: Այդ պայքարը դարձյալ միեւնույն ուժգնությամբ դրսեւորվելու էր 1990-ականներին նախկին Հարավսլավիայում:

Կազանձակիսը տարիներ անց հիշելու էր, թե ինչպես հայրը իրեն մանուկ տարիքում տանում էր համբուրելու այն քրիստոնյաների ոսկորները, որոնց օսմանցի բռնակալները կախել էին Իրակլիոնի գլխավոր հրապարակի ծառերից:

Կազանձակիսը մեծացել էր իր իսկ արյան մեջ զգալով այդ հակամարտությունը: Նա երբեք չէր կարողացել հաղթահարել հոր հանդեպ ունեցած ակնածանքը, հարգանքն ու վախը: Այդ խիստ, երբեք չժպտացող Միխալիսը շատ գրքերում է հայտնվում, սակայն ամենահիշարժանը դրանց մեջ, անշուշտ, «Մահ կամ ազատությունն» է, որտեղ նա հանդես է գալիս որպես կապիտան Միխալիս: Երիտասարդ Նիկոսը հավատում էր, որ իր հոր (եւ նաեւ բազմաթիվ կրետեցի մարտիկների) աչքերում իր նման մեկը, որ կռվելու փոխարեն կարդալ եւ վերացական գաղափարների շուրջը խորհրդածել էր սիրում, բացարձակապես տեղ չուներ եւ հարգանքի արժանի չէր: Իր կյանքի ընթացքում նա միշտ փորձել էր ուղղել իրեն, փոխվել՝ շատ լավ իմանալով, որ դա անհնարին է: Այն արտասովոր էներգիան, որով կարդում, գրում, թարգմանում եւ ճանապարհորդում էր, ինչպես նաեւ այն անսպառ ոգեւորությունը, որով քաղաքական եւ կրոնական հարցեր էր շոշափում, վստահաբար առաջացել էր իր մեջ Կրետեում անցկացրած մանկության տարիների վերոնշյալ սոսկալի բարդույթի հետեւանքով: Ժամանակի ընթացքում գաղափարախոսությունների եւ մշակույթների այդ անհաշտ պայքարը, կրետեցի կապիտանների այդ գերզգայուն հպարտությունը նա վարպետորեն պիտի փոխանցեր եւ հարմարեցներ իր ոճանավորների եւ վեպերի թեմաներին:

Մեկ ուրիշ փորձառություն եւս կոփել էր նրան որպես յուրահատուկ գրողի: Դա Նակսոս կղզում (Կիկլադներ, արշիպելագ Էգեյան ծովի հարավում, պատկանում է Հունաստանին,- ծնթ. Հ. Ծ.) երկու տարի կաթոլիկների ֆրանսիական դպրոց հաճախելն է եղել: Թեեւ ինքը ոչինչ չի նշում իր «Զեկույց Գրեկոյին» վեպում, հավանական է, որ այնտեղ նա ունեցել է այն նույն տհաճ փորձառությունը, ինչ Ջեյմս Ջոյսն էր նկարագրել իր «Արվեստագետի դիմանկարը պատանության հասակում» վեպում, իր հերոսի՝ Սթիվն Դեդալուսի կերպարում ներառելով Իռլանդիայում նմանատիպ դաստիարակություն ստանալու իր սեփական փորձառությունը:

Մարմնական նվաստացուցիչ վիրավորանքները, անհաջող սեխի մտատանջություններն ու ասպվածային թեմաների նկատմամբ մտասեւեռումները բոլորովին տեղ չեն ունեցել հույն ուղղափառ ավանդության մեջ եւ ոչ մի հույն ինչ թե շատ հայտնի գրող չի անդրադարձել դրանց: Կազանձակիսի մոտ դրանք գլխավոր թեմաներ են եւ հենց դրանցով է, իմ կարծիքով, նա առանձնանում մյուս հույներից եւ ինքնուրույն ճանապարհ հարթում որպես գրող: Դա է նաեւ պատճառը, որ առաջին հերթին դրսում արժանացավ պատշաճ ճանաչման ու հարգանքի եւ հետո միայն՝ իր հայրենիքում:

Կազանձակիսի ձեւավորմանը նպաստող երրորդ հանգամանքը զուտ գրական է: Աթենքի համալսարանում սովորելիս նա ընդգրկվում է «դեկադենտության»՝ անկումային արվեստի էսթետիկական շարժման մեջ, որն այդ ժամանակ խիստ մոդայիկ էր: Մտավորական շրջանակներում ամեն մարդ կարդում էր Բարեսին, Մեսեոլինկին եւ մյուս հեղինակներին: Կազանձակիսը ծայրահեղության գնալով (եւ այդ գիծը պահպանելով նաեւ հետագայում) 1906-ին հրատարակեց իր «Օձը եւ շուշանը» վեպը, որտեղ երիտասարդ զույգը որոշում է փոխադարձ սերն իր վերջնակետին հասցնել ծաղիկների զգլխիչ բուրմունքի մեջ շնչահեղձ լինելով: Միաժամանակ էսթետիզմի գաղափարախոսության մեջ պասիվությանն առընթեր գործող բռնության եւ սադիզմի դրսեւորումները Կազանձակիսին ուղեկցել են գրեթե ընդմիշտ: Նրան հանգիստ չեն թողել նաեւ սեխի գործողությունների նկարագրությունների եւ դրանից հետո գազանային սպանությունների հիվանդագին զուգորդումները: Նրա վեպերում երիտասարդ կանայք գազանաբար սպանվում են տղամարդու բուռն կրքերին հագուրդ տալուց հետո:

Ուրիշ գործոններ եւս դեր են խաղացել նրա հետագա ձեւավորման մեջ: Դրանց թվում նաեւ Նիցշեի եւ Բերգսոնի փիլիսոփայությունն է: Աթոսի (ուղղափառ միաբանության սուրբ լեռը- ծնթ. Հ. Ծ.) վանականների հետ անցկացրած ուղիղ 40 օրերի ընթացքում Կազանձակիսը հրապուրվել է հունական վանականության ասկետիկ ավանդույթներով: Իր կյանքի այդ վաղ տարիներին նա հիմնականում պիեսներ է գրել, բայց կոմպրոմիսների չգնալու իր սկզբունքային դիրքորոշումների հետեւանքով դրանցից քչերն են ներկայացվել: Հետո նա անցել է հունարենը բարեփոխելու աշխատանքներին եւ առաջին կնոջ՝ Գալատեյայի հետ դասագրքերի մի ամբողջ շարք հրատարակել՝ բարեփոխումների իր առաջարկներով:

Մինչեւ 1919 թվականը նա արդեն բավական մեծ համբավ ձեռք բերած լինելով, Վրաստանի եւ Հայաստանի հույն համայնքներին հետաքրքրումների սպառնալիքներից փրկելու եւ նրանց Հունաստան տեղափոխելու հանձնարարություն է ստանում այդ ժամանակվա վարչապետ Էլեֆթերիոս Վենիզելոսի կողմից: Նա պատվով է կատարում այդ աշխատանքը: Բայց դրանից հետո հեռանում է Հունաստանից 1920 թվին՝ կատարելու մի շարք ճանապարհորդություններ, որոնք տեւում են մինչեւ իր կյանքի վերջը:

Հունաստանից հեռանալը սովորաբար բացատրվում է այդ ժամանակվա քաղաքական վերիվայրումների հանդեպ իր ունեցած նողկանքի զգացումով: Ինչպես հայտնի է, այդ տարվա նոյեմբերին Վենիզելոսը կորցնում է իր պաշտոնը, իսկ երկու տարի անց՝ 1922-ին Անատոլիայում հունական զինվորական առաքելությունը ձախողության է մատնվում, որի հետեւանքով ավելի քան մեկ միլիոն հույներ բռնագաղթում են: Ստեղծվում է Թուրքիայի Հանրապետությունը: Հունաստանում այդ դեպքերը մինչեւ օրս էլ բնութագրվում են «աղետ», «աղետալի» բառերով:

Կազանձակիսն այդ ժամանակ հայրենիքից հեռու է լինում: Վիեննայից նա անցնում է Բեռլին, բայց մինչ այդ հասցրած է լինում ծանոթանալ բոլշեւիկությանը եւ կոմունիզմին: Որոշ ժամանակ հրապուրվելով Լենինի անձնական օրինակով եւ պրոլետարիատին ընձեռված հնարավորություններով՝ նա ռուսերեն է սովորում եւ մի քանի տարի ճանապարհորդում սովետական Ռուսաստանում: «Զեկույց Գրեկոյին» վեպի հիշարժան տողերից են նրա նկարագրությունները այդ օրերին հիմնադրված Լենինի դամբարանի եւ մարդկանց նվիրվածության, որը նա նմանեցնում է ուղղափառ եկեղեցում Քրիստոսին երկրպագելուն: 1924-ին իր հայրենի երկրում՝ Կրետեում կոմունիզմի սերմերը ցանելու անհաջող փորձերից հետո, 1905-ին նա ձեռնամուխ է լինում գրական աշխարհում թերեւս ամենահամարձակ քայլին՝ յուրացնելու եւ վերստին գրելու Հոմերոսի «Ոդիսականը»: 13 տարիների երկնաջան աշխատանքից եւ 6 սեւագիր տարբերակներից հետո 1938-ին նա հանրությանն է ներկայացնում իր 33.333 տող պարունակող էպիկական պոեմը՝ երբեք անգամ ավելի երկար, քան Հոմերոսի բնագիրը: Իր տարբերակում նա ընդգրկում է հունարենի ամենահազվադեպ օգտագործված բառերը եւ ուղղագրության իր հորինած համակարգը (Բեռնար Շոուի նման): Այս հանգամանքները, ինչ խոսք, դժվարեցնում են տեքստի սահուն ընթերցումը:

Երբ վաղ 1970-ականներին սկսեցի հունարենը ուսումնասիրել, ինձ հայտնեցին, որ ընդամենը 6 հոգի է ամբողջությամբ կարդացել այդ ստեղծագործությունը: Կասկածում եմ, որ այդ թիվն ավելացած լինի, չնայած 2006-ին գրի ֆախիմիլե վերատպագրությունը կարող է ապացուցել, որ սխալվում եմ: Նրա հետագա համբավի շնորհիվ այդ գործը եւս 1950-ականներին թարգմանվեց անգլերեն, ֆրանսերեն եւ գերմաներեն: Անգլերեն տարբերակը 1960-ական թվերին շատ բարձր էր գնահատվում Մ. Նահանգներում, բայց հետո մոռացության մատնվեց:

Տես էջ 5

«Փոքրիկ տղան մի վարդ տեսավ,
Տեսավ մի վարդ դաշտի միջին...»
Գյոթե

ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ

ԳՅՈԹԵԻ «ՎԱՐԴԸ» ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏՈՒՄ

Վաղուց ի վեր արվեստը բնորոշվում է որպես երկրորդ իրականություն: Այն կարելի է դիտել նաեւ որպես մի «մեդիում» (ոգեմիջնորդ) հավերժի եւ հոգանցիկ իրականության միջեւ: Այս իմաստով «երկրորդ իրականությունը» ավելի իրական է, քան՝ առաջինը:

Տեղին է հիշել Գարեգին Նժդեհի ասույթը. «Իբրեւ անօթ՝ վաղուց է խորտակվել Բեթհովենը, չկայ նա, կան սակայն, մնում են նրա ակորդներն աստուածային»:[1] Արվեստում նույնիսկ անկենդան իրերն, ասես, կյանքի են կոչվում, իմաստավորվում: Դա հաճախ իրագործվում է այս կամ այն առարկային մարդկային հատկություններով օժտելու միջոցով՝ մի երեւույթ, որը կոչվում է անթրոպոմորֆիզմ:

Օրինակ, վարդը: Քանի՞-քանի՞ պոետներ, նկարիչներ գովերգել են վարդի կերպարը:

Ծաղկաթաշ ճարտնացի Յասունարի Կավաբատան ասում էր, թե յուրաքանչյուր ծաղկի խիզախությունն այն է, որ ծաղկում է յուրովի: Այդպես էլ արվեստում՝ յուրաքանչյուր արվեստագետ յուրովի է «պճնում» իր «ծաղիկը»: Խոսքը տարբեր մեկնաբանությունների մասին է, քանի որ միեւնույն առարկան, երեւույթ՝ իբրեւ խորհրդանիշ, իր մեջ պարունակում է մեկնության տարբեր հնարավորություններ, ավանդույթ դարձած պատկերացումներ: Արվեստում տարածված խորհրդանիշներից է վարդը: Այս ծաղիկն ունի մեկնության ահռելի դիապազոն: Ահավասիկ, Ջեյմս Հոլլի խորհրդանիշների բառարանից տեղեկանում ենք, որ Վեներային խորհրդանշող վարդը, ի սկզբանե, սպիտակ էր, իսկ երբ փուշը ծակեց նրա ոտը, արյան կաթիլներից վարդը կարմրեց: Քրիստոնեության շրջանում վարդը դարձավ Մարիամ Աստվածածնի խորհրդանիշը: Տիրամորը երբեմն անվանում էին «անփուշ վարդ», քանզի փուշը մեղքի խորհրդանիշ է:[2] Ըստ ավանդույթի, նախքան Ադամի մեղսագործությունը դրախտում վարդն ածում էր առանց փուշ: Իտալական միջնադարյան արվեստում Տիրամայրը պատկերվել է նաեւ վարդը ձեռքին (կամ մանուկ Հիսուսի ձեռքին):[3] Հայտնի են նաեւ ֆլամանդացիներ Յակոբ Յորդանսի եւ Էռազմուս Քվելլինի կտավները, որոնցում Տիրամայրը եւ մանուկ Հիսուսը շրջապատված են վարդի դրասանգներով:

Կարմիր վարդը նաեւ խորհրդանշում է նահատակների արյունը, որի կաթիլներից վարդեր են բխում: Սպիտակ վարդը նշանակ է սրբության: Իսկ դեղին վարդի խորհուրդը՝ թախիծն է: Տարիներ առաջ տարածված մի երգում հենց այդպես էլ ասվում էր.«Желтая роза эмблема печали»: Արեւելյան պոեզիայում վարդը եւ սոխակը խորհրդանշում են սերը: Հիշենք Ջամիին, Հաֆեզին, Սաադիին, Նաղաշ Հովնաթանին, Սայաթ-Նովային:

Անդրադառնալով Պետրոս Դափանցու պոեզիայի խորհրդաբանությանը՝ Շուշանիկ Նազարյանը մեջբերում է Թեոդիկի միտքը. «Էջմիածնի միաբան Դափանցի Պետրոս վարդապետը «...բաղձացել է, որ «Վարդենին»՝ Հայ ազգը նորատունկ բողբոջի...»[4]: Նույն խորհրդանիշը տեսնում ենք Գրիգորիս Աղթամարցի կաթողիկոսի «Ծաղկունք ասեն» տաղում, որի մասին Մայիս Ավդալբեկյանը գրում է. «Այս դեպքում բլբուլը հեղինակ պիտի դիտել, իսկ վարդը՝ Հայրենիք»5:

Արեւմտաեվրոպական պոեզիայում վարդին նվիրված ամենահայտնի բանաստեղծություններից է Վոլֆգանգ Գյոթեի «Վայրի վարդը»:

Բնագրաբար Գյոթեն, անշուշտ, գիտեր, որ «մի ծաղկով ոչ գարուն կգա», ոչ էլ՝ ամառ, ուստի իր պոեզիայի պարտեզում «Մանուշակ» բանաստեղծության կողքին «տնկեց» «Վայրի վարդը»: Այս երկու այլաբանական երգերը հակադրակերներ են, խնձորի երկու կեսերի պես լրացնում են միմյանց եւ պատկերացում տալիս սիրո անիմանալի ելեւէջների մասին:

Գերմանագետ Լեւոն Սարգսյանի «Վայրի վարդը» երգը, որը գրված է Շուբերտի ազդեցությամբ: Սրանց կողքին Սալվադոր Դալիի պատկերած մեղ վարդի պես վեր է խոյանում հայ դասական ռոմանսի հիմնադիր Ռոմանոս Մելիքյանի (1883-1933) «Վարդը»: Այս ռոմանսը եւ «Աշնան երգը» լույս են տեսել 1911-ին. Պետերբուրգում: Նոտաների անվանաթերթը ծաղկազարդել է մեծն Վարդգես Սուրենյանցը: «Վարդը» ռոմանսը գրված է Հովհաննես Թումանյանի թարգմանության հիման վրա՝ թարգմանություն, որ իր դասականությամբ եւ ժողովրդի կողմից սեփականացնելու առումով համարվում է ինքնուրույն բանաստեղծություն: Թե ինչպես է մեկնաբանել այն Մելիքյանը, կարելի է տեսնել Դավիթ Սողոմոնյանին հասցեագրված նամակում. «...Ինչ կա ավելի խոր արտեցնող մի հեռանկար, քան մահը, երբ մարդ զգում է, թե ինչքան ասելու-երգելու բան ունի, երբ տեսնում ես, որ բոլոր վառ հույսերը դեռ հեռվում են, եւ դու ձգտում էիր այդ գեղեցկության, բայց հանկարծ Fatum-ը (ճակատագիրը- Դ. Ե.) գալիս է... եւ «բայց էլ չօգնեց փշոտ վարդին..»[6]:

Արվեստագետի տագնապը արտահայտված է նաեւ Աթաբեկ Խնկոյանի խոսքերով գրված «Ես բլբուլ եմ» երգում, որի մասին Գ. Գյոդակյանը գրում է. «...Վշտահար տխակի կերպարը, որից խլել են վարդը, եւ այլեւս չի իմանում, թե այստեղ ում համար պիտի երգի իր երգերը, այստեղ ավելի շատ ընկալվում է որպես ողբերգական կերպարը այն երգչի, որը կորցրել է կյանքի ամենաթանկ ու գեղեցիկ պարգեւը, տանջալիորեն վերադրում է իր արվեստի ավելորդությունն ու ապարդյունությունը»[7]: Ինչպես հավերը նախազգում են մոտալուտ երկրաշարժը, այնպես էլ Ռոմանոս-«սոխակը», ասես, նախազգում էր 1915-ի. հայերի ցեղասպանությունը, այնուհետեւ 1917-ի հեղաշրջումը, որից հետո ռուս բանաստեղծ Վլադիսլավ Խոդասեւիչը գրել էր.

«Բավ է, պետք չէ Աղվեսը վեհ,
Երկրին երգն է ափսոս,
Հանգչիր Տաստոյի վառ կանթեղ,
Դուն էլ լռիր, Հոմերոս...
Գեղեցիկը եւ հուր լեզուն
Խորթ է խուռն ամբոխին:
Հարմոնիայի սովալ որդուն
Չի ընդունում խաղենին...
(Թարգմ. Դանիել Երաժիշտի)

20-րդ դարասկզբից սկսած մշակույթի գոյության մասին մտահոգությունը համատարած էր: 1920-ին լույս տեսավ Օսվալդ Շպենգլերի «Եվրոպայի մայրամուտը» աշխատության 2-րդ հատորը, որը ներկայացնում է համաշխարհային մշակույթի պատմության ելեւէջները:

Մշակույթին հերթական հարվածը հասցրեց նացիստական Գերմանիան: Ըստ էության, կոմպոզիտոր Անտոն Վեբեռնը արտահայտում էր Եվրոպայի ամբողջ մտավորականության տագնապը. «Այն, ինչ կատարվում է այժմ Գերմանիայում, հավատարազոր է հոգետր կյանքի ավերման»8: Ոչ պակաս ավերածություններ ականատես ենք նաեւ այսօր, երբ «մշակույթը ողբում է ինքն իր վրա»... Այնպես որ, ժամանակին Ռոմանոս Մելիքյանի մտահոգությունը տեղին էր: Պատահական չէ, որ մի գողտրիկ վարդի թառամելը նրա աչքում արձագանքվեց որպես մեծ աղետի սկիզբ:

Ռ. Մելիքյանը պարզապես վերամաստավորել է Գյոթեի բանաստեղծությունը եւ ստեղծել սեփական մի գլուխգործոց...

Շուբերտի մեկնությունը պայմանավորել է իր իսկ երգի պարզ ձեւը, տեւողությունը, որ պարունակում է 16 տակտ, նույնը եւ Վեբեռնի երգը, որ տեւում է ընդամենը 14 տակտ: Շուբերտի երգը շարադրված է արեւորդ «սոլ-մաժոր» տոնայնության մեջ, Վեբեռնի երգը՝ հովվերգական «ֆա-մաժոր»-ում, իսկ Ռոմանոս Մելիքյանինը՝ «Լուսնի սոնատի» խորհրդավոր «դո դիեզ-մինորում»՝ համակված բեթհովենյան խստաբուն ինքնարտահայտությամբ եւ դրամատիզմով: Մելիքյանի երգի մեղեդին բաղկացած է երկու մասից՝ նախերգից եւ կնկներգից:

Ինչպես լոգինը տակից, դաշնամուրի 6 տակտ նախանվագի ընդերից բխում է երգի մեղեդին: Հոգոցի պես՝ այն սկսվում է շունչ-պաուզայից՝ «Ի խորոց սրտի», նման Շոպենի դաշնամուրային 1-ին բալլադի թեման սկսող պաուզային: Մեղեդին աստիճանաբար բարձրանում է վեր: Հնչուժը կուտակվում է եւ 21-րդ տակտում՝ բարձրակետում, ամենալարված պահին հանկարծ մարում է (պիանիսիմո) եւ կրկներգում մեղեդին հետզհետե խոնարհվում է խորաբուն պաուզաներով «կապված» եւ «սեկվենցիայի» վարընթաց օղակներով վերադառնում է ի «շրջանս յոր»:

Երգի առաջին մասում Գ. Գյոդակյանը նկատում է. «Վարդը տեսած ու մոտ վազող տղայի անհամբեր, բորբոքված վիճակը, խաղալու ոգեւորությունը, ապա վարդի թառամելը»:

Իրոք, 21-22 տակտերում բոլոր արտահայտչամիջոցները խորհրդանշում են թառամելու պահը, սակայն թառամելը՝ «պրոցես» է, որը շարունակվում է մինչեւ երգի վերջը: Ի դեպ, վարդի ակնթարթային թառամելը տեղի է ունենում Գյոթեի «Ֆաուստում»՝ «Մեֆիստոֆելի շնչից», երբ Ջիբելը Գրեթխենի համար վարդեր էր պոկում: Ըստ Գյոդակյանի, Ռոմանոսի երգի երկրորդ մասը «արտահայտում է իրադարձության ընդհանուր ողբերգական լուծման հետ կապված ափսոսանքի ու թախծի զգացմունքներ»[9]:

Հիրավի, ափսոսանքի արտահայտությունն այնքան է տարածված հայկական երգերում, որ դրանք կարելի է բնորոշել որպես «ափսոսանքի ժանր»: Ահա «ափսոսանքի երգերից» մի քանի դարձվածներ: Օրինակ, «Հազար ափսոս, Մոկաց Միրզեն», «Ափսոս, Անուշ, սարի ծաղիկ»», «Չէ՞ որ Անին ափսոս է», «Բայց ափսոս, որ երազ էր» եւ այլն: Սա պայմանավորված է այն մեծ կորուստներով, որ ունեցել է հայ ժողովուրդը:

Ինչ արտահայտչամիջոցներով է կոմպոզիտորը արտահայտում ափսոսանքը:

Նախերգի նվագակցության կաբկանդված (սինկոպային) ռիթմի զարկանակը արձակվում է կրկներգում, ինչի հետեւանքով հնչյունային զանգված պոռթկումին՝ «մակընթացությանը» հաջորդում է կրկներգի «տեղատվությունը»: Մյուս դիպուկ հնարքը հետեւյալն է. մինչ մեղեդին գահավիժում է, բասը խորանում, դաշնամուրի աջ ձեռքի ակորդները հակառակ շարժումով վերընձյուղվում են՝ կրկնությամբ հանդերձ, յոթ անգամ: Տարբեր աստիճաններից վերսկսվող այդ յոթ հնչյունաբույլերը կարելի է համեմատել երկնքում անհետացող օդապարիկների հետ, որոնք ֆամին պոկել է մի երեխայի ձեռքից, եւ նա ափսոսանքով նայում է նրանց հետեւից:

Կամ դա հենց պոկված վարդի բույրն է «ֆուլա-ֆուլա » գոլորշանում երկրից՝ երկինք...

Երգի ազդեցիկ արտահայտչամիջոցներից է նաեւ հարմոնիան: Իր երգի մեղեդին Ռոմանոս Մելիքյանը թեավորում է Վագների, Շոպենի արվեստում բյուրեղացած ռոմանտիկ հարմոնիաներով, ստեղծելով հնչյունային մի միկրոտիեզերք, որում ճախրում է երգը: Բավական է նշել Շոպենի հիշյալ 1-ին բալլադի թեմայի սկիզբը: Ավելին, Ռոմանոսը երգում կիրառում է հետեւյալ վագներյան սկզբունքը, որ վառ կերպով արտահայտված է «Տրիստան եւ Իզոլդա» օպերայում: Դիսոնանս, լուծում պահանջող լարված ակորդը լուծվում է, ավելի ստույգ փոխակերպվում է հաջորդ լարված դիսոնանս ակորդի, որն իր հերթին լուծման կարիք ունի: Այսպես, ստեղծվում է դիսոնանսների մի շղթա, որը երկարաձգում է լարվածությունը եւ լուծումը դառնում է թվացյալ:

«Վարդ» երգում դաշնամուրի դիսոնանսի (հարց)-կոնսոնանսի (պատասխան) հերթագայությունը խաղը նմանեցնում է աստղերի թարթող լույսին: Երգի վերջում կոմպոզիտորը, հնարավորություն ունենալով լուծելու դիսոնանսը, խուսափում է եւ երգն ավարտում անպատասխան հարցով: Եվ, ասես, Ռոմանոս Մելիքյանն էլ Վահան Տերյանի պես հարցնում է. «Մի՞թե վերջին պոետն եմ ես»...

Ինչպես վերը նշվեց, տարբեր ազգերի կոմպոզիտորները Գյոթեի բանաստեղծության բնագրում նույնն են տեսել, միեւնույն խորհրդանիշը միանշանակ մեկնաբանել, մինչդեռ Մելիքյանը ստեղծել է ողբերգական հակապատկեր: Եվ դա կարելի է բացատրել Նարեկացուն բնութագրող Հովհաննես Թումանյանի հետեւյալ խոսքերով. «Այստեղ («Նարեկում»- Հ. Մ.) արդեն հայի լեզուն չի, որ խոսում է, բերանը չի, որ պատմում է, կրակված սիրտն է, որ այրվում է, երկիրը բռնած, տանջած հոգին է, որ մռնչում է մինչեւ երկինք»[10]:

Հիրավի, արվեստը՝ երկրորդ իրականությունն ավելի իրական է. այսօր չկան Թումանյանը, Գյոթեն, Շուբերտը, Ռոմանոս Մելիքյանը, չկա նաեւ «փոքրիկ տղան» եւ նրա պոկած վարդը, սակայն արվեստում այդ վարդը անթառամ է եւ մշտաբույր:

Ամփոփելով՝ մի անգամ եւս հարկ է նշել, որ Թումանյան-Ռոմանոս Մելիքյանի «Վարդը» իր արժանի տեղն ունի արվեստի անդաստանում՝ Գյոթեի-Մոցարտի «Մանուշակի», Գյոթե-Շուբերտի, Գյոթե-Վեբեռնի, Գյոթե-Լեհարի անթառամ «ծաղիկների» կողքին: Եվ նկատի ունենալով մեկնաբանության բազմազանությունը, երախտապարտ կոմպոզիտորները վստահորեն կարող են Գյոթեին դիմել բանաստեղծ Վահիդ Թաբրիզիի խոսքերով: «Քո վարդը, քո նոճին խլել են ուրիշ անդորը, քո հակինթը մանուշակ դարձած, փթթում է հաստիկի վրա...»[11]:

Ռոմանոս Մելիքյան


Յոհ. Վ. Գյոթե

---

1. Գ. Նժդեհ, Ասույթներ, Երեւան, 2002, էջ 64:
2. *Дж. Холл , Словарь сюжетов и символов в искусстве, М., 1999 стр. 124*
3. Նշված գործ, էջ 124, 485:
4. Շուշանիկ Նազարյան, Պետրոս Դափանցի, Երեւան, 1969, էջ 54:
5. Գրիգորիս Աղթամարցի, Երեւան, 1984, էջ 9:
6. Գ. Գյոդակյան, Ռոմանոս Մելիքյան, Երեւան, 1960, էջ 47-48:
7. Նշված գործ, էջ 131-132:
8. *А. Веберн, Лекции о музыке, Москва, 1975, стр. 26*
9. Գ. Գյոդակյան, Ռոմանոս Մելիքյան, Երեւան, 1960, էջ 49:
10. Հակոբ Մխիթարյան, Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը, Երեւան, 1991, էջ 21:
11. *Е. Р. Яковлев, Искусство и мировые религии, М., 1977 стр. 131* ■

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՀՈԳԻՆ

Ազատության ու մարդասիրության առաքյալը դեռ թաղված է քաղաքականության ճահճում

ՀԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Մտրել, ինձ համար նշանակում է ափսոսել».- իր այս սկզբունքին հավատարիմ՝ Այվազովսկին ստեղծել է շուրջ 6000 նկար: Նա ամեն օր մաքուր կտավին է մոտեցել, ինչպես պոետը կիակվեր ճերմակ թղթին: Ծովափին հասակ առած նկարչի երեակայության մեջ «ֆանդակվել է» ծովի կերպարը եւ նա արարել է պատկերվող նյութին համահունչ գունալեզու: Հավիտյան անշարժ ու շարժուն ջրային տարերքը՝ ամեհի փոթորիկները, օդային հարափոփոխ մթնոլորտը, արեւի ու լուսնի ցոլացումները, փոփոխվող ալիքներն ու դրանց թափանցիկությունը նա պատկերել է գեղանկարչի իր ինքնությունը հաստատող թեթեւ, նրբահյուս երանգաբարի կախարդիչ վարպետությամբ: Դրան զուգահեռ ծովի անսահմանությունն ու տիեզերական ընդլայնը «հուզել է» Այվազովսկուն իր կտավներին փոխանցել ժամանակի ազատատենչ գաղափարներն ու մարդասիրական զգացումները, մի հանգամանք, որ եզակի տեղ է ապահովում նրան XIX դարի ռոմանտիկական արվեստում: Նկարչի լավագույն գործերը համամարդկային մշակույթի պայծառ էջերից են: Եվ մեր օրերում, երբ մարդն իբրեւ դրախտ է ընկալում իր երկիր-բնօրրանը, նոր իմաստ ու արժեք է ձեռք բերել մեծ բնապաշտի ժառանգությունը:

Այվազովսկին փառք է նվաճել իբրեւ ռուս նկարիչ եւ լայն համբավ է բերել ռուսական նկարչությանը ողջ աշխարհում: Անկարելի է առանց նրա տեսնել ռուսական արվեստը, սակայն, անկարելի է նաեւ ժխտել նրա որոշակի դերն ու տեղը հայկական արվեստում: Ինչպես նշված է ռուսական, ֆրանսիական եւ սովետական հանրագիտարաններում, նա ծնվել է հայ ընտանիքում, մշտապես կապված է եղել իր ժողովրդին, ստեղծել ազգային՝ պատմական թեմաներով նկարներ, արձագանքել 1895-ին Թուրքիայում իրականացված եղեռնին: Իր արվեստի էությունը կազմող բազմաբնույթ ծովապատկերներում արտացոլում են գտել նաեւ իր խառնվածքին բնորոշ՝ զգացմունքայնությունը, երազայնությունը, գունային մթնոլորտի ջերմությունը, ինչպես եւ հեքիաթային-սիմվոլիկ մտածելակերպն ու ազատ իմպրովիզացիան, հատկանիշներ, որոնք մոտ են հայ մշակույթի ավանդույթներին:

Հիշենք մի շարք մասնագետների ասույթներ:

Թեոդոսիայում Այվազովսկու անվան պատկերասրահի երկարամյա տնօրեն եւ նկարիչ Ն. Բարսամովը իր վերջին մենագրության մեջ (հեղինակի նախկին գրքերից շահեկանորեն տարբերվող եւ ծովանկարչին նվիրված միակ խոր ուսումնասիրությունը) գրել է. «Այվազովսկին գունանկարը երբեմն կառուցում էր ներկայացնելի հիմնական գույների սուր հակադրությամբ եւ հասնում գույնի վառ հնչողության... Գույների զգայաթրթիռ ներդաշնակումների մեջ կարելի է տեսնել բնածին հակում, որ բացատրվում է նրա ծագումով եւ այն միջավայրով, որտեղ նա հասակ առավ: XIX դարի կեսերին դա նույնքիսի երեւույթ էր, որքիսին XX դարի սկզբին Սարյանի արվեստը»:[1]

Լենինգրադի Ռուսական թանգարանի 19-րդ դարի արվեստի բաժնի վարիչ Ն. Նովոռաթենսկին մի քանի լեզուներով հրատարակված պատկերագրի առաջաբանում գրել է. «Այվազովսկու արվեստում արտահայտություն են ստացել նաեւ հայ ժողովրդի հինավուրց մշակույթի եւ ազգային բնավորության գծեր, ժողովուրդ, որի հավատարիմ զավակը նա մնաց մինչեւ իր կյանքի վերջը»:[2]

Տրեյակովյան թանգարանի ավագ գիտաշխատող, հայտնի այվազովսկիագետ Գ. Ցուրակի՝ Այվազովսկուն նվիրված պատկերագիրը սկսվում է այսպես. «...Գալիցիայում ծնված Գեւորգ Այվազյանը իր անունն ու ազգանունը գրել է լեհական ձեւով՝ Կոնստանտին Հայվազովսկի: Իր առաջին նկարները այդ ազգանունով է ստորագրել նրա որդին, որը կոչված էր փառաբանելու իր նախնիների տոհմական ազգանունը՝ հայտնի դարձնելով ամբողջ աշխարհին: Ճակատագիրը որտեղ ասես չի նետել բազմաչարչար Հայաստանի որդիներին...»:[3]

Այվազովսկու հայկական ծագման մասին կարելի է կարդալ վերջին տասնամյակում լույս տեսած ռուսական մի շարք հրատարակություններում: Սակայն բավարարվենք Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ.Պուտինի, Ռուսական մշակույթի օրերի բացման առթիվ (2005) Երեւանի օպերային թատրոնի բեմից հնչեցրած խոսքով, «Հայ ժողովրդի տաղանդավոր զավակները մեծ դեր են ունեցել ռուսական մշակույթում...», եւ առաջինը նշեց Այվազովսկու անունը:

Իսկ ահա, վերջերս, ռուսական «Կուլտուրա» հեռուստաալիքով հաղորդում տվեց՝ նվիրված Այվազովսկու ծննդյան 190-ամյակին: Այդ հաղորդումը հիասթափեցրեց «Կուլտուրա» ալիքի հայաստանյան երկրպագուներին եւ ոչ միայն նրանց: Մենք տեսանք նկարչի հարազատների՝ հոր (Գեւորգ-Կոնստանտինի), մոր (Հռիփսիմեի), կնոջ՝ (Աննա Բուռնազյան-Սարգիսովայի) դիմանկարները, բայց ոչինչ չլսվեց նրանց հայ լինելու մասին: Ցներկայացվեց նկարչի եղբոր՝ նշանավոր հայ եկեղեցական Գաբրիել Այվազյանի դիմանկարը, որ լավագույններից մեկն է ծովանկարչի դիմանկարների շարքում: Ավարտին, երբ երեւաց Այվազովսկու շիրիմը սբ.Սարգիս եկեղեցու բակում, թվաց, թե վերջապես կարդացվելու է շիրմաքարի՝ հայերեն արձանագրությունը: Բայց... լռություն: Ի՞նչ էր դա նշանակում: Ակնհայտ էր ինչ-որ կանխամտածված միտում՝ ցույց չտալ նկարչի հայկական նկարները, չխոսել նկարչի հայկական կարգերի, Թեոդոսիայի իր ազգակիցների մասին, «խաղաքի հայր», «բարի հանճար» բնութագրումները հիշել, բայց մի տեսակ անհարմար զգալ «հայ» բառը օգտագործել:

Հաղորդումից հասկացվեց տղավորեց այն միտքը, թե ռոմանտիզմի մեջ շատ ուժեղ է Արեւելքի նոտան, եւ Այվազովսկուն թվացել է, որ իր «հայ լինելը բավարար արեւելյան չէ ու ձգտել է ուժեղացնել իր կենսագրության այդ թույլ կողմը»... եւ սկսեցին հնչել խոսքեր, նրա քֆեր, ընդունելություններ կազմակերպելու, կանանց սիրելու մասին: Ուրեմն հայ լինել, չի՞ նշանակում արեւելքցի լինել, երբ հայ ժողովրդի բնօրրանը Արեւելքում է եւ պարսիկ, արաբ, թուրք դարավոր դրացիներից տարբերվում է նրանով, որ 4-րդ դարում քրիստոնեություն է ընդունել: Նշված տարօրինակ խոսքից ստացվում է նաեւ, որ Ժերիկոն, Դելակրուան, Շումանը, Բերլիոզը, Չայկովսկին, տարբեր ժողովուրդների պոետներ ու արվեստագետներ ռոմանտիկական-ազատաբաղձ արվեստ են ստեղծել, առանց արեւելքցի լինելու: Մի քեզ պարադոքս: Ուզում ես հարց տալ՝ իսկ բուն արեւելքցիները ռոմանտիկական արվեստի հետ ընդհանրապես կապ ունեցե՞լ են:

Դա որքան արվեստաբան, առանձնապես հետազոտող հաղորդման սցենարի հեղինակ Ալեքսանդր Կրասնոշեկու մի նախադասությունը, «Նա (Այվազովսկին) նույնիսկ ձգտեց կանխել Հայոց եղեռնը, մեկնեց Կոնստանդնուպոլիս հանդիպելու սուլթանին... Ճամփորդությունը, սակայն, չպսակվեց հաջողությամբ»: Ապշել էի, նա գնացել էր Օդեսա՝ հանդիպելու Թուրքիայի կոնսուլին, ոչ թե Կոնստանդնուպոլիս: 1895-ի ողբերգական դվագներ պատկերած, թուրքերի դեմ ռուսական նավատորմի հաղթանակները գովերգած նկարիչը ինչպե՞ս կարող էր սուլթանի մոտ գնալ: Որտեղի՞ց եւ ինչո՞ւ էր Կրասնոշեկին նման սխալ թույլ տվել: Ու եկա մի պարզ հետեւության՝ նման «փաստեր» հորինվել են շատ վաղուց եւ այժմ էլ հորինվում են հատուկ նպատակով: Սցենարի հեղինակը չի ցանկացել ավելի խորը դիտարկել Այվազովսկու կյանքը եւ իբրեւ ավելի խելամիտ մոտեցում օգտվել է շատ հին գրքերից: Հաղորդումը ստիպեց մեզ գոնե մեկ անգամ (նախկինում ավելորդ համարված) անդրադառնալու այդ գրքերին: Միշտ չէ, որ հինը ավելի ճշմարիտ խորհուրդ է պահում...:

Այվազովսկու ծննդյան միակ իրավական վկայագիրը Թեոդոսիայի սբ.Սարգիս եկեղեցու ծննդյան եւ մկրտության մատյանն է, որ 1817 թ. հուլիսի 17-ին Տեր-Մկրտիչը գրառել է նկարչի ծնունդը. «Գեւորգ Այվազյանի որդի Հովհաննեսն»4 մինչ այսօր հայ ժողովուրդը ծովանկարչին հենց այդ անունով է ճանաչում:

Ռուսական աղբյուրներում նկարչի ազգությանկանության նախնական վկայությունները արձարձվել են միայն 1833-ին, Սիմֆերոպոլից Ս.Պետերբուրգ՝ Գեղարվեստի ակադեմիայի նախագահ Օլենինին ուղարկված եւ կայսերական տան նախարար Վոլկոնսկու «...13-ամյա հայի որդու» տաղանդին վերաբերող գրություններում:5 Նկարչի ծագման նախասկզբնական այլ տեղեկություններ չկան:

Բայց ահա, տասնամյակներ անց, 1878-ին, երբ Այվազովսկու՝ իբրեւ ռուս մեծ նկարչի անունը թնդում էր, Թուրքիայի հետ Ռուսաստանի հաշտության տարում, ստորագրված իր իսկ կտավներով զարդարված դահլիճում, «Ռուսական տարինա» հանդեսում լույս է տեսնում Կարաչիգինի ծովանկարչին նվիրված կենսագրական բնույթի աշխատությունը, որն սկսում է այսպես. «Այվազովսկու նախնիները թրքահպատակ են եղել, Ղուտանի հետեւորդ (առաջին սխալ. միթե՞ թրքահպատակ լինել, նշանակում է լինել Ղուտանի հետեւորդ- Շ.Խ.): Նկարչի հանգուցյալ հայրը պատմել է նրան, որ իր պապը Ազովի գրավման ժամանակ (18 հուլիս,1696) փրկ է մնացել, որ զոհ գնա մեր զորքերի ցասմանը, սակայն զինվորներից մեկը փրկել է նրան անխուսափելի մահից: Նույնը Իվան Կոնստանտինովիչին հաստատել է նաեւ կոմսուհի Ա.Դ.Բլուդովան՝ ասելով, որ ինքը մի հին գրքում կարդացել է Այվազովսկիների ընտանեկան ավանդույթներից եկող այդ միջադեպի մասին: Խոսելով թուրքական ցեղից սերող Այվազովսկու մասին, կոմսուհին նկատել է, որ մահմեդական Արեւելքը, Ռուսաստանի հանդեպ իր ողջ ատելությամբ հանդերձ նրան տվել է երկու պոետ՝ Ժուկովսկի ու Պուշկին եւ մեկ նկարիչ՝ Այվազովսկի»: Ստի ինչ «հանճարեղ» թռիչք... Նախ, այդ ինչ գիրք է , որ անհայտ է մնացել հայերին, մանավանդ նկարչի՝ պատմական հատորների հեղինակ եղբորը: Երկրորդ՝ նկարչի նախնիները Այվազովսկիներ չեն կոչվել, եւ երրորդ՝ ո՞վ է այդ Բլուդովան, որի թեթեւամիտ, անուրջ «նկատումը» մեծ արվեստագետի ծագումը հաստատելու հիմք է դարձել, մի բան, որ գիտական հիմնավորումներով պիտի հաստատեր ինքը՝ աշխատության հեղինակը: Ուրեմն, նկարչի ծագման «նոր պատմությունը» սկսվում է «Ռուսական տարինայով», որտեղ, ի դեպ՝ բուն խնդրի շուրջ նկարչի կողմից կոնկրետ պարզաբանումներ չկան:

1887-ին, Այվազովսկու գործունեության 50-ամյա հոբելյանից հետո Ս.Պետերբուրգում լույս տեսած «Այվազովսկի. Ակնարկ կյանքի եւ գործունեության. ճառեր, ողջույններ» գրքույկում (էջ 18), ի դեպ տպագրված ներքին գործոց նախարարության տպարանում, նկարչի ծագման մասին մասամբ փոփոխված (առանց Բլուդովայի) նշվել է. «Այվազովսկու գեղարվեստանում պահպանվում է մի ավանդություն, ըստ որի նրա նախնիները թուրքական ծագում են ունեցել: Նկարչի նախապարը թուրք զորահրամանատարի որդի, տակավին մանուկ՝ փրկ է մնացել, որ սրի քաշվի զինվորների կողմից 1696 թ. Ազովի գրավման ժամանակ: Երեխային մի հայ է փրկել, որը եւ հետագայում որդեգրել է նրան: Այվազովսկու նախնիների հետագա ճակատագիրն անհայտ է» (այս վերջին նախադասությունը չմոռանանք-Շ.Խ): Այստեղ եւս նկարչի կողմից ասված որեւէ այլ կոնկրետ վկայություն չկա:

Իսկ ահա 1901-ին, երբ նկարիչն արդեն վախճանվել էր, Ս.Պետերբուրգում լույս է տեսնում Այվազովսկուն նվիրված առաջին ծավալուն գիրքը՝ «Բեղ մի հատոր (հրատարակիչ՝ Ֆ.Բուլգակով, տեքստը կազմող՝ Ն.Կուզմին, գրաֆնությամբ թույլատրված՝ 27 սեպտ., 1900): Գրքի տեքստը հիմնականում «Ռուսկայա սարինայի»՝ Կարաչիգինի կողմից գրառված Այվազովսկու ինքնակենսագրական հուշերի կրկնությունն է՝ շարադրված նույն նախադասություններով: Ավելացված է միայն նկարչի վերջին երկու տասնամյակներին վերաբերող երկու գլուխ, որ, ի դեպ, ոչինչ չի ասված Թուրքիայում հայկական կոտորածները պատկերող նկարների մասին, որոնց ցուցադրումը Օդեսայում, Մոսկվայում եւ Խարկովում մեծ աղմուկ էր բարձրացրել: Երբ կարդում ես այդ գիրքը համեմատելով նախկինի հետ, դեմ ես առնում տարօրինակ, հակագիտական փաստերի: Գրքից նախ հանված է «Ռուսկայա սարինայի» առաջաբանը, որտեղ ֆրանսիական դեսպանատան քարտուղարը նշում է նկարչի հայ լինելը: Բայց աղբեցնողն ու խիստ անընդունելին միայն այդ չէ: Գրքից հանված են Այվազովսկու հոր՝ հայ-Գրիգորյան (քրիստոնեական) կոնին դավանած լինելու տողերը, եղբոր՝ արքեպիսկոպոս Գաբրիելի (Գավրիիլի) եւ Վենետիկի սբ.Ղազար կղզու հայկական Մխիթարյան միաբանության մասին պատմող էջերը, միաբանություն, որին սերտորեն կապված էին Այվազովսկի եղբայրները: Թող ընթերցողը որոշի, թե ինչ անուն կարելի է տալ այսպիսի «աշխատությանը»:

Այն, ինչը երկու տասնամյակ առաջ իր ինքնակենսագրության մեջ, այն էլ համեստ ու համառոտ, նշել է նկարիչը, գրքից հանվել, կրճատվել է: Ինչու՞: Առանց նախնական նոպատակադրման, նման բան չէր կարող տեղի ունենալ: Եվ դա արվել է Այվազովսկու վախճանից անմիջապես հետո:

Կանխամտածված խնդրի վերջնական լուծման համար գրքի սկզբում Կուզմինը հավելել է հին տեքստի իր հորինած նոր պատմությունը՝ Այվազովսկին մի անգամ հիշել է հեքիաթալ մանրամասնությունը» (հիշել է, մի անգամ, ե՞րբ, որտեղի՞ց, եթե ըստ «Ռուսկայա սարինայի»՝ հայրն իրեն այլ բան է պատմել): Ճշմարտությունն ուրացողին դժվար չէ կեղծիքներ հորինելը: Գուցե Կարաչիգինն էլ ինքը, նույն Կուզմինն է՝ ժամանակի ընթացքում իր հեքսաթնդան մտքերի մեջ ավելի խորացած, իսկ եթե՝ ոչ, ինչպիսի՞ ակնհայտ գրագողություն՝ հեղինակ դառնալ ուրիշի գրածին ըստ իր կամքի փոփոխություններ անելով:

Մինչ Կուզմինի ստերի մեջբերումը, անհրաժեշտ է նշել, որ երկար ժամանակ այդ գիրքն է հիմնաղբյուր հանդիսացել Այվազովսկու մասին գրող ռուս հեղինակների համար, նույնիսկ՝ նրանց, ովքեր ճանաչված մասնագետներ են: Օրինակ «Ռուսական արվեստի պատմության» երկհատորյակը՝ հրատարակված ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտի կողմից (Մոսկվա, 1980): Հեղինակներից մեկն ու գլխավոր խմբագիրն է Մ.Նեկլյուդովան, իսկ Այվազովսկու մասին գրողը՝ Ն.Մաշկովցեւը: Ծովանկարչի ծագման պատմությունն այստեղ ուղղակի հաղված է Կուզմինից: Ցավոք, նույն մոտեցումով է վերոհիշյալ հաղորդումը պատրաստել, իր արդիական մեկնություններով ու բարձր ճաշակով մեր հանրությանը ընդհանրապես սիրելի դարձած «Կուլտուրա» հեռուստաալիքը:

Այսպես ուրեմն, 1696-ի Ազովի գրավումը 1770-ի Բենդեր բերդի գրավմամբ փոխարինած Նիկոլայ Կուզմինը, ռուս ընթերցողին նույնիսկ վիրավորող տոնով գրել է. «... Գազազած զինվորները չեն խնայել ոչ սեռ, ոչ տարիք: Նրանց զոհերի թվում եղել է նաեւ Բենդերի փաշայի քարտուղարը. ռուս գրենադյորից մահացու վիրավոր, այնուամենայնիվ՝ նա կրծքին է սեղմել մի մանկիկի, որին նույն ճակատագիրն էր սպասում (թուրք զորահրամանատարի որդին, այստեղ դարձել է քարտուղարի որդի): Ռուսական սվինն արդեն բարձրացել էր մանկահասակ թուրքի վրա, երբ մի հայ բռնում է եղեռնագործ ձեռքը՝ բացականչելով. «Կա՛ց, իմ երեխան է, նա քրիստոնեա է»: Ազնիվ սուտը ծառայում է երեխայի (նկարչի հոր) փրկությանը...»: Այնուհետեւ՝ «բարեսիրտ հայը այսմանով չսպառեց իր

Տես էջ 6

«Բայրոնի այցը Մխիթարյաններին», 1899 թ.

Մամանակ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՀԱՍՑԵՆ՝ Ք. ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Լուծարված «Սեւանի սառցակոմբինատ» ՓԲԸ-ի լուծարումից հետո մնացած շարժական գույքը

N	Գույքի անվանումը	Քանակը (հատ)	Գնահ. արժեքը /դրամ/	Լուծ. ընթացքում վերջին աճուրդի մեկ. գինը /դրամ/	23.07.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	07.08.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	22.08.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	06.09.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	24.09.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	09.10.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	24.10.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	08.11.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/
1	Հրեջ կայան	1	6800	1700	724							
2	էլ. վահանակ	1	9040	2260	963							
3	Կառաց կցող սարք	1	10150	2538	1081							
4	Մեխանիկական ամբարձիչ	1	11340	2835	1207							
5	Գազի անալիզատոր ՈՒԳ-2	1	7110	1778	758							
6	Յուղանջատիչ ՕՄՄ-100	1	8300	2075	883							
7	Յուղանջատիչ ՕՄՄ-101	4	2080	520	224							
8	Ամոնիակային պոմպ 3Տ4Ա2Գ	4	19700	4925	2096							
9	Սարքավորում «Ամոր»	1	54390	13598	5783							
10	Վահանակ 100x600x500	3	17880	4470	1904							
11	Օդաձիգ սարք (վինտիլյատորով)	1	18040	4510	1920							
12	Տրի պոմպ К20 302	2	2480	620	266							
13	Դոնամարկային սարք	1	8330	2083	887							
14	էլ. կայծրիֆեր	3	6630	1658	707							
15	Կաթնահարիչ	1	10160	2540	1082							
16	Մեսաղյա հարթակ	4	12930	3230	1376							
17	Տասնյակ պանել. վահանակ 1	1	62600	15650	6656							
18	Տասնյակ պանել. վահանակ 2	1	23210	5803	2470							
19	Տասնյակ պանել. վահանակ 3	1	42870	10718	4559							
20	Տասնյակ պանել. վահանակ 4	1	16480	4120	1754							
21	Տասնյակ պանել. վահանակ 5	1	15280	3820	1627							
22	Տասնյակ պանել. վահանակ 6	1	31340	7835	3333							
23	Տասնյակ պանել. վահանակ 5.9	1	7410	1853	790							
24	Կոնդենսատոր վահանակ ԿԿՈՒ-0.38	2	16850	4213	1793							
25	Օդաէրուիչ Տ-4708	3	7400	1850	788							
26	Տրանսֆորմատոր /բոյլեր/	2	33220	8305	3532							
27	Եռակի պանել վահանակ 8	1	18260	4565	1944							
28	Քառակի պանել վահանակ 8	1	30260	7565	3218							
29	Մեկ պանելային վահանակ 7	1	12410	3103	1321							
30	Սառ հաստոց 3136-41	1	55360	13840	5886							
31	Ռոբոտոն	1	15790	3948	1681							
32	Մեսաղյա բակ	2	20760	5190	2209							
33	Սառնարանային խցի դուռ	1	36740	9185	3907							
34	Սեյֆ К/С	1	8300	2075	883							
35	Գրանիտենա «Ռոբոտոն»	1	15812	3953	1683							
36	Մեսաղյա բակ	1	20760	5190	2209							
37	Մեսաղյա բակ	1	20760	5190	2209							
38	Գրասեղան 2 տուփա	1	3970	993	423							
39	էլ. հաշվիչ	7	15350	3838	1634							
40	Սրսաց. սնոթ 60կգ	3	34838	-	18517	16666	15000	13500	12150	10935	9842	8858
41	Խոհանոցային գլխ LSU	1	48710	-	25888	23300	20970	18873	16986	15288	13760	12384
42	էլ. զոդող սարք	1	19650	-	10445	9401	8461	7615	6854	6169	5553	4998
43	էլ. սպիկ ՊԷ - 2Ս	1	8300	-	4412	3971	3574	3217	2896	2607	2347	2113
44	Կոնֆիտոնիչ «ՊՍԳ-1»	1	14640	-	7783	7005	6305	5675	5108	4598	4139	3726
	Նյութեր											
45	Անջատիչ ՊՈ-46-02	2	3236	1618	690	621	559	504	454	409	369	333
46	Անջատիչ Ռ22տՇ-13	32	3040	1520	648	584	526	474	427	385	347	313
47	Անջատիչ 4Շ-01	15	4155	2078	885	797	718	647	583	525	473	426
48	Անջատիչ դաշտ տ. 16	15	2220	1110	474	427	385	347	313	282	254	229
49	Տրանսվացուցիչ լուծ ԳԱՍ-52	2	94	47	22	20	18	17	16	15	14	13
50	Պլաստինկա 16/5	10	100	50	23	21	19	18	17	16	15	14
51	Պլաստինկա Բ-90-01-50	73	2117	1059	453	408	368	332	299	270	243	219
52	Առանձնակալ 267	2	192	96	43	39	36	33	30	27	25	23
53	Առանձնակալ 75-0867	7	91	46	21	19	18	17	16	15	14	13
54	Առանձնակալ 204	19	3800	1900	810	729	657	592	533	480	432	389
55	Առանձնակալ 304	5	1000	5000	2127	1915	1724	1552	1397	1258	1133	1020
56	Առանձնակալ80-20	1	200	100	45	41	37	34	31	28	26	24
57	Առանձնակալ 30-309	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
58	Առանձնակալ 180-60	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
59	Առանձնակալ 22-08	2	96	48	23	21	19	18	17	16	15	14
60	Առանձնակալ 75-07	1	200	100	45	41	37	34	31	28	26	24
61	Առանձնակալ 16-07	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
62	Առանձնակալ 54-25	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
63	Առանձնակալ 206	13	91	46	21	19	18	17	16	15	14	13
64	Փական Ֆ-15	5	1385	693	297	268	242	218	197	178	161	145
65	Փական Ֆ-15	8	2040	1020	436	393	354	319	288	260	234	211
66	Փական միաց. սարք Ֆ-50	10	5500	2750	1170	1053	948	854	769	693	624	562
67	Փական 40	8	2008	1004	429	387	349	315	284	256	231	208
68	Փական 32	4	1568	784	336	303	273	246	222	200	180	162
69	Փական 100	1	3000	1500	639	576	519	468	422	380	342	308
70	Փական 15	8	736	368	159	144	130	117	106	96	87	79
71	Փական 20	10	2120	1060	453	408	368	332	299	270	243	219
72	Սեղմանիվ	9	2313	1157	494	445	401	361	325	293	264	238
73	Կաֆել	15	1380	690	296	267	241	217	196	177	160	144
74	Կիսասոնկ	16	3616	1808	770	693	624	562	506	456	411	370
75	Սնվ. դող. սարք ԷԼ - 103	4	1568	784	336	303	273	246	222	200	180	162
76	Սնիչ ԷԼ -103-500x160-375	12	3612	1806	770	693	624	562	506	456	411	370
77	Սնիչ 400x125x240	2	3888	1944	828	746	672	605	545	491	442	398
78	Հոսանացուցիչ М-35-75	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
79	Միաց կոմպես. հանար	2	94	47	22	20	18	17	16	15	14	13
80	Անջատիչ Ռ220А-13	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
81	Անջատիչ Ռ220А-13-0.5	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
82	Ռեստր/գտիչ	5	1660	830	356	321	289	261	235	212	191	172
83	Փական ՈՈՒ-65	4	1568	784	336	303	273	246	222	200	180	162
84	Փական ՈՈՒ-100	3	111	56	25	23	21	19	18	17	16	15
85	Փական ՈՈՒ-25	44	2596	1298	554	499	450	405	365	329	297	268
86	Փական ՈՈՒ-150	2	278	139	61	55	50	45	41	37	34	31
87	Փական ՈՈՒ-40	8	2496	1248	533	480	432	389	351	316	285	257
88	Փական ՈՈՒ-32	12	192	96	43	39	36	33	30	27	25	23
89	Փական Ֆ-80	1	3000	1500	639	576	519	468	422	380	342	308
90	Փական Ֆ-100	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
91	Հեռադիտակ փական x25	3	93	47	22	20	18	17	16	15	14	13
92	Հեռադիտակ փական 100	1	1050	525	225	203	183	165	149	135	122	110
93	Հեռադիտակ փական 40	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
94	Հեռադիտակ փական 50	1	550	275	119	108	98	89	81	73	66	60
95	Ավտոմատ փական ВС200	18	3420	1710	729	657	592	533	480	432	389	351
96	Միացի բլիկ ԱՈՒ-200	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
97	Միաց	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
98	Տրի պոմպի աբր. անիվ	4	188	94	42	38	35	32	29	27	25	23
99	Ամոնիակային պոմպ	3	93	47	22	20	18	17	16	15	14	13
100	Ռեստրի հարթացուց.	3	93	47	22	20	18	17	16	15	14	13
101	Փականի միացման սարք Ֆ-150	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
102	Սարքավորում ТТМ-4А	1	1478	739	316	285	257	232	209	189	171	154
103	Ներքնակ. վերելակի հանար, փոքր	31	1302	651	279	252	227	205	185	167	151	136
104	Ներքնակ. վերելակի հանար, մեծ	31	1488	744	318	287	259	234	211	190	171	154
105	էլ.շարժիչ	2	464	232	101	91	82	74	67	61	55	50
106	Առանձակալ	4	4800	2400	1022	920	828	746	672	605	545	491
107	Փական Ֆ-50	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
108	Փական Ֆ-25	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
109	Փական	5	35	18	9	9	9	9	9	9	9	9
110	Առանձակալ	13	2483	1242	530	477	430	387	349	315	284	256
111	Փական Ֆ-20	4	368	184	81	73	66	60	54	49	45	41
112	Փական Ֆ-15	4	368	184	81	73	66	60	54	49	45	41
113	Փական Ֆ-100	4	12000	6000	2552	2297	2068	1862	1676	1509	1358	1224
114	Փական Ֆ-25	2	130	65	30	27	25	23	21	19	18	17

Մասնավորեցում

115	Փական Ֆ-65	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
116	Փական Ֆ-100	2	6000	3000	1277	1150	1035	932	839	756	681	613
117	Ավտոմաս սարք	17	2040	1020	436	393	354	319	288	260	234	211
118	Հրեց ոլոգոյակ	44	1364	682	292	263	237	214	193	174	157	142
119	Հրեց սարք	9	2034	1017	434	391	352	317	286	258	233	210
120	Կոմոդես. դռան փական	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
121	Տեռմաչափ ВСКМ	5	1475	738	315	284	256	231	208	188	170	153
122	էլ. ջեռմաչափ ԷԿՍ24-ՈՒ	4	1480	740	316	285	257	232	209	189	171	154
123	էլ. ջեռմաչափ В316РС	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
124	Տեռմաչափ Մթ 3А-ՈՒ	19	2318	1159	495	446	402	362	326	294	265	239
125	Տեռմաչափ Մթ 3А	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
126	Լոգոմեսր А-64	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
127	Դռան ձգան	8	184	92	41	37	34	31	28	26	24	22
128	Դռան բռնակ	5	460	230	99	90	81	73	66	60	54	49
129	Լամպ ԱԲ-40	376	2256	1128	482	434	391	352	317	286	258	233
130	Բարձրախոս	1	277	139	60	54	49	45	41	37	34	31
131	Տրաչափ հրեց	54	4968	2484	1058	953	858	773	696	627	565	509
132	Վերելակ անկ երկաթ	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
133	Անջատիչ	5	460	230	99	90	81	73	66	60	54	49
134	Վառոդակ էլ. РШ-30	64	5888	2944	1254	1129	1017	916	825	743	669	603
135	Բռնակ դռան /լամպ/	3	276	138	60	54	49	45	41	37	34	31
136	Կոակվատիչ	4	188	94	42	38	35	32	29	27	25	23
137	Կասետոն	10	1750	875	373	336	303	273	246	222	200	180
138	Փականներ РШО150х250	18	3168	1584	675	608	548	494	445	401	361	325
139	Փական առաձգ.	4	368	184	81	73	66	60	54	49	45	41
140	Կափույրի կողպեք	2	94	47	22	20	18	17	16	15	14	13
141	էլ. զանգ	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
142	Անջատիչ	3	93	47	22	20	18	17	16	15	14	13
143	Կափույրի կողպեք	3	93	47	22	20	18	17	16	15	14	13
144	Շտանգ	4	92	46	22	20	18	17	16	15	14	13
145	Ֆանետա	5	85	43	20	18	17	16	15	14	13	12
146	Վահանակ	8	1664	832	356	321	289	261	235	212	191	172
147	Խողովակ 255	54	1404	702	300	270	243	219	198	179	162	146
148	Հակագազի սարք	5	750	375	162	146	132	119	108	98	89	81
149	Մեսաղյա զանկ	15	2205	1103	470	423	381	343	309	279	252	227
150	Հալիպերի ոլաեր /զգագաոմկա տարբեր չափսի/	100	7400	3700	1575	1418	1277	1150	1035	932	839	756
	Առգաձաբ առարկաներ											
151	Սանտ. ոլայուսակ	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
152	Պաբտոյան գլխարկ	5	900	450	193	174	157	142	128	116	105	95
153	Սուրճ	2	94	47	22	20	18	17	16	15	14	13
154	Ռեշինի գոտի	23	1104	552	237	214	193	174	157	142	128	116
155	Աղբարկղ ծալիր	7	280	140	61	55	50	45	41	37	34	31
156	Հակագազ	97	14550	7275	3095	2786	2508	2258	2033	1830	1647	1483
157	Բառարան	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
158	Սուրճ	2	400	200	87	79	72	65	59	54	49	45
159	Բանալիների հավաքածու	1	1100	550	235	212	191	172	155	140	126	114
160	Մեղան մեկ տումբանի	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
161	Երկաթե ոլսիարան	1	5000	2500	1064	958	863	777	700	630	567	511
162	Երկաթ. սեյֆ	1	20000	10000	4253	3828	3446	3102	2792	2513	2262	2036
163	Աքոռ	1	94	47	22	20	18	17	16	15	14	13
164	Մեղան երկու տումբանի	1	3000	1500	639	576	519	468	422	380	342	308
165	Մեղան մեկ տումբանի	3	6000	3000	1277	1150	1035	932	839	756	681	613
166	Աքոռ	3	234	117	52	47	43	39	36	33	30	27
167	Հաշվիչ/հիայտից/	5	90	45	21	19	18	17	16	15	14	13
168	Աքոռ	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
169	Հաշվիչ/հիայտից/	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
170	Երկաթյա բաք 2.5խ.մ	1	277	139	61	55	50	45	41	37	34	31
171	Մեսաղյա դաշտան	1	277	139	61	55	50	45	41	37	34	31
172	Երկաթյա ոլսիարան 54Ա	1	2125	1063	454	409	369	333	300	270	243	219
173	Աղբարկղ	2	94	47	22	20	18	17	16	15	14	13
174	Կափույր	1	185	93	41	37	34	31	28	26	24	22
175	Վառագույրի կախիչ	15	645	323	139	126	114	103	93	84	76	69
176	Մեսաղյա դաշտան	1	185	93	41	37	34	31	28	26	24	22
177	Երկաթյա սեյֆ	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
178	Երկաթյա ոլսիարան	12	60000	30000	12756	11481	10333	9300	8370	7533	6780	6102
179	Վանկա	2	370	185	81	73	66	60	54	49	45	41
180	Երկաթյա դաշտան	1	370	185	81	73	66	60	54	49	45	41
181	Գրի ոլսիարան	1	3000	1500	639	576	519	468	422	380	342	308
182	Աքոռ	3	183	92	41	37	34	31	28	26	24	22
183	Երկաթյա ոլսիարան	1	5000	2500	1064	958	863	777	700	630	567	511
184	Հեռախոս	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
185	Կափույր	1	185	93	41	37	34	31	28	26	24	22
186	Բազկաթոռ	1	185	93	41	37	34	31	28	26	24	22
187	Հաշվիչ/հիայտից/	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
188	Աղբարկղ	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
189	Կոմուսատոր	1	4158	2079	886	798	719	648	584	526	474	427
190	Վառագույրի կախիչ	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
191	Մեղանի երկու տումբ.	1	185	93	41	37	34	31	28	26	24	22
192	Տումբոչկա	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
193	Կափույր	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
194	Տումբոչկա	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
195	Աքոռ	4	8000	4000	1701	1531	1378	1241	1117	1006	906	816
196	Գրի կոլբա		462	231	100	90	81	73	66	60	54	49
197	Մեղան լաբերատոր		277	139	61	55	50	45	41	37	34	31
198	Կոեռ տեխ.	1	277	139	61	55	50	45	41	37	34	31
199	Հակագազ	1	554	277	119	108	98	89	81	73	66	60
200	Մեղանի երկու տումբ.	1	185	93	41	37	34	31	28	26	24	22
201	Գրադարան	1	739	370	160	144	130	117	106	96	87	79
202	Հաշվիչ/հիայտից/	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
203	Բաք երկաթյա	1	554	277	119	108	98	89	81	73	66	60
204	Մեսաղյա դաշտան	1	463	232	101	91	82	74	67	61	55	50
205	էլ. տաքացուցիչ/ելեկտրիկ/	1	8291	4146	1765	1589	1431	1288	1160	1044	940	846
206	Պոմպ с798	1	647	324	139	126	114	103	93	84	76	69
207	Հակագազ Բ-2	3	93	47	22	20	18	17	16	15	14	13
208	Ատոնատ. սարք	1	2038	1019	435	392	353	318	287	259	234	211
209	Երկաթյա տնակ	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
210	Հակագազ	8	464	232	101	91	82	74	67	61	55	50
211	Պոմպ 45/30	1	739	370	160	144	130	117	106	96	87	79
212	Խոհանոց. գնե ՊԼՍ-5	1	5359	2680	1142	1028	926	834	751	676	609	549
213	էլ. տաքացուցիչ	1	1386	693	297	268	242	218	197	178	161	145
214	էլ. տաքացուցիչ	1	610	305	132	119	108	98	89	81	73	66
215	Մեղան նեռվալ	2	554	277	119	108	98	89	81	73	66	60
216	Յուղի պոմպ Բ-110	2	464	232	101	91	82	74	67	61	55	50
217	Գրի պոմպ	4	280	140	61	55	50	45	41	37	34	31
218	Տնակի ծանկոց	1	370	185	81	73	66	60	54	49	45	41

Աճուրդները կանցկացվեն դասական (գնի ավելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 11:00-ին «Աճուրդի կենտրոն» ոչ առևտրային կազմակերպությունում (հասցեն՝ ք.Երևան,Դ.Անհաղթի 23 /4-ոդ հարկ):

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 10 տոկոսի չափով: Տվյալ լոտի աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդը չի անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել մասնակցության իրավունք ձեռք բերած մասնավորեցման սուբյեկտները կամ նրանց կողմից լիազորված անձիք:

Աճուրդին մասնակցելու իրավունք են ձեռք բերում մասնավորեցման այն սուբյեկտները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար մինչև աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք. Երևան, Դ.Անհաղթի 23 /4-ոդ հարկ) ներկայացրել

- աճուրդի մասնակցության հայտը,
- աճուրդի մասնակցության վճարի անդորագիրը՝ առաջին աճուրդի մասնակցության վճարի չափն է՝ 20 դրամ, մուտագրման հաշիվն է՝ թիվ 1 տեղական գանձապետական բաժանմունքի աճուրդի մասնակցության նախավճարի դրամային թիվ 900013145025 հաշիվը (յուրաքանչյուր հաջորդ աճուրդի համար աճուրդի նախավճարը հաշվարկվում է տվյալ աճուրդի մեկնարկային գների միջին թվաբանականի 5 տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան նվազագույն մեկնարկային գին ունեցող գույքի մեկնարկային գնի 50 տոկոսը),
- իրավաբանական անձիք ներկայացնում են հիմնադիր փաստաթղթերի պատճենները:

Աճուրդի մասնակիցները պետք է ձեռք բերեն աճուրդի մասնակցի տոմս, որի գինն է 5000 դրամ,աճուրդի մասնակից չհամարվող անձանց (դիտորդների) տոմսի գինն է 3000 դրամ:

Մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ:

Աճուրդը անցկացնում է աճուրդավարը, որը հրապարակում է վաճառվող գույքը բնութագրող ցուցանիշները, գույքի մեկնարկային գինը, աճուրդային քայլի չափը: Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իր տոմսին համապատասխանող համարը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով գույքը ձեռք բերելու մասին: Յուրաքանչյուր գնորդ կարող է գույքի գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով կամ քայլի չափից ոչ պակաս գումարով: Աճուրդավարը աճուրդը շարունակում է այնքան ժամանակ քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկած մեկ թեկնածու: Գույքի առավելագույն արժեքն առաջարկած թեկնածուն, աճուրդավարի կողմից առաջարկված գինը 3-րդ անգամ հայտարարելուց հետո, համարվում է աճուրդի հաղթող եւ պարտավոր է 30 րոպեի ընթացքում ներկայացնել մասնակցի տոմսն ու վճարել իր առաջարկած գնի առնվազն 5 տոկոսի չափով գումար եւ ստորագրել աճուրդի մասին արձանագրությունը: Վերը նշված պարտավորությունները չկատարելու դեպքում նրա մուծած մասնակցության վճարը չի վերադարձվում եւ նա զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից եւ դուրս է հրավիրվում դահլիճից: Այդ դեպքում գույքի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից:

Աճուրդի մասին արձանագրությունը ստորագրելուց հետո, որպես աճուրդում հաղթող ճանաչված մասնակից, նրան տրվում է վճարման հանձնարարագիր՝ մնացած վճարման ենթակա գումարը սահմանված ժամկետում՝ 10 օրվա ընթացքում վճարելու համար: Սահմանված ժամկետում նշված վճարումը չկատարելու դեպքում իր կողմից վճարած մասնակցության վճարը եւ իր առաջարկած գնի առնվազն 5%-ի չափով գումարը հետ չի վերադարձվում, իսկ աճուրդը համարվում է չկայացած:

Գույքին ծանոթանալու համար զանգահարել (261) 2-72-20 հեռախոսահամարով: Գույքի գտնվելու վայրը՝ ք.Սեւան, Գագարինավան:

Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

Լրացուցիչ տեղեկությունների համար (յուրաքանչյուր աճուրդի նախավճարի չափի մասին) կարող եք դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, զանգահարել 23-73-00 հեռախոսահամարով, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխությունների ու լրացումների մասին տեղեկատվությունը կհրապարակվի այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդների մասին սույն հրապարակային ծանուցումը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական գույքի կառավարման վարչություն

Ստուգատեսում

Դ էջից

ողորմածությունը, երկոտդ հայր դարձավ որբ մուսուլմանի համար, կնքեց նրան Կոնստանտին անունով (սխալ է, տիտ լիներ Գեւորգ) ու տվեց նրան Հայվազովսկի ազգանունը՝ «Գայզով» բառից, որ թուրքերեն նշանակում է «քարտուղար»: Անտեղյակի եզրահանգում, հին ու նոր բառարանների վկայությամբ թուրքերենում այդ տիպի բառ չկա, ոդեգրվածին Հայվազովսկի ազգանուն տալ չէին կարող, քանի որ այդ ազգանունը դեռեւս գոյություն չուներ: Փոկարար հայը կոչվում էր Գրիգոր Այվազ (Այվազյան):

Նկարչի եղբայր Գաբրիելը լեհ պատմաբան Բարոնչին հղած նամակում (6 փետր. 1875) նշել է, որ իրենց հայրը ծնվել է Ստանիսլավ քաղաքում (այժմ Իվանո-Ֆրանկովսկ) 1765-ին կամ 1766-ին: Իսկ Մոլդովայի Սուչավա քաղաքում աստող իրենց ազգական Պողոս Այվազին հասցեագրած նամակում (25 մարս,1877) գրել. «... Իրենց հայրը Մոլդովայից Ռուսաստան անցնելով՝ առել է Կոնստանտին Գրիգորյան (Գրիգորի որդի) անունը, իսկ յուր Այվազ կամ Հայվազ ազգանունը փոխել է Հայվազովսկիի, որովհետեւ Ռուսաստանի մեջ այն ժամանակները կային Այվազով անունով ուրիշ ազգատոհմեր...».6 Այսինքն հայրը ցանկացել է, որ իր ազգանունը ուրույն հնչողություն ունենա եւ՝ վերցնելով լեհական «սկի» վերջածանցը, դարձել է Հայվազովսկի. (Գայվազովսկի):

Ըստ Կուզմինի պատմության՝ ընթերցողը թող փորձի մի պահ պատկերացնել.

... Ահեղ կռվի ժամանակ կյանքը վտանգել, փրկել ու աղա որդեգրել մի մանչուկի, իհարկե, նշանակում է լինել արտակարգ մարդ, արտակարգ որդեգիր, բոլոր հայրերից բարձր: Այդպիսի հայր ունեցող զավակը ինչպիսի՞ սեր ու երախտագիտություն պիտի տածեր իրեն կյանք պարգեւած փրկարարի հանդեպ: Մահվան ճիրաններից խլված երեխան կրթվել ու դաստիարակվել է հայ ընտանիքում, տիրապետել է վեց լեզվի, ապա 35 տարեկանում հաստատվել է Թեոդոսիայում, որի բնակչության զգալի մասը հայեր էին, ամուսնացել է հայուհու հետ, ունեցել երկու դուստր եւ երեք որդի: Գրիգոր (ըստ՝ փրկարար հոր), Գաբրիել եւ Հովհաննես ու ամբողջ ընտանիքով դավանել են քրիստոնեական կրոնին... Նույն ոգով են ադրել եւ որդիները՝ հայ եկեղեցու նվիրյալ ծառա Գաբրիելն ու որդես ուսուցչի՝ նրա խորհուրդներին հետեւած նկարիչ եղբայրը:

Որեմն, ըստ Կուզմինի՝ բարի հայի հերոսության շնորհիվ է աշխարհին պարգեւվել հանճարեղ ծովանկարիչ: Եվ եթե այդ գրից մեկնելով են մոսկովյան մեր գործընկերները Այվազովսկուն նվիրված հաղորդում ստեղծել, ապա ինչո՞ւ են ավելորդ գտել չհիշելու մարդասիրության արտակարգ օրինակ ցույց տված հերոսին (հրաշալի փաստ, հակառակ կառավարողների, ժողովուրդները միշտ իրար բարեկամ են...):

Հաղորդումից եզրակացնում ես, որ Կուզմինի պատմությունը հավաս չի նեղնչել նաեւ Թեոդոսիայի Այվազովսկու անվան պատկերասրահի տնօրենին: Նրա ելույթից ստացվեց, թե Այվազովսկու «հեռավո՞ր-հեռավոր նախնիները թուրք են եղել»: Բայց գիտական հիմնավորում չունեցող, բանավոր լեգենդը ինչպե՞ս կարելի է միտնավոր ունկնդիրներին մատուցել, մի կողմ թողնելով նրա կենսագրության շատ ավելի կարեւոր փաստեր եւ կամ, իրոք ինչ նպատակ կարող է հետապնդել «հեռավոր-հեռավոր նախնիներ» հիշելու պարագան տվյալ հաղորդման մեջ:

Հետաքրքրական է, եթե Կուզմինը գրելու լիներ նկարչի հարազատ եղբոր՝ հայ եկեղեցու նշանավոր դեմքերից մեկի, նույն հորից ու նույն մորից ծնված Գաբրիել Այվազյանի մասին, նրան ինչպե՞ս պիտի ներկայացներ: Կասկածից վեր է, որ եթե ծովի երգչի վաստակած համաշխարհային համբավն ու մեծությունը չլինեին, իհարկե ավելորդ պիտի համարվեր նրա ծագման մասին պատմություններ հորինելը, կամ նույնիսկ պարզապես նրանով հետաքրքրվելը: Իր կազմած գիրքը սկսելով «Ռուսական սարհնայի» առաջին տողերով եւ «հիմնավոր» համարելով ոմն մի Բլոտդվայի արտահայտությունը եւ մինչեւ լեգենդի իր տարբերակին անցնելը՝ Կուզմինը անմիջապես եզրահանգել է. «... այսպիսով Այվազովսկու երակներում հոսել է թրքական արյուն, չնայած մեզ մոտ, չգիտես ինչու, ընդունված է համարել նրան զտարյուն հայ»: Հետաքրքրական է, մարդկային արյունների գիտակ Կուզմինը եթե լսած լիներ, որ իր մեծ հոր մեծ հայրը թուրք է եղել, ո՞ր չափով իր երակներում ոչ ռուսական արյուն պիտի զգար: Պարզից էլ պարզ է, որ Կուզմինը ոչ պատահական հրազեկ է եղել Այվազովսկու հայկական ծագմանը, սակայն խուսափել է իմացածը բացատրել, թեկուզ եւ, ինչպես կրկնել է, հայուհի է եղել նկարչի մայրը: Ինչո՞ւ... Իր արարքի՝ կազմած գրքի արագ թողարկման բուն պատասխանը մեզ կարող է տալ միայն ժամանակը: Անսպասելի փոփոխված քաղաքական մթնոլորտը շատ պահանջ էր թելադրել՝, ռուս մեծ նկարչի վրայից թոթափել հայկական ամեն ինչ եւ՝ ավելի ռեալ դարձնելով նրա կաղը «թուրք նախնիների հետ» հաստատել նրա տեղը «պուշկինյան» շարքում... Մի խոսքով Այվազովսկուն «փրկել»...

Այն շրջանում զարմանալիորեն Ռուսաստանն ընդունել էր հակահայկական քաղաքականություն: Տարածվում էր «Հայաստանն առանց հայերի» լոզունգը, ապա՝ հայկական դպրոցները փակելու եւ եկեղեցիների ունեցվածքը բռնագրավելու հրաման էր արձակվել... Այդ մահաբեր որոշումը՝ առաջինը պետականորեն քրիստոնեություն ընդունած փոքրաթիվ ժողովրդի հանդեպ, չէր բխում քրիստոնեական մեծ տերության հումանիստական էությունից, այլ սատարվում էր բարձր պաշտոններ զբաղեցնող, ռեակցիոն, ինչ-որ մութ նպատակների լծակ, 1896-ին Կովկասի կառավարիչ նշանակված եւ հայության, հայ մշակույթի ու եկեղեցու դեմ դաժան հալածանք սկսած Գոլիցինը: 1897-ին լույս է տեսնում «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» Ռուսաստանի հանդեպ հայության ողջ սերն ու նվիրվածությունը ամփոփող հատորը, որին իր գծանկարներով մասնակցում է Այվազովսկին: Նույն տարում նկարիչը Արեւմտյան Հայաստանում տեղի ունեցած ջարդերը ներկայացնող կտավներ է ցուցադրում՝ հուսալով իր մեծ հայրենիքի բարենպաստ միջամտությունը: Արվեստագետի ամենօրյա հոգսն է դառնում Թեոդոսիա հասած իր փախստական հայրենակիցներին աղաստանելը: Հենց այդ ժամանակ էլ՝ հետեւում է մի նոր, թիկունքից հասցված անսպասելի հարված...

Դեռ «չփրկված» Այվազովսկու սիրտը ցնցվում, ալեկոծվում է: Բացահայտ բողոքով նա «ջախջախում է Ռուսաստանի եւ անձամբ արտաքին գործոց նախարարի քաղաքականությունը7 (դա իհարկե թույլ էր տալիս իր պետական խորհրդական լինելու պարագան): Նա հայտարարել է նաեւ որ «Ամոթալի է երես շրջել քո սեփական ժողովրդից, առավել եւս այնքան փոքրաթիվ ու ճնշված»:8 Իսկ էջմիածին, Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկին հղած նամակում գրել է այսպես. «Խորին կսկիծով վշտացած է սիրտս անբախտ հայոց չլսված, չտեսնված կոտորածով: Սրբազնագույն Հայր, Դուք այնտեղ, մենք այստեղ, կրկնենք ու կողքանք մեր բվառ, կորստյան մատնված հայոց վրա եւ կխնդրենք Աստվածային գթություն»:9 Այվազովսկու, ճանաչված հայ գործիչների ինչպես եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի ցարին ուղղած բողոքը որոշակի նշանակություն ունեցավ: Եվ եթե քաղաքական այդ իրավիճակը երբեմն տեւեր, փոփոխված ու ողջամիտ վերաբերմունք չարթնանար, հայ ժողովրդի հինավուրց բնօրրան Հայաստանից մնացած փոքր տարածքն էլ կարող էր վերանալ աշխարհի քարտեզից:

Մեծ նկարչի ու մարդասերի հոգեկան ապրումներն արտացոլում գտան ոչ միայն հայոց ողբերգությանը նվիրված կտավներում, այլեւ վերջին նշանավոր ծովանկարներում: Վերջալույսի ճառագայթների դիմաց, ժայռերի վրա («Նավաբեկություն սբ. Հեղինե կղզում», 1898), ասես ինքը նկարիչն է անշարժացել տարերքի առջեւ, միայնակ ու անհոկս, հայացքը՝ ազատ սավառնող արծվին: Այվազովսկու ժառանգության գագաթներից մեկը՝«Ալիքների մեջ» մեծադիր նկարը (1898) ընկալվում է իբրեւ հեղինակի փոթորկված ներաշխարհի պոռթկում: Փրկության ու ազատության գաղափարն է ներդված նաեւ փոթորկի դեմ պայքարող մարդկանց նոր նկարաշարում (1899) եւ Բայրոնի այցը Մխիթարյաններին հայտնի կտավում: Տավի ու ցասման հոգեբերի արդյունք է նաեւ կյանքի վերջին օրը՝ 1900 թ. մայիսի 2-ին նկարած «Նավի պայթյունը» անավարտ գործը...

Ալեհեր նկարչի այդ վիճակն անկասկած արտացոլել է իր հանկարծակի, անսպասելի մահը:

Նկարչի հոգին կյանքում

Ֆրանսիական ժողովրդական առածն ասում է՝ հարձակվիր,հարձակվիր, բայց անպայման մի բան բաց կթողնես: (Հիշենք 1887-ի գրքույկում հայտնված այն միտքը, թե Այվազովսկու նախնիների հետագա ճակատագիրն անհայտ է): Կուզմինն էլ «բաց է թողել» մի անհերքելի ճշմարտություն. «Այվազովսկու նախնիները անցյալ դարում Թուրքիայից գաղթել են Գալիցիա»: Այո, նրանք եղել են թրքահոլաստակ, բայց ո՛չ դուրանի հետեւորդ: Այլապես, ինչու՞ պիտի փախչեին երկրից: Իսլամն ընդունող հայերին ներին:

Լեհաստանի հարավում, 18-րդ դարում ստեղծվեց եվրոպական առաջին եւ ամենամեծ հայկական գաղութը: Խորհրդանիշը Լվովի նշանավոր եւ այսօր նորից կյանք ստացած եկեղեցին է: Հայերն այստեղ են գաղթել Այրարատյան նահանգի Բագրատունյաց մայրաքաղաք Անիից, որոնց թվում եւ Այվազովսկու նախնիները: Այստեղ հանգրվան գտան նաեւ խաղաքաղաքական վաստակ պայմանների պատճառով Ղրիմից հեռացած բազում հայ ընտանիքներ: Դա տեղի է ունեցել 1475-ին, երբ օսմանցի Ահմադ Կեսիկ փաշան գրավում է Թեոդոսիան: Ճենովացիները հանձնում են քաղաքը: Կրոնափոխություն չընդունած հայերը ենթարկվում են սպանդի:

14-15-րդ դարերում Ղրիմի Թեոդոսիա քաղաքը՝ Կաֆֆան, եղել է հայ մշակույթի խոշոր

Նկարչի եղբոր՝ Գաբրիել արքեպս. Այվազովսկու դիմանկարը, 1880 թ.

Նկարչի կնոջ՝ Աննա Բուռնազյանի դիմանկարը, 1882 թ.

կենտրոն: Այստեղ գործել է 27 հայկական եկեղեցի, ինչպես եւ՝ «Սուրբ Խաչ» նշանավոր վանքը: Զարգացում են ադրել հայկական ճարտարապետության, ժողովրդական ու ձեռագրային արվեստի ավանդույթները: Հայ գեղանկարչության պատմության մեջ հատուկ տեղ է գրավում Ղրիմի մանրանկարչության դպրոցը: Բազմազգ Թեոդոսիան իր շրջակա հայաբնակ գյուղերով երկրորդ հայրենիք էր դարձել շատ ու շատ հայերի համար եւ իզուր չէ, որ այդ վայրերը ճենովական աղբյուրներում կոչվել են «Ծովափնյա Հայաստան» (Armenia maritima):

1774-ին, Քյուչուկ-Կայնարջիի դաշնագրից հետո, Ղրիմը վերջնականապես անցնում է ռուսական տիրապետության տակ, եւ կրկին (այլ ազգություններ հետ) բնավայր դառնում հայերի համար: Լեհաստանից, Գալիցիայից, Մոլդովայից, Բուկովինայից Ղրիմ մեկնող հայերի թվում է լինում եւ Այվազովսկու առեւտրական հայրը: Նոր, արդեն ռուսական միջավայրին ավելի հարմարվելու նպատակով իր անունը նա փոխել էր Կոնստանտինի, իսկ ազգանունը Հայվազովսկի: Եվ որովհետեւ ռուսերենում «Հ» տառ չկա, այն հնչեց Գայվազովսկի:

1840-ին երկար ժամանակ իրար չտեսած որդիները՝ Գաբրիելն ու Հովհաննեսը ողջագուրվում են Վենետիկի սբ.Ղազար կղզու հայկական Մխիթարյան միաբանությունում: Հովհաննեսը որպես նկարիչ-թոշակառու եկել էր Ս.Պետերբուրգից, իսկ Գաբրիելը (1812-1880) պատանի հասակում ընտրվել էր ուսանելու եկեղեցական դպրոցում եւ արդեն պատմաբան էր ու խմբագրում էր «Բազմավէպ» հայտնի ամսագիրը: Հենց այստեղ էլ եղբայրներն իրենց ազգանունը ավելի բարեհնչուն դարձնելու նպատակով որոշում են գրվել կամ Այվազովսկի, կամ Այվազյան: Գաբրիելը, որպես հայ եկեղեցական, կյանքում առավելապես հանդես է եկել Այվազյան ազգանունով: Իսկ եղբայրը...

Այվազովսկի ազգանունը մոտ էր ռուսական հնչողությանը: Եվ որպես Ռուսաստանի քաղաքացի եւ որպես ռուս նկարիչ, բնական էր, որ ամենուրեք ներկայանար այդ ազգանունով (հայերեն եւ լեհերեն բաղադրիչների զուգակցմամբ ստեղծված միակ ազգանունը ողջ Ռուսաստանում): Սակայն, որոշ նկարների տակ ու հայերեն գրած նամակները նկարիչն ստորագրել է՝ «Հովհաննես Այվազյան»:

Հովհաննեսը (Իվանը, Օնիկը, Վանյան...) իր նախնական կրթությունը ստացել է Թեոդոսիայի հայկական ծխական դպրոցում: Բնածին տաղանդը նրան արագ ճանաչում է բերել: Պատանուն սիրել եւ օգնել է Ղրիմի նահանգապետ դարձած, սենատոր Ալ.Կազնաչեեւը: Ս.Պետերբուրգի ակադեմիան թոշակ է տվել նրա տաղանդին: Եվրոպայից ակադեմիայի տնօրինությանը հղած նամակներում զգացվում են նկարչի հավատարմությունն ու երախտագիտությունը հանդեպ իր կրթօջախը, հանդեպ իր դրսական տերությունը: Իսկ չորս տարի անց եվրոպական հռչակ ձեռք բերած ուժանկեցից ետ Ս.Պետերբուրգ վերադարձած Այվազովսկուն շնորհվում է ակադեմիկոսի կոչում: Տարի հրամանով նա նշանակվում ծովային Գլխավոր շտաբի նկարիչ: Այնուհետեւ նկարիչն արժանանում է բարձր շահանշանների, ավելի ուշ նշանակվում պետական խորհրդական: Այսպիսով, Ռուբենսի նման նա փաստորեն ներգրավվել էր պետական վերնախավի մեջ: Այդ ամենը ռուս մեծ, բայց ծագմամբ ոչ ռուս նկարչի համար պարտավորեցնող ենթատեքստ էլ կարող էր ունենալ: Մինչեւ ոտքսուն տարեկանը նա ամենայն բարեխղճությամբ կատարում է իր պարտականությունները, ինչպես եւ բարձր ծառայության կոչված իր հայրենակիցներից շատերը՝ գեներալներ Լորիս Մելիքովը, Լազարեւը (Լազարյան), Սերեբրյակովը (Արծաթբանյան), Տեր-Ղուկասովը...

Բայց, մոռանալ՝ թե ո՞վ է ինքը, ի՞նչ է իբրեւ արվեստագետ, իհարկե, չէր կարող:

Այվազովսկին ռոմանտիկ, ազատաբաղձ հոգեբերի նկարիչ էր: Նրա սիրտը առաջադեմ Ռուսաստանի հետ էր: Իր համար այդ Ռուսաստանը Պուշկինն էր, Գոգոլը, Կռիլովը, Բրյուլովը, Բելինսկին, Գլինկան, դեկաբրիստները, ավելի ուշ՝ Դոստոեւսկին, Ռեպինը, Կրամսկոյը... Նրա հոգուն մոտ էր պարզ ժողովուրդը եւ՝ ռուսը, եւ՝ ուկրաինացին, եւ՝ հույնը եւ՝ թաթարը... «Այվազովսկին թեպետ հայրենասեր հայ էր, բայց միշտ պատրաստ էր օգնել ամենքին... առանց կրոնի ու ազգի խտրության»,- դեռ կենդանության օրոք իր մասին գրել է Ս. Պետերբուրգի «Վեդոմոստ» թերթը: Նա առաջնորդվեց Կետարինը՝ Կետարին, Աստծունը՝ Աստծուն խորհրդով:

Անօրինակ փառքը, նյութական աղահովությունը, ցարական արքունիքը չկարողացան գայթակղել երիտասարդ նկարչին: Նա կարողացավ իրագործել իր որոշումը՝ հեռու ադրել Ս.Պետերբուրգից, եւ հաստատվել հայրենի քաղաքում:

Նկարչին կանչում էր կարոտը, մանկության, Սեւ ծովի, վերջապես մոր կարոտը...: Նա Թեոդոսիա էր գնում, որպեսզի մոտ լիներ իր հայրենակիցներին, իր ժողովրդին (այս մասին երբեւէ չի գրվել Այվազովսկուն նվիրված ռուսական ոչ մի գրքում): Դեռ ուսանողական տարիներին, Հովհաննեսը միշտ ունկնդիր է եղել կիրակնօրյա պատարագներին Նեակու պողոսայի վրա գտնվող (եւ այսօր նորից գործող) հայկական եկեղեցում: Ս.Պետերբուրգի հայ հասարակայնության, Լազարեւների (Լազարյանների) ընտանիքի հետ ունեցած շփումներից (այդ են վկայում պատանի Հովհաննես Լազարեւի երկու դիմանկարները) Այվազովսկուն քաջ հայտնի էին հայ ժողովրդի դարավոր ճնշման պատմությունը, 19-րդ դարում զարթոնք ապրող հայոց ազգային ազատագրական շարժումները (մասնավորապես նաեւ՝ հույն ժողովրդի), որոնց հաջողությունը, ինչպես իր ժողովրդի մյուս առաջադեմ զավակները, կապում էր միայն Ռուսաստանի հետ: Իբրեւ պետական ճանաչում վայելող անձ, նա գիտակցում էր նաեւ իր որոշակի դերը այդ հարցում: Ահա թե ինչու 1845-ին, դեռ Թեոդոսիա չհասած, Մոսկվայից նամակ է գրում էջմիածին՝ Ներսես կաթողիկոս Աշտարակեցուն (նրան ծանոթ էր Ս.Պետերբուրգից)՝ հայտնելով իր պատրաստակամությունը ծառայելու հարազատ ժողովրդին ու մշակույթին:10

Մինչ այդ հարցի մեջ խորանալը՝ հիշենք 1873-ին Այվազովսկին ձեռնարկում է գեներալ Պ.Ս.Կոսլարեւսկու (1782-1851) հիշատակին իր նախագծով մատուռի կառուցումը: Հարց է ծագում. ինչը կարող էր մղել այդ քայլին, Կոսլարեւսկին համարվում էր Կովկասի հերոս, նրա շնորհիվ էին ազատագրվել Ղարաբաղը, Ախալքալաքը, Մեղրին, Արաքս գետի հայկական հողատարածները... (ի դեմ գեներալի այս հաղթանակները Կուզմինը ավելորդ է համարել հիշել եւ հանել է գրքից):

1877-ին ռուսական զորքերի կողմից, զորավար Լորիս Մելիքովի ղեկավարությամբ հայոց հին մայրաքաղաքներից մեկի՝ Կարսի գրավումը

Տես էջ 9

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Ստուգատեսում

Ե էջից

ցնծությամբ է ընդունում հայ ժողովուրդը: Ոգեւորված էր նաեւ Այվազովսկին: Նա հանդիպումներ է ունենում պատերազմի մասնակիցների, նաեւ Տեր-Ղուկասովի (Յալթայի հայկական եկեղեցին կառուցողի) հետ եւ ձեռնամուխ է լինում «Կարսի գրավումը գիշերով» մեծադիր կտավի ստեղծմանը: Թվում է՝ պարզ է ընթերցողին, թե ինչո՞վ էր խանդավառվել նկարչի հոգին: Այդ նկարի տեղն անհայտ է, գուցե եւ «չքացել է», ինչպես «չքացան» Կարսը, Առդահանն ու Արդվինը, որպես բոլշեւիկյան հեղափոխության հաղթանակի տուրք...

1853-56 թվականների ղրիմյան պատերազմի ընթացքում Այվազովսկին ծավալում է բոլորանվեր հայրենասիրական գործունեություն: Աղվեսաբան Վ.Սաասովը՝ դիմելով ռուս նկարիչներին, հորդորել է, որ պետք է օրինակ վերցնել Այվազովսկու հայրենասիրությունից... Շուրջ հարյուր տարի անց, Հայրենական պատերազմի ծանր օրերին Այվազովսկու նկարները Թեոդոսիայի թանգարանից շտապ բերվում են Երեւան: Ղրիմի ազատագրմանը նկարչին հատուկ հայրենասիրություն դրսեւորեց հայկական Թամանյան դիվիզիան... Բայց պատերազմից հետո Ղրիմում էլ հայ չմնաց եւ իբրեւ հայկական հիշատակ Թեոդոսիայում մնաց միայն սբ.Սարգիս եկեղեցին, Այվազովսկու՝ հայերեն եւ ռուսերեն արձանագրություն կրող գերեզմանով...

1857-ին Այվազովսկին շուրջ կես տարի ապրում է Փարիզում, հանդես գալիս անհատական ցուցահանդեսով: Ռուս նկարիչներից առաջինը նրան է շնորհվում «Պատվո լեգեոն» շքանշան: Բարեկամական սերտ կապեր են ստեղծվում կոմպոզիտորներ Դոնիցետտիի, Ռոսսինիի, նկարիչ Գյուստավ Դորեի, դերասանուհի Սառա Բեռնարի, նաեւ մարշալ Պելիսսեի հետ: Ցուցահանդեսով հիացած՝ Բոնապարտ 3-ը Այվազովսկուն հրավիրում է ընդունելության: Նոր լիցքեր ստացած նկարիչը համոզում է Փարիզում գործող, «Մասյաց աղավնի» հանդեսի հրատարակիչ եղբորը վերադառնալ տուն, աշխատել միասին: Նախ գալիս են Կոստանդնուպոլիս: Հայկական շրջանակներում նրանց հանդիպումները վերածվում են տոնի: Այդ օրերին իրեն ուղեկցող թուրքական պալատական կառույցների գլխավոր ճարտարապետին՝ Սարգիս Պալյանին է նվիրում մի պատկեր: Վերջինս իր հերթին այդ նկարն ընծայում է սուլթան Աբդուլ Ազիզին: Նկարչասեր սուլթանը հիացած, Պալյանի միջոցով նկարների պատվեր է հղում Թեոդոսիա: Տարիներ անց, Այվազովսկին հրավիրվում է Կ.Պոլիս, պարգեւատրվում «Օսմանիե» բարձր շքանշանով: Նկարչի վկայությամբ ինը սուլթանի համար նկարել է քառասուն գործ, որոնց մի մասը՝ իբրեւ նվեր: Նկար է նվիրել նաեւ հայ ճանդակագործ Երվանդ Ոսկանի ղեկավարությամբ հիմնված Կոնստանդնուպոլսի գեղարվեստական դպրոցին ու այլ մշակութային հաստատությունների:

Ուշ էլ ճանաչարհարել է Այվազովսկին, լինի Մոսկվան (այստեղ, արեւելյան լեզուների Լազարյան ինստիտուտին է նվիրել, այժմ Հայաստանի ազգային պատկերասրահում ցուցադրվող յոթ առաջնակարգ կտավներ), Նոր Նախիջեւանը (Ռոստով), կամ Թիֆլիսը, Թուրիան կամ Եգիպտոսը, Ֆրանսիան կամ ԱՄՆ-ը, միշտ հետաքրքրվել է տեղի հայ բնակչության կյանքով եւ հատկապես օգտակար դարձել դպրոցների, լուսավորության տարածման գործին: 1880-ին ընտրվել է այդ նպատակին կոչված «Հայկական միացյալ միությունների» նախագահության անդամ: Այվազովսկու հոչակին զուգորդված ազգանպաստ մեծ ծառայությունները նրա կերպարը հայ իրականության մեջ դարձնում են լեգենդար եւ մեծ հույսի խորհրդանիշ:

Այվազովսկու հանրօգուտ վիթխարի գործունեությունը երբեք չի կրել միակողմանի բնույթ: Այս խնդրում առաջնորդվել է իր ժողովրդի, նրա դարավոր կյանքի ծանր պայմաններում կուտակված բարեկամասեր ոգով: Թեոդոսիայում ոչ միայն հիմնել է հայկական դպրոց, տպարան,այլեւ կառուցել ու վերանորոգել է եկեղեցիներ, դրանց զուգահեռ հիմնել գեղարվեստական ուսումնարան, պատմահնագիտական թանգարան, խմելու ջուր հասցրել քաղաք, աջակցել երկաթգծի կառուցմանը: Եթե օգնել է հայ ուսանողներին, արժեքավոր պատմական գրքերի հրատարակմանը, կամ Թուրիայի հայությանը, արդա օգնել է նաեւ հույն ժողովրդին, Մինսկի, Օդեսայի, Շտուտգարդի, Ֆրանկֆուրտի կարիքավոր բնակիչներին, Նիցցայի մանկատանը, Առնո գետի հեղեղումից տուժած Ֆլորենցիայի քաղաքացիներին, Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի ուսանողությանը, «Կարմիր խաչին», Սեւաստոպոլյան ճակատամարտի վիրավորներին եւ զոհված մարտիկների ընտանիքներին: Ունենալ՝ օգնել կարողանալու համար. ռոմանտիկ ժամանակի իսկական որդու նկարագիր: Իհարկե, «ունենալու» հանգամանքն է սիրել նկարչին շատ «արտադրել» չհրաժարվել կրկնություններից ու իր կարողություններին զիջող գործերից, որոնք իր ստեղծած վեց հազար նկարների մեջ զգալի տոկոս են կազմում եւ ինքնադատության առիթ են տվել: Բայց վարպետության ուժը երբեք իր մեջ չի հանգել.«Ես մխիթարվում եմ միայն նրանով, որ առաջիկայում ավելի լավը կնկարեմ»,-գրել է նա «Մոսկովիտյանին» թերթի խմբագիր, ակադեմիկոս Ն.Պոգոդինին:[11]

Երբ կարդում ենք Այվազովսկու նամակներին ու պատկերացնում նրա գործունեության ու նպատակների սահմանները, զարմանալի է թվում, թե ինչպիսի ազնվությամբ ու դիվանագիտական նրբությամբ է նա ծառայել մարդասիրական իր գաղափարներին ու իր արվեստով ձգտել խաղաղության ու ժողովրդասիրության առաջյալ դառնալ Հյուսիսի ու Հարավի, Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ: Ծառայելով մարդկությանը՝ նա ծառայել է իր հառազատ ժողովրդին, իր բառերով ասած՝ «սիրեցյալ, կարոտյալ երկրին»:

Ստեղծագործող անհատը միշտ էլ փայփայում է քաղաք, սուրբ զգացումներ: Գոյություն ունեցող քաղաքական իրավիճակը, իր պաշտոնական դիրքը Այվազովսկի-արվեստագետին հաճախ ստիպել են հողարկել իր հույզերն ու մտքերը: Տարբեր պետությունների շահերներ կրող կրծքի տակ տուփել է մի ուրիշ սիրտ, արտաքնապես հանգիստ, հավասարակշռված, զվարթաղեմ նկարչի հոգում սրտում խորհրդածել է իր բուն ինքնությունը: Սա է անշուշտ պատճառը, որ ժամանակակիցները «բարդ նկարագիր են տեսել իր մեջ» եւ կամ «իր ողջ գթասրտությամբ,

«Խրիմյան Հայրիկը Մբ. Էջմիածնի շրջակայքում», 1895 թ.

բարյացակամությամբ ու կենսասիրությամբ հանդերձ, առանձնության սվերը պատել է Այվազովսկու ողջ կյանքը... եւ իր նկարագրի մեջ ինչ-որ բան մնացել է ոչ լիարժեք բացահայտված ու ըմբռնելի»:[12]

Պատմական իրադարձությունների ու անձնական կյանքի ընթացքը հետզհետե հստակացնում են նկարչի ներաշխարհը: 1882-ին, երջանիկ Աննա Մկրտումի Բոտնազյանի հետ իր երկրորդ ամուսնությամբ, նկարիչը գրում է. «Ասով, ավելի նորեն ազգիս մոտիկցա»:13 Այդ շրջանում ծնվում է տիեզերական խաղաղությամբ շնչող «Սեւ ծովը» եւ իր տանը կից հիմնած պատկերասրահը՝ հանրության համար գործող երրորդ թանգարանը ռուսական կայսրությունում:

Թվում է՝ ամեն ինչ ընթանում էր բնական հունով: 1890-ին Փարիզի «Դրուան-Ռուել» սրահում նա ցուցադրում է իր Արարատներից ամենանշանակալին՝ «Նոյը իջնում է Արարատից» (1889) բիբլիական լույսով ողողված մեծադիր կտավը ու իր հայրենակիցների հետ զրուցելիս ասում. «Սա՛ է մեր Հայաստանը...»:[14]

Եվ ահա, այդ Հայաստանում 1895-ին, սուլթան Աբդուլ Համիդը «Հայկական հարցը» լուծելու կրոով բռնված՝ ցեղասպանության զոհ է դարձնում 300 հազար հայերի: Սարսափելի իրադարձությունը զուգորդվում է նույնքան սարսափելի «Հայաստանն առանց հայերի»՝ հարազատ երկրում հնչած կոչով... Եվ պետական խորհրդանշի սիրտը փոթորկվում է ծովի նման...

Իր ցանկությամբ Այվազովսկուն թաղում են Թեոդոսիայի սբ.Սարգիս եկեղեցու բակում, որտեղ նա մկրտվել էր, որտեղ էլ պսակվել: Շիրմաքարի գրաբար արձանագրությունը, որ քաղված է 5-րդ դարի պատմիչ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից», ուղղված է սերունդներին. «Ծնվեց մահկանացու, թողեց անմահ հիշատակ»:

Նկարչի հոգին արվեստում

Ծովն իր առասպելական հմայքին է ենթարկում բոլորին: Ամեն մի ժողովուրդ ծովի իր «երգն» ունի: Հայ պոետները վաղնջական ժամանակներից՝ (Մատենագիր՝ 5-րդ դար, Նարեկացի՝ 10-րդ դար, Շնորհալի 12-րդ դար եւ ուրիշներ), ծովին են նվիրել բանաստեղծություններ, որոնցից շատերը, հատկապես 19-20-րդ դարերի, վերածվել են երգի ու երգվում են ժողովրդի մեջ: Հայը ծովն ընկալել է իբրեւ երկինք, եւ խավարից դեպի լույս ձգտող իր երազանքի արձագանքն արել նրա կարոտյս հեռուներում:

Դեռ պատանի տարիքից ջութակի սիրահար, մեղեդիների հուզականությանը ենթակա Այվազովսկու արվեստում, իբրեւ ստեղծագործական ելակետ, երաժշտության նման, ակներեւ է բնության ժողովրդական-բանաստեղծական ընկալումը:

Նկարչի առաջին, գունեւանգային նոտք համադրումներով վրձնած գործերից շատերը տոգորված են առանձնության, երազանքի, մասամբ նաեւ տրտմաթախիծ զգացմունքներով: Օրինակ՝ նավակի վրա գլխահակ նստած ձկնորսը («Ամպերը ծովի վրա. 1837»), ծովեզրին, հայացքը, հեռուն հառած գաղթականը («Ծովափ», 1840), նավակի ցռուկին կանգնած ու լուսնով կլանված պատանին («Լուսնկա գիշեր. Կաղրի», 1843) եւ այլն: Դանց շարում իր ազգային խորքով առանձնանում է «Մխիթարյան հայրերը սբ.Ղազար կղզում. Մայրամուտ» (1843) կտավը: Առաջին հայացքից կղզին իր ուրվագծով լույսի մեջ լողացող նավ է հիշեցնում, իսկ մարդիկ՝ հույսի ու երազի ճամփորդներ: Աջ կողմում նստած է Ջ.Բայրոնքն հայրենի դասեր տված Մ.Ավգերյանը: Ձախ կողմում աբբահայր Ս.Սոմալյանն ու նկարչի եղբայր Գ.Այվազյանն են: Պատկերի կառուցվածքային ու գաղափարական կենտրոնը խարսխին դրված կարմրակազմ գիրքն է՝ նույն ժամանակներում լույս տեսած «Հայկազեան» նշանավոր բառարանը, հայագիտության բարձր նվաճումներից մեկը: Եթե նման գործի գիտակցումը չիուզեր երիտասարդ հայ նկարչին, անկարելի պիտի լիներ նման պատկերի մտահղացումը:

Իտալիայի թանգարանները, որտեղից Այվազովսկին «մեղր էր քամում», բնության առինքնող տեսարանները, ինչպես նաեւ հայկական մանրանկարչության հարուստ ձեռագրերի Մխիթարյան միաբանության մատենադարանը, եղբոր օգնությունը, մեծ նշանակություն ունեցան նկարչի ձեւակերտման խնդրում: Իր սիրո աշխարհին՝ ծովին նվիրված «Քաոս.Աշխարհի ստեղծումը» (1841) նկարը (այստեղ Աստված կերպավորվել է իբրեւ լույս) հաղթանակի մեծ ավետիս բերեց երիտասարդ նկարչին:

Իր կյանքը Այվազովսկին տեսնում էր ծովի մեջ: Նկարելով միայն ներին տեսողությամբ, նա ոչ թե պատկերում էր ծովը, այլ ձգտում էր ստեղծել իր՝ ծովը, «պատմելու» իր տեսիլները, իր «հեքիաթները»: Այդ հեքիաթայնությունը նրբորեն նկատել է Դոստոեւսկին իր «1860-61 թթ. ցուցահանդեսը արվեստների ակադեմիայում» հոդվածում: Այո՛, Այվազովսկի-ծովանկարչի մեջ խոսել է բնության հեքիաթասացը: Նրա հոգում այդ հեքիաթները հարափոփոխ են, նույնքան շատ, որքան դրանց նախատիպն է ներկայանում օրվա տարբեր ժամերին ու տարվա տարբեր եղանակներին: Մարդու եւ բնության հիանալի համաձուլվածքի, տիեզերաբունչ ընկալումների դրսեւորման վառ օրինակ՝ արտահայտություն ստացած գլխապտույտ բազմազանությամբ, իսկ փայլատակումների մեջ՝ պարզապես հանճարեղ:

Այվազովսկին իր ժամանակի ռոմանտիկական արվեստի տաճարն է մտնում ղեկավարելով գեղարվեստական աշխարհընկալման, սիմվոլիկ մտածելակերպի սեփական կանոններով, բնազդի թելադրանքով:

Մեծ արվեստագետի ստեղծագործության հիմքում ընկած է բնության անսահմանությանն, նրա արարչագործ, հզոր ուժի գաղափարը: Ահեղ փոթորիկները նա պատկերում է տարերքի դեմ պայքարող, իրար օգնող մարդկանց առկայությամբ: Մարդը չի հանձնվի, մարդը կիաղթի: Նկարչի այս կենսապաշտության մեջ իրենց արտացոլումն են գտել ժողովրդական բնավորությանը հատուկ խոր լավատեսությունն ու տոկունությունը: Այվազովսկու ռոմանտիկայի հենքը տիեզերքի փոքրիկ էակի՝ մարդու մեծ հավատն է բնության ու կյանքի նկատմամբ, 19-րդ դարի քաղաքական կյանքի հզոր ալեբախումների մեջ իր ինքնության հաստատման համար մաքառող ժողովրդի անկոտրում հավատը:

Մարտիրոս Սարյանը, որ դեռ պատանի՝ Նոր Նախիջեւանում տեսել էր ծերունազարդ Այվազովսկուն եւ միշտ ջերմորեն էր հիշում այդ հանդիպումը, գրել է. «Այվազովսկու արվեստը մարդու եւ մարդկայնության արվեստ է, ճշման ու դեսպոտիզմի ժխտում: Նա ազատության անհագ ծարավի ու նրա փառաբանման նկարիչն է: Այվազովսկու «փոթորիկներում» ծովը հանդես է գալիս որպես բնություն-մայր: Պատահական չէ արդյոք, որ նույնիսկ ամենադժամաշիկ պահերին նրա «փոթորիկները» դիտողի մեջ վախի ու ատելության զգացում չեն առաջացնում: Որքան էլ տարօրինակ է, Այվազովսկու «փոթորիկը» հեքիաթային սեր է ծնում բնության նկատմամբ»:[15]

Երիտասարդ տարիքից ռուսական մշակույթի առաջավոր իդեալներով զինված, Բայրոնի ու Դելակրուայի նման Այվազովսկին մեծ սեր տածեց դեպի ճնշվող, փոքրաթիվ ժողովուրդները, ստեղծեց պատկերներ՝ նվիրված հույն ժողովրդի պայքարին ու փրկությանը: Լինելով տառապած, պետականությունից զրկված, ազատություն տենչացող ժողովրդի զավակ՝ նա աշխարհն ընկալեց մարդասիրական դիրքերից:

Նկարչի ստեղծագործական հավատամքը որքան ժամանակի արտահայտություն էր, նույնքան ուներ խոր արմատներ՝ կապված իր ժողովրդի ճակատագրին ու պատմությանը: Ռուսաստանի հանդեպ Այվազովսկու տածած սերը միաժամանակ մայր ժողովրդի նկատմամբ ունեցած զգացումների դրսեւորում էր: Եվ թուրքերի դեմ, ջերմեռանդորեն գովերգած ռուսական նավատորմի հաղթանակների մեջ Այվազովսկին տեսնում էր եւ իր ժողովրդի փրկության ուղին: Եվ դա տպավորիչ էր, մանավանդ որ արդեն ազատագրվել էին Հունաստանը, Բուլղարիան, բալկանյան մյուս երկրները...

Այվազովսկու պատկերների լուսային կախարդիչ մթնոլորտը օգնում է հաղորդվելու նրա արվեստի երազային, հուզաբեսիլային նկարագրին: Նկարիչը դիտում է մարդուն իբրեւ բնության անբաժանելի մասնիկ: Մարդը նրա կտավներում հանդես է գալիս նաեւ ծովի խաղաղ-անդորր տեսարաններում, երբեմն ափով միայնակ քայլելիս, երբեմն ծովափին նստած, հեռուն՝ լույսին հառած երազկոտ հայացքով: Այդ երեւակայված մարդկանց մեջ դժվար չէ ճանաչել նաեւ իր՝ նկարչի դիմագծերը...

Լույսի գաղափարը խիստ ընդգծված է նկարչի ստեղծագործության մեջ: Ուշադիր դիտողը կզգա, որ պատկերելով ալիքներ, ամպեր, օդային տարածություն, Այվազովսկին փաստորեն լույսն է նկարում, լույսն է շոշում: Նրա արվեստում լույսը կյանքի, հույսի ու հավատի խորհրդանիշ է, հավերժականի խորհրդանիշ: Հայ մշակույթի մեջ հեռավոր ակունքներ ունեցող արարիչ լույսի, լույս իմանալիի վերիմաստավորումն է դա, հաստատում մի ավանդույթ, որը շեղ արտահայտություն ստացավ նաեւ հաջորդ սերնդի հայ նկարիչների մոտ:

Լուսերգության ավանդները նկարչին են հասել միջնադարյան «արեւագալի» երգերից, որոնք նա գիտեր ու միշտ լսում էր հայկական եկեղեցիներում: Պատահական չէ, որ խոսելով իր նկարների մասին, նկարիչը գրել է. «Իմ գործերից լավագույնները նրանք են, որոնք առանձնանում են լույսի ուժով...»:[16] Այվազովսկու վերջին նկարներում լույսը բնության վրա է իջնում անտեսանելի աղբյուրից, իբրեւ խավարը ակոսող եւ հույսը հաստատող հզոր ճառագայթ («Մարիա նավը», «Ալիքների մեջ»):

Այվազովսկուն հատուկ է նաեւ գունամտածողության այնպիսի ուրույն մի սիստեմ, որ նրա արվեստը դարս է բերում իր ժամանակի ընդունված գեղանկարչական կանոնների սահմաններից: Այդ առանձնահատկությունը պետք է տեսնել նրա պատկերների երբեմն արտակարգ գունային պայմանականության, վերացականության հասնող լուծումների մեջ: Միեւնույն նկարում Այվազովսկին հաճախ ստեղծում է կարմիրի, կապույտի, կանաչի, դեղինի, վարդագույնի թափանցիկ, իրենց հնչողությամբ սանչելի ներդաշնակումներ: Դիտելով նման գործերը («Ինքնադիմանկար ալիքներ», «Փոթորիկ Աքոս լեռան մոտ», «Սինոպի ճակատամարտը», «Ձկնորսները ծովափին», «Ծովը» եւ այլն), հաճախ մոռանում ես պատկերի սյուժեն եւ կտավն ընկալում իբրեւ գույների երգ, իբրեւ գեղեցկության ներբող: Գույնի հնչողությամբ կենսաթրթիռ գաղափար արտահայտելու ձգտումը, որ բնորոշ է Այվազովսկու բնազդին, կիրառում գտավ միայն նոր ժամանակների նկարչության մեջ:

Ժամանակներին արձագանքող իր ստեղծագործության հուզականությամբ, կրոնությամբ, բանաստեղծական ոգու եւ կատարման ուրույն վարպետության շնորհիվ Այվազովսկին միանգամից բարձրացավ արվեստի եվրոպական մակարդակին: Նույն արժանիքներով էլ նա թարմ շունչ հաղորդեց ռուսական գեղանկարչությանը, դառնալով նրա ամենաճանաչված ներկայացուցիչներից մեկը ամբողջ աշխարհում: Իբրեւ ռուսաստանցի մեծ նկարիչ, երկրորդը Օ.Կիպրենսկուց հետո, նա իր ինքնադիմանկարով արժանացավ Ֆլորենցիայի Պիտտի թանգարանում մշտապես «ներկա լինելու» պատվին:

Բայց իր երկրում՝ Ռուսաստանում, 1870-ական թվականներից սկսվեց Այվազովսկու արվեստի հետզհետե սառ բնույթ կրող ընդունելությունը: Վ.Սաասովն ընդունեց միայն նրա

Տես էջ 5

ԿՈՐՈՍՈՒՄԸ

ԱՄԲՈՂՋ ՁԿՅԵԼՈՎ...

ԳՐԻԳՈՐ ԱՃԵՄՅԱՆ

«Գական թերթ»-ի 34 համարում լույս է տեսել Նորայր Ադալյանի արձագանքը Ե. Չարենցի «Վերջին խոսքը» բանաստեղծական ժողովածուի հրատարակությանը:

Միանգամից ասենք, որ «Վերնագիրը՝ 1937» խորագրով հոդվածը ոչինչ ունի ընդհանուր գական այն ժանրի հետ, որը կոչվում է գախոսական: Ն. Ադալյանի համար ժողովածուն պարզապես առիթ է եղել անդրադառնալու սոցռեալիզմի կարկառուն «գեներալներից» Հայյա Քոչարի գական եւ ոչ գական գործունեությանը: Կասարելով բավական ծավալուն մեջբերում ժողովածուում տեղ գասած Հր. Քոչարի՝ Ե. Չարենցի դեմ ուղղված 1937-ով թվագրված ելույթից, Ն. Ադալյանը գծում է գողի անցած ճանապարհը եւ կասարում անուրախ, բայց անհրաժեշտ եւ տեղին խորհրդածություններ ու հետեւություններ:

Դեռեւս կենդանի, բայց գական կյանքից դուրս շրջված, արդեն անպաշտպան Ե. Չարենցի դեմ ուղղված Հր. Քոչարի ելույթը բնորոշված է «սուգիչ կրակոց» դիպուկ բառերով, որոնցով ի կասար էր ածվում «գական»-քաղաքական պասվերը: Հր. Քոչարի հետագա գործունեության ադալյանական ուսվագիծը կասկած չի թողնում, որ հանձին նրա հայ գականություն էր մտել պաստեհապաշտ մի անձնավորություն, որը գականությունից բարձր դասում էր սեփական կարիերիսական շահերը: Հոդվածն ավարտվում է գական չափանիշների վերանայման բնական պահանջով: Եվ ոչ միայն գական: Հոդվածագրի կարծիքով՝ «...պետք է վերանվանել նաեւ Հայյա Քոչարի փողոցը, որպեսզի այնտեղ ապրողները գիտենան հանգիստ քնեն»:

Ոչ թե հակադրվելու, այլ լրացման կարգով կցանկանայինք անդրադառնալ հոդվածի վերջին մասում բարձրացված գործնական հարցադրումներին:

Նախ՝ ինչո՞ւ մասնավորեցնել խոսքը, նշելով միայն Հր. Քոչարին: Չէ՞ որ հայտնի է, որ Ե. Չարենցը նրան համարում էր «Նաիրու ողորմելի համհարզը...»՝ նկատի ունենալով Ն. Զարյանին: Հասկանալի է, «Վերջին խոսքը» ժողովածուն «փայլում» է հատկապես «քոչարական» հարակից նյութերով, սակայն մամուլում պահպանված են Ե. Չարենցի եւ բռնադատված այլ գողների հասցեին Ն. Զարյանի ոչ պակաս, գուցե եւ ավելի «թունդ» ելույթները: Եվ եթե դրվում է Հր. Քոչարի (Կոմիտասի ու Սիամանթոյի փողոցներին զուգահեռ ծգվող) փողոցի վերանվանման հարցը, ապա ինչո՞ւ մոռանալ, որ ճակատագրի խաղով նույն այդ փողոցի շարունակությունը կոչվում է հենց Ն. Զարյանի անունով: **Որքանո՞վ բարոյական է միեւնույն հաղարում ունենալ գոհերի եւ դահիճների անուններով փողոցներ...** *(ընդգծ.՝ խմբ.)*

Երկրորդ՝ ինչո՞ւ միայն փողոցները: Ես ավարտել եմ Խ. Աբովյանի անվան համար 2 դպրոցը եւ իմ բոլոր ինքնակենսագական ձեւաթղթերում հպարտորեն նշում եմ դա: Իսկ իմ սերնդակիցներից քա՞ն կգտնվեն այնպիսիները, որոնք կնշեն, թե ավարտել են, օրինակ, Ֆ. Ջերժինսկու անվան դպրոցը: Համոզված եմ, որ նրանք սահմանափակվում են միայն դպրոցի համարը նշելով: Նախկինում սիրողաբար, իսկ այսօր արդեն գիտակցաբար մեր երեխաների կենսագրության մեջ հավելվում են անուններ, որոնց խարանը ժամանակի ընթացքում միայն պիտի ուժեղանա: Բայց գուցե այդ անունները խարանվել են ո՞չ գական կյանքում, գուցե նրանց կարելի է ներել իրենց բարձրարժեք գական ստեղծագործությունների՝ համար: **Ցրի նման պարզ է, որ պաստեհապաշտ գողները, որպես կանոն, մնայուն ոչ թե շատ ոչինչ չեն ստեղծում, նրանք անխուսափելիորեն մահանում են իրենց ժամանակավոր պարտությունների հետ...** *(ընդգծ.՝ խմբ.)*

Ն. Ադալյանի արծարծած հարցը օրինական է: Բայց նա առաջինը չէ եւ, ցավոք, կանխազգում եմ, որ նաեւ ոչ վերջինը: Մամուլում ենարկվող բազում հարցեր մնում են ձայն բարբառոյ յանապատի, իսկ քաղաքաքեսարանը, անկախ եւ ժողովրդավար Հայաստանի մայրաքաղաքի ղեկավար մարմինն այդ հարցում պահպանում է Զաքարիայի լռություն: Եվ ոչ միայն քաղաքաքեսարանը: Ե՞րբ պետք է գական չափանիշների վերագնահատման հետ կապված հարցերը գողների միության ղեկավարությունը, մշակույթի բարձրագույն նախարարությունը կամ գականության ինստիտուտը ի պաշտոնե հարուցեն իրավասու մարմինների եւ հասարակության առջեւ: Այդ հարցերն ընդհանուր ոչինչ ունեն Ն. Ադալյանի թվացյալ «ռեանիզմի» հետ: Դրանք մեր բռնադատված գողների՝ Ե. Չարենցի եւ Ա. Բակունցի, Վ. Թոքվենցի եւ Զ. Եսայանի, բազում այլ գողների ու ոչ գողների առանց չակերտների ռեանեն է՝ ժամանակի՛, պատմությա՛ն, ճշմարիտ գականությա՛ն ռեանը, որի հանդեպ խուլ կամ կույր ձեւանալը հանցանք է:

Ով ականջ ունի, թող լսի... ■

Չ էջից

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՀՈԳԻՆ

«Տրապիզոնի ջարդը», 1895 թ.

արվեստի վաղ շրջանը: Ա.Բենուան իր «19-րդ դարի ռուսական արվեստի պատմության» մեջ գրեց. «Այվազովսկին թեեւ համարվում է Վորոբյովի աշակերտը, բայց նա դուրս է կանգնած ռուսական պեյզաժային դպրոցի ընդհանուր զարգացումից»:[17] Այսպիսի եզրահանգման պատճառը միայն այն չէր, որ Այվազովսկին ստեղծագործում էր մեկուսի, արվեստի կենտրոններից հեռու, հանդես էր գալիս հիմնականում անհատական նկարահանդեսներով: Պատճառը պետք է փնտրել ռուսական մշակույթի զարգացման միտումների եւ Այվազովսկու աշխարհընկալման, պոետիկայի մեջ: XIX դարի երկրորդ կեսում ռուսական կերպարվեստն առավել վառ արտահայտված ազգային դեմք ստացավ: Հանձինս պերեդվիժնիկների ծնվեց ռուսական դեմոկրատական ռեալիզմը, ապարեզ իջան ռուսական ռեալիստական մեծ գականության հսկաները: Այվազովսկին շարունակում էր կրկնել ծովի իր «հեքիաթները», որոնք բնական ու սովորական էին իր համար, բայց իր իսկ խոստովանությամբ, «նոր սերնդին արդեն թվում էին մտացածին, անբնական»: Դրանով հանդերձ, անշուշտ չէին ժխտվում ծովանկարչի սեր կապերը ռուսական կերպարվեստի հետ, մանավանդ նրա ունեցած դերը, որի մասին դիպուկ նշել է Ստասովը. «Այվազովսկին իրենն արեց, նա առաջ մղեց ուրիշներին նոր ուղիով»:[18]

Այվազովսկուն մոտիկից ճանաչող եւ նրա դիմանկարները ստեղծած Ի.Կրամսկոյը իր հայտնի ասույթով ասես ամփոփեց ծովանկարչի արվեստի շուրջ ծագած վեճերը. «Ով եւ ինչ էլ ասի, Այվազովսկին առաջին կարգի ասող է բոլոր դեպքերում եւ ոչ միայն մեզանում, այլեւ արվեստի պատմության մեջ ընդհանրապես»:[19]

Այվազովսկու ստեղծագործական խառնվածքի ու աշխարհընկալման ազգային առանձնները, որոնք չի ուռճնասիրել ռուսական արվեստագիտությունը (դա մինչ այսօր էլ զարմանք է հարուցում), դեռ նկարչի կենդանության օրք նրա արվեստը կապել են հայկական մշակույթին:

XIX դարի երկրորդ քառորդից, Արեւելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո, հայ ժողովուրդը հոգեւոր կյանքի վերելք ապրեց: Հայ մշակույթը դուրս եկավ զարգացման նոր ուղի, որ հատկանշվում է եվրոպական եւ ռուսական արվեստների հետ սերտ մերձեցմամբ:

Մասնագիտական կրթություն ստանալով եվրոպական ու ռուսական ակադեմիաներում՝ հայ նկարիչները ազգային արվեստ ներթափանցեցին պատկերման նոր մեթոդներ, որոնք ձուլվելով նրանց խառնվածքին, յուրովի կիրառումներ գտան: Փոխազդեցությունների այդ օրինաչափ պրոցեսը համամարդկային մշակույթի առաջընթացի հիմքն է, պրոցես, որը հետզհետե հասցնում է արվեստի ազգային դիմագծի հստակմանը, բյուրեղացմանը: Այդ պրոցեսը բնորոշ է տարբեր ժողովուրդների արվեստներին, բնորոշ է XVIII դարի ռուսական գեղանկարչությանը, բնորոշ է նաեւ XIX դարի նոր զարթոնք ապրած հայկական նկարչությանը:

Այվազովսկին անգնահատելի ներդրում ունի այդ պրոցեսում: Նրա անունը անբաժանելի է հայկական նկարչության զարգացման նոր շրջանից:

Այվազովսկու տունը Թեոդոսիայում եղել է մի յուրօրինակ ուխտատեղի: Այստեղ հանդես են եկել ռուսական մշակույթի հայտնի դեմքեր՝ երաժիշտներ Սերովն ու Ռուբինշտեյնը, դերասաններ Վառլամովն ու Սազոնովը, լեհ ջութակահար Վիենյավսկին... Այստեղ հյուրընկալվել են նաեւ շատ հայ գրողներ, նկարչին ձոնել բանաստեղծություններ եւ հոդվածներ: Արտակարգ անկեղծ ու գրավիչ է օրինակ Երվանդ Շահազիզի հուշերը,[20] որտեղ վրձնի վարպետը ընթերցողին է ներկայանում իբրեւ Թեոդոսիայի հայկական պատմական հուշարձանների մեկնաբան ու պաշտպան: Թանգարանի մեծ սրահում հանդես են եկել ողբերգակ Պետրոս Ադամյանը, Պետերբուրգի կոնսերվատորիայի պրոֆեսոր, ջութակահար Հովհաննես Նալբանդյանը, կոմպոզիտոր, Այվազովսկու ազգական Ալեքսանդր Սպենդիարովը, որին իր ջութակով ընկերակցել է նկարիչը:

Այվազովսկու խորհուրդներին են հետեւել ռուս ծովանկարիչներ Բոգոլյուբովը, Բոգոեւակին, Լագորիոն, Սուդկովսկին, Ֆեսլերը, Գանզենը, այդ թվում նաեւ ռուսական բնաբաստերի ինքնատիպ դեմքերից Կուինջին: Այվազովսկու արվեստանոցում մկրտություն են ստացել նաեւ վրձնի հայ վարպետներ Բաշինջաղյանը, Սուրենյանցը, ծովանկարիչներ Վարդան Մախոխյանը, Արսեն Շաբանյանը, Մկրտիչ Ցիվանյանը, Էմանուել Մահտեսյանը... Վարդգես Սուրենյանցի վկայությամբ Այվազովսկին ցանկացել է ստեղծել միություն եւ նրա շուրջը համախմբել աշխարհով մեկ սփռված հայ արվեստագետներին:

1868-ին ճամփորդելով Անդրկովկասում՝ Այվազովսկին վրձնել է լեռնային տեսարաններ, Թիֆլիսի կենցաղը, Սեւանա լիճը, Արարատը եւ Արարատյան դաշտը ներկայացնող բնանկարներ, որոնցով նա սկիզբ է դնում ու խթանում այդ ժանրի զարգացումը հայ կերպարվեստում:

Այվազովսկու դիմանկարները հիմնականում սիրո ու երախտագիտության զգացումի վկայություն են: Կազնաչեեւի, Կոիլովի, ծովակալ Նախիմովի դիմանկարներին զուգահեռ նա ստեղծել է իր մեծ մոր՝ Աշխենի, եղբոր՝ Գաբրիելի, Խրիմյան Հայրիկի, Նոր Նախիջեւանի քաղաքագլուխ Ա.Խալիբյանի, պետական գործիչ Լորիս-Մելիքովի, Թեոդոսիայի եկեղեցու առաջնորդ Խ.Ստեփանյանի դիմանկարները: Իր ծովանկարներին բնորոշ թեթեւ, արտիստիկ ընչով է պատկերել իր կնոջը՝ Աննա Բոտնազյան-Այվազովսկայային: Դավանելով հայ առաքելական եկեղեցուն՝ Այվազովսկին մի ամբողջ շարք պատկերներ է ստեղծել Աստվածածնի, ինչպես նաեւ պատմական թեմաներով: Վերջիններից են 1892-ին նկարած «Հայ ժողովրդի մկրտությունը». «Գրիգոր Լուսավորիչ» եւ «Երդում. Վարդան զորավար. 5-րդ դ.» կտավները, որոնք ժամանակին զարդարել են Թեոդոսիայի սբ.Վարդան հայկական եկեղեցին: Պատմական նշանակալից անցքերի պատկերումով նկարիչը հետաքրքրել է ժողովրդին հայրենասիրական զգացումներ ներշնչելու նպատակ: Ծովանկարիչը ստեղծել է նաեւ իր հողատարածքում աշխատող հայ հովիվների առօրյային նվիրված մի շարք բնանկարներ ու «Թիֆլիսի տեսարան» կենցաղային նկարը: Դիտողի ուշադրությունն այստեղ գրավում են ազգային տարազներն ու տանիքների վրա շուրջպար բռնելու ժողովրդական ավանդույթը: Այդ ավանդույթը ի դեպ արձագանք է գտել նաեւ Մ.Սարյանի մի շարք գործերում, որի նախնիները Ղրիմից էին Դոնի ափեր գաղթել:

Այվազովսկու հայկական նկարների շարքում բացառիկ է կյանքի վերջին տարում ստեղծած «Բայրոնի այցը Մխիթարյաններին» մեծադիր կտավը: Վենետիկի գեղեցիկ համայնապատկերի առջեւ ազատության երգչին ջերմորեն դիմավորում են Մխիթարյան հայրերը, որոնց կենտրոնում նկարիչը հատուկ նպատակով պատկերել է նաեւ XIX դարի մեծ հայորդի, գիտնական եւ բանաստեղծ Ղեւոնդ Ալիշանին, որը Բայրոնի այցի ժամանակ դեռ չէր ծնվել. սխալանքի մտահղացում՝ մեկ նկարի մեջ խտացնել հայ տարբեր սերունդների ներկայացուցիչներին, իր եւ նրանց ազատաբաղձ իղձերը:

Դիտարկելով Այվազովսկու ժառանգությունն իր ամբողջության մեջ՝ պիտի ասենք, որ անհնար է առանց նրա պատկերացնել հայկական արվեստը, այդ արվեստի զարգացման պատմական ընթացքը: Իսկ իբրեւ ռուս նկարիչ՝ անկարելի է լիովին բացահայտել նրա ստեղծագործական դեմքը՝ առանց իր արվեստի հայկական ակունքների: Ահա թե ինչու պատկանելով ռուսական մշակույթին, Այվազովսկին հավասարապես պատկանում է հայ մշակույթին: Նման օրինակները քիչ չեն համաշխարհային արվեստում: Այս դեպքում ավելին՝ ծովի մեծ երգիչը սերունդներին է ներկայանում իբրեւ հայ եւ ռուս մշակույթների բարեկամության անզուգական խորհրդանիշ:

Հենց այս գաղափարն էլ հիմք հանդիսացավ Ֆրանսիայում «Հայաստանի տարի» (2007) մշակութային ծրագրով իրականացած «Ծովի պոեզիան»՝ (Այվազովսկին եւ իր հայ հետնորդները) ցուցահանդեսի: Փարիզի Ծովային ազգային թանգարանում բացված այդ նկարահանդեսը տեսնելով՝ լրագրող Ս. Սադեկովան իր անկեղծ տպավորություններն է հրապարակել «Կոմերսանտ» թերթում(2007, 13 փետրվար) նշելով, որ «Այվազովսկին Հայաստանի զավակն է... Վատ չէր լինի այդպիսի ցուցահանդես տեսնել Մոսկվայում»:

Ժամանակները փոխվում են: Ազգությունները ավելի ու ավելի են մերձենում իրար եւ երկրագունդն արդեն քայլում է համամարդկայինի ուղիով: Հայ ժողովուրդն ինչպես առաջներում, այլեւս անհայտ ու անծանոթ չէ, եւ այսօր առավել քան երբեք ջերմ ու բարեկամական են Հայաստանի եւ Ռուսաստանի կապերը բոլոր բնագավառներում:

Հովհաննես-Իվան Այվազովսկու ծննդյան մոտեցող 200-ամյակին համակողմանի ցուցահանդես կազմակերպելով՝ մեծ մարդասերը դուրս կբերվի անցյալի քաղաքականության ճահճից, եւ ձերբազատվելով ազգային սահմանագծերից կվերածանաչվի այնպես, ինչպես մարդն է կյանք մտնում իբրեւ Աստծո պարգեւ: Այլապես կշարունակի մնալ Ռուսաստանի համար ռուս նկարիչ, Հայաստանի համար՝ հայ:

Գականություն

1. Բարսամով Ն., Այվազովսկի. Մոսկվա, 1962, էջ 156 (ռուս.)
2. Նովոուստենսկի Ն., Այվազովսկի. Լենինգրադ, «Ավրորա», 1983, էջ 1 (ռուս., գերմ., անգլ., [illegible])
3. Ցուրակ Գ., Այվազովսկի. Մ. Բելիչ-գորոդ, [illegible], էջ 1 (ռուս.)
4. ՀՀ ազգ. կենտ. արխիվ (ՀԱԿԱ) ֆ. 330, [illegible], էջ 33
5. Այվազովսկի. Փաստաթղթեր եւ նյութեր, կազմ. [illegible] Հարությունյան Գ., Շաքիրյան Հ., Սարգսյան Մ., Երեւան, 1967, էջ 14 (ռուս.)
6. Նույնը՝ էջ 311 (ռուս.)
7. Բարսամով Ն., Այվազովսկի. Մոսկվա, 1962, էջ 92-93 (ռուս.)
8. Նույնը՝ էջ 92-93 (ռուս.)
9. Այվազովսկի. Փաստաթղթեր եւ նյութեր. էջ 278 (ռուս.)
10. Հայկ. ՍՍՀ «Տեղեկագիր» 1958, հ. 11
11. Սարգսյան Մ., Մեծ ծովանկարչի կյանքը. Երեւան, 1967, էջ 195
12. Բարսամով Ն., Այվազովսկի. Մոսկվա, 1962, էջ 126 (ռուս.)
13. Այվազովսկի. Փաստաթղթեր եւ նյութեր. Երեւան, 1967, էջ 188 (ռուս.)
14. Սարգսյան Մ., Մեծ ծովանկարչի կյանքը. էջ 337
15. Սարյան Մ., «Ծովի մեծ երգիչը». «Պրավդա», 1967, 27 հունիս (ռուս.)
16. Բարսամով Ն. Այվազովսկի. Մոսկվա, 1962, էջ 129 (ռուս.)
17. Բենուա Ա.,19-րդ դ. Ռուս. գեղանկարչության պատմություն. Մոսկվա, 1999, էջ 304
18. Բարսամով. Ն., Այվազովսկի.էջ 118 (ռուս.)
19. Նույնը՝ էջ 123
20. Շահազիզ Ե., Հիշողություններ եւ դիմաստվերներ. Երեւան, 1980, էջ 101-123 (հայ.)
21. Տպագրված է թարգմանված «Մշակ» թերթում, Թիֆլիս, 1900, թիվ 79 ■

ԼԱՀԻՍԱՆՔ

ԻՆՉԵՐԵՆ ԵՆՔ... ԼՍՈՒՄ

Ա էջից...

Ռուսերենի բացասական ազդեցության հետքեր կային նաեւ կենցաղում, բայց ոչ մեկի մտով չէր անցնի (որովհետեւ իշխանությունները թույլ չէին տա) ենթադրել դրամանոցի վրա հայերեն գրել «Նոմեռ ադին», սակայն հիմա, մեծրոյի «Երիտասարդական» կայանի կողին կարդում ենք «Նամբըր Ուան»: Ճախածն էլ ինչ է, ընդամենը «սենդվիչ» կոչվածը: Իսկ ինչոիսի՞ գանձեր կարող ենք տեսնել Երեւանի կենտրոնական փողոցներում...

Լեզվաստրկացման այս երեւույթը նոր չէ մեր պատմության մեջ: XIX եւ նույնիսկ XX դարում գործածվել է «հայատառ թուրքերենը»: Հայերենը մոռացած թրախոս հայերի համար Կոստանդնուպոլսում, թուրքերեն, բայց մեսրոպյան գրերով գրեր են լույս տեսել, պարբերականներ: Նշանավոր «Մանզումեի էֆքյար»-ը գոյատեւեց կես դարից ավելի:

Սակայն դա տեղի էր ունենում մի երկրում, որը վարում էր բռնի ուծացման, մահմեդականացման հետեւողական քաղաքականություն: Մինչդեռ, հայատառ անգլերենը ծնվեց բառացիորեն մի քանի տարում, սահմանադրականորեն ազատ եւ անկախ հանրապետությունում, որը պարտավորվում է տեր կանգնել իր լեզվամշակութային ժառանգությանը եւ աջակցել նրա անխաթար գոյությունն ու զարգացումը: Բայց իրո՞ք այդպես է...

Անշուշտ, մենք առաջինը չենք եւ վերջինը չենք: Մեր եւ ուրիշ ժողովուրդների պատմությունը լեզվազդեցության բազմաթիվ օրինակներ է բերում: Ուշագրավ է հատկապես, երբ ազդեցության վնասակար հետեւանքներից բողոքում են հզոր պետականություն ունեցող ազգերը: XVIII դարի վերջում, իսպանացի խոզե դե Կադալսոն բողոքում էր իսպաներենի ֆրանսացումից, Անրի Էյենը՝ ֆրանսերենի իտալացումից, Զորջ Սանդը, 1924-ին՝ անգլերենի ֆրանսացումից, 1964-ին ֆրանսիացի լեզվաբան Է. Տիամբլը սվարաբավալ մի ռասնանասիություն տպագրեց՝ «Խոսո՞ւմ եք ֆրանգլերեն» պերճախոս վերնագրով, իսկ կանադացի ֆրանսախոս մի քահանա, 1960-ին կանադական ֆրանսերենն ամերիկյան անգլերենի ուծացնող ազդեցությունից փրկելու համար պահանջում էր կտրուկ միջոցներ ձեռնարկել. «Կացնի, կացնի պետք դիմել, - գրում էր նա: Պետք է՝

ա. բացարձակ հսկողություն սահմանել ռադիոյի եւ հեռուստատեսության վրա: Մահվան սպառնալիքի տակ արգելել խոսել փողոցային լեզվով:

բ. ոստիկանությունը մի գիշերվա ընթացքում ոչնչացնի անգլերեն կամ գռեհիկ լեզվով գրված ցուցանակները:

գ. իրավունք տալ, երկու տարվա ընթացքում, տեղնուտեղը սպանել բոլոր այն պաշտոնյաներին, նախարարներին, ուսուցիչներին եւ քահանաներին, որոնք կխոսեն անգլերենախառն լեզվով»:

Դանակը երեւի իսկապես ոսկորին է հասել, որ Աստծո սպասավորն այսպիսի դաժան միջոցներ էր պահանջում հանուն իր մայրենի լեզվի պաշտպանության:

Արդացուցված է. սրկությունը չի կայանա, եթե մարդն ինքը չի ուզում սրկանալ: Հայատառ անգլերենն ստեղծեցինք մենք, մեր սրկահաճ, ազգային (հետեւաբար եւ մարդկային) արժանապատվությունից զուրկ, անգրագետ, անկիրթ, ընչաքաղց նորօրյա փորոտիենավագների ու զիմզիմովների համատեղ ջանքերով: Սրանց կողին են, անշուշտ, ազդեցության զանազան գործակալները: Մնում է ավելացնել ազգային իշխանության անտարբեր ու հանդուրժող հայացքը, իսկ, ավելի ճիշտ, հայացքի բացակայությունը:

Ուշագրավ երեւույթ. Գլենդելում հաստատված հայը կարող է այնտեղ ապրել առանց անգլերենի գիտության: Հայաստանում արդեն դյուրին չէ ապրել առանց անգլերեն հասկանալու, եւ եթե այսպես գնաց, ապա առաջիկա տարիներին, յուրաքանչյուր հայ, սեփական հայրենիքում լիարժեք կյանքով ապրելու համար պարտադիր պիտի սովորի այդ լեզուն: Նախիրյան ուզվորների սինդիկատն արդեն յուրացրել է այս դասը. «Պլիի՞զ, միստր, ուան դոլլա՞ր», - լալահառաչ մուրում են նրանք աստղազարդ հյուրանոցների մերձակայքում: Տասը-քսան դրամով օձիքդ չես ազատի, օտար լեզվի իմացության համար շոշափելի հավելավճար է հատնում:

Բոլորովին վերջերս, լեզվամշակութային աղքատության տիպական օրինակ մատուցեցին մեր կինեմատոգրաֆիստները: Նրանք Հայաստան էին հրավիրել Տոնինո Գուերռային: Լավ էին արել: Բայց ինչո՞ւ էին աֆիշների վրա անգլերեն գրել. «Tonino Guerra & his friends»: Քեռի



Սեմն ինչ գործ ունի մեր եւ իտալական մշակութային ուղղակի հարաբերություններում: Այդ նախադասությունը պիտի գրվեր կամ հայերեն, կամ իտալերեն: Թերեւս վերջինը: Դրանով հարգանքի տուրք կմատուցեինք մեծ մշակույթին, սքանչելի լեզվին: Ցեմ կարծում, թե Տոնինո Գուերռային հրավանք պատճառեր երդդ լեզվով գրված այդ ազդը: Ազգային մշակույթի զորավոր գիտակցությունն ունեցող եվրոպացի արվեստագետները չափազանց զգայուն են անգլերենի նման՝ կատարելապես անտեղի միջամտության հանդեմ: Սակայն համոզված չեմ, թե իմ պահանջները հասկանալի եւ ընդունելի կլինեն մեր կինոգործիչների համար: Ցնչին բացառությունները չհաշված, նրանք միշտ եղել են Տիրոջ լեզվի հարկատուները: Երեկ ռուսերենն էր, այսօր՝ «ամերիկերենը»:

Պե՞տք է, արդյոք, ընդգծել, որ մենք դեմ չենք անգլերենի, ինչպես եւ ուրիշ լեզուների տարածմանը Հայաստանում: Խոսքն ինքնակամ լեզվաստրկացման, սեփականն օտարով ճնշելու, աղավաղելու եւ, ի վերջո, ոչնչացնելու մասին է:

Դեմ չենք նաեւ, որ Հայաստանում, հայկականի կողին նաեւ օտարանուն հաստատություններ լինեն, ինչպես հայանուն հաստատություններ կան Միացյալ Նահանգներում, Ֆրանսիայում կամ Լիբանանում, բայց օտար լեզվով գրելիս, հաճեցեք, տիրք եւ տիկնայք, պահպանել տվյալ լեզվի ուղղագրության տարրական պահանջները, եւ ոչ թե «Rendez-vous»-ի փոխարեն գրել «Randevou», ինչպես կարդում ենք Տերյան եւ Թումանյան փողոցների անկյունում՝ Առնո Բաբաջանյանի հրեակերտ արձանի դիմաց, կամ «Mademoiselle»-ի փոխարեն՝ «Madmazel» (Մատցոցի պողոտա): Կարելի՞ է մեկ բառի մեջ վեց տառասխալ թույլ տալ...

Այսպիսի գրագիտությամբ նրանք ոչ մի երկրում ավարտական վկայական չէին ստանա, բայց նշյալ եւ ուրիշ բազմաթիվ աղաղակող անգրագիտությունները կարողացել են հաստատել մեր պետական մարմիններում եւ իրավունք ստացել փակցնել շենքերի պատերին ու տեռորի ենթարկել գրագետ հասարակությանը:

Երաժշտական կեղծ հնչյունը կարող է նաեւ մարմնական տառապանքի պատճառ դառնալ լսողություն ունեցող մարդու համար: Ամենօրյա եւ ամենժամյա նույնպիսի կեսանքների է ենթարկվում նաեւ հայերեն լսելու կարողությունը չկորցրած եւ մայրենիի, ինչպես եւ մյուս լեզուների ուղղագրությունը հարգող քաղաքացին:

Սրանից կարելի է պարզ հետեւություն անել. այս անգրագիտությունները հաստատողների գրագիտության մակարդակն ավելի բարձր չէ (եթե չասենք՝ ավելի ցածր է, չնայած անկարելի է դրանից ավելի ցածր պատկերացնել), այլապես «կեղծ հնչյունը» կծակեր նրանց ականջը եւ տեղնուտեղը կարգելեին: Կամ գրագետ են, բայց թաթ են ունեցել, սակայն սա արդեն ուրիշ, ավելի տխուր խոհերի առիթ է տալիս: Եթե իրոք այդպես է: Բոլոր դեպքերում կարող ենք անվարան ասել մի բան. կիրթ, գրագետ, արժանապատվություն ունեցող մարդը չէր հանդուրժի այս վիճակը: Իսկ չհանդուրժողները բաժանվում են երկու խմբի. նա, ով ուժ եւ կարողություն ունի դրությունը շտկելու, եւ նա, ով չունի: Ունեցողը շտկում է, չունեցողը՝ տառապում կամ, ի վերջո, դառնում անգրագետ: Դատելով առկա վիճակից, ունեցողների թիվը գնալով նվազում է, չունեցողներինը՝ շատանում:

Ինչ որ է, հեռուստաէկրանից հնչող եւ ցուցանակներին հայտնվող հայերենը ոչ միայն առիթ է տալիս ասելու, որ այս պրոցեսը չի հսկվում, այլեւ որ էկոլոգիական բազմաբնույթ ագրեսիային (փոշի, աղմուկ, աղտոտված օդ, չդադարող՝ ծառահատումներ) ավելանում է եւ մեկը՝ անգրագիտությունը:

Գոյություն ունի նաեւ մշակութային էկոլոգիա: Ճիշտ է, մենք դեռեւս չենք անցել անշտկելիի սահմանագիծը, բայց վտանգավոր արագությամբ մոտենում ենք դրան: Մեզանում շատերն արդեն դադարել են հայերեն լսել, մանավանդ նրանք, ովքեր (ոչ միայն հեռուստաէկրանից) հայերենը խոսում են «ամերիկերենի» պես: Անգլագիտությունը դառնում է անգրագիտություն, եւ եթե այս ամենի դեմը չառնվի պետականորեն, մեզ բոլորիս սպասվում է ավստրալիացի տղայի աղագան...

Հ.Գ. Հոդվածն արդեն ավարտված էր, երբ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության գովազդներից իմացանք, որ ցուցադրվելու է «Հերուվիմ» բազմասերիանոց ֆիլմը: Մոտավորապես կռահելով թարգմանական աղետը, այնուհանդերձ, մասնագիտական պարտքի մղումով որոշեցինք մեր ունեցած մի քանի բառարանները նայել: Մեր փնտրտուքներն իզուր էին: Գիտեինք, որ այդպես է և համոզվեցինք, որ այդ վերնագիրը ռուսերեն ходуном-ի ճախավեր թարգմանությունն է: Ֆիլմի վերնագիրը պետք է լիներ «Քեռվբե»: Երևույթն առավել քան տագնապալի է: Լրատվական հիմնարկում, որտեղ գրագիտությունը և լեզվական պատասխանատվությունը պետք լինի պարտադիր պայման, չի գտնվել մեկը, որն զգուշացներ գործընկերներին և թույլ չտար, որ իր հաստատությունն ամեն օր, օրը մի քանի անգամ տգիտություն սփռի հանրապետությունով մեկ: Ֆիլմը դեռ չենք նայել, սակայն պատկերացնում ենք, թե այնտեղ թարգմանական ինչպիսի «մարգարիտներ» են լինելու: ■

Զորբան Կրետեից

Բ էջից

Կազանձակիսի էներգիան երբեք չթուլացավ: Նա շարունակեց ճանապարհորդել Եվրոպայում, Մերձավոր եւ Հեռավոր Արեւելքում եւ իր տպավորությունները հրատարակել ճանապարհորդական գրքույկներում, որոնք ավելի համբավ բերեցին իրեն, քան իր նախորդ պիեսներն ու բանաստեղծությունները: Փող վաստակելու նպատակով նա նաեւ հունարեն թարգմանեց եվրոպական գրականության դասականներին՝ Դանթեին, Գյոթեին: Գրեց նաեւ 2 հատոր նվիրված ռուս գրականության պատմությանը եւ երեք անհաջող վեպ ֆրանսերեն լեզվով:

Առաջին համաշխարհայինի բռնկման օրերին Կազանձակիսը նոր էր վերադարձել Հունաստան եւ հաստատվել Աթենքի մոտ գտնվող էգինա կղզում: Գալատեայից բաժանվել էր եւ ապրում էր Էլենի Սամիրի հետ: Վերջինիս հանդիպել էր 1924-ին: 1941 թվի ապրիլին նացիստների գրավումից հետո անհանգիստ բնավորության տեր Կազանձակիսը ստիպված է լինում օկուպացիայի երեքուկես տարիներն անցկացնել էգինայում եւ այնտեղ է, որ մասամբ Էլենիի դրդմամբ սկսում է իր հիշողությունները թղթին հանձնել այդ «սատանայական Զորբայի» մասին:

Իսկական Զորբան մակեդոնացի բանվոր է, որին Կազանձակիսը հանդիպել է Հունաստանի հյուսիսում Առաջին աշխարհամարտի տարիներին: Նրա հետ փորձել էր հիմնել քարածխահանքի շահագործման ձեռնարկություն (գրքում էլ է այդպես): Հույներին փրկելու առաքելությամբ Կովկաս մեկնելուց նրան իր հետ էր վերցրել (գրքում չի հիշատակվում): Իսկական Զորբայի անունը Զորջ էր, մինչդեռ գրքում Ալեքսիս է: Գիրքն ավելի Կազանձակիսի երեւակայության, քան փաստերի վրա է հիմնված: 1946-ին հրատարակված հունարեն տարբերակում վերնագիրը հնչում է մոտավորապես այսպես. «Ալեքսիս Զորբայի կյանքը եւ ժամանակները»: Ենթադրում եմ, որ «Հույն Զորբան» վերնագիրը վեպին տվել է շվեդ Բորխե Քնոսը, որն այդ ժամանակ ամեն ջանք թափում էր Նոբելյան մրցանակի արժանացնել Կազանձակիսին եւ այդ առթիվ շվեդերեն էր թարգմանել դա եւ հեղինակի մյուս գործերը:

Բնագրում չի նշվում, որ Զորբան հույն է: Նա պարզապես տարբեր ժամանակներում Կազանձակիսի հանդիպած բազմաթիվ մարդկանց հավաքական կերպարն է: Իսկ նրա եռանդն ու անպարտելի ոգին՝ անկախության ձգտող ժողովրդի միահյուսված դրսեւորումն է գերմանական օկուպացիայի սրկացման եւ սովի տարիներին:

Կազանձակիսը 58 տարեկան էր, երբ գրեց «Զորբան»: Դա սկիզբն էր, բայց շրջադարձայինը: «Քրիստոսը կրկին է խաչվում», «Մահ կամ ազատություն» եւ «Քրիստոսի վերջին գայթակղությունը» վեպերով, որոնք գրվեցին 1948-51-ի ընթացքում նա իրեն ամբողջովին հաստատեց որպես տաղանդավոր եւ ինքնատիպ գրող: Այս վերջին ստեղծագործություններն ունեն լավ մշակված եւ զարգացող սյուժե, ինչպես նաեւ հետաքրքրական գործող կերպարներ: Եվ վերջապես դրանցում առկա է անդիմադրելի ուժերի հակամարտություն՝ լինի անհատների, հավատի, թե քաղաքական համոզմունքների միջեւ: Սրանք են, իմ կարծիքով, այն հատկանիշները, որոնք Կազանձակիսի վեպերը դեռեւս արդիական են պահում նրա մահվանից հիսուն տարի անց եւ սիրում կինոմատոգրաֆիստներին ժամանակ առ ժամանակ անդրադառնալ դրանց:

Իր կյանքի վերջում՝ 1946 թվի աշնանը Կազանձակիսը մեկնում է Ֆրանսիա, որտեղ Անտիբում «հիմնում» է իր երկրորդ տունը: Հակառակ առողջության վատթարացմանը շարունակում է գրել եւ ճանապարհորդել: Դեպի Չինաստան եւ Ճապոնիա կատարած իր երկրորդ ուղեւորությունից վերադարձին անկողին է ընկնում եւ 1957 թվի հոկտեմբերի 26-ին հավիտյանս փակում իր աչքերը Ֆրայբուրգում:

Երբեմն լուրեր են շրջանառվում, որ հույն ուղղափառ եկեղեցին նրան բանադրել եւ վտարել էր: Սա ճիշտ չէ, որովհետեւ իրականում նրան Իրակլիոնում թաղել են կրոնական ամենապատշաճ արարողություններով: Նրա գերեզմանի վրա գրված է՝ «Ոչինչ չեմ ակնկալում: Ոչնչից չեմ վախենում: Ես ազատ եմ»:

Տարբեր «իզմերի» համը ճաշակելուց հետո, նա ինքն էր ստեղծել իր սեփականը: Նրա հաջողությունը, հավատացած եմ, կայանում է իր հանճարի մեջ, որ կարողացավ որսալ այն ֆիզիկական դինամիզմը եւ հոգեկան էներգիան, որ մարդուն առաջնորդում է էքստրեմալ հակամարտությունների եւ իր ուժերի ամբողջական լարումով հասնելու հաղթանակի:

Թարգմանեց
ՀԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԸ

1. Առաջիկա 2008 թվի փետրվարի 18-ին լրանում է նրա ծննդյան 125-ամյակը (Ծնթ. Հ. Ծ.)

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՍԱՄՈՒԷԼ

Վայզելը ճիշտ է ցեղասպանության հարցում, սխալ՝ արդարության պահանջների հարցում

«Ֆիլադելֆիա ջյուիշ վոյս» պարբերականին տված հարցազրույցում (տպագրված հոկտեմբերի 28-ին) խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր էլի Վայզելը լրագրող Չարլզ Սմոլովերի հարցին պատասխանեց. «Ես տարիներ շարունակ պայքարել եմ հայերի՝ հիշելու իրավունքի համար: Ինչպես կարող եմ ես, ողջ կյանքում պայքարելով հրեաների հիշելու իրավունքի համար, ասել հայերին, որ հիշելու իրավունք չունեն: Բայց ես հասկանում եմ (Բուշի) վարչակազմի դիրքորոշումը: Բարեբախտաբար, որպես անկախ քաղաքացի ես կարիք չունեմ մտահոգվելու Թուրքիայի հակազդեցությունից: Բայց վստահ եմ, որ եթե այն ժամանակ գոյություն ունենար «ցեղասպանություն» բառը, հայերի հետ կատարվածը կկոչվեր ցեղասպանություն: Ամեն մեկն էլ համաձայն է, որ զանգվածային սպանություններ են տեղի ունեցել: Բայց այդ բառը հետո է ստեղծվել: Հավատացած եմ, որ հայերը զոհ են, եւ որպես հրեա, ես պետք է լինեմ հայերի կողքին»:

«Սա շատ կարեւոր եւ շիտակ պատասխան է Վայզելի նման բարոյական կարգավիճակի տեր մեկից», գրում է **«Կալիֆոռնիա կուրիեր»** թերթի հրատարակիչ եւ խմբագիր **Հարութ Սասունյանը**, շեշտելով, որ որպես միջազգայնորեն ճանաչված անձնավորության, նրա խոսքերը մեծ կշիռ ունեն:

«Բայց նա միշտ այդ դիրքորոշումը չի ունեցել», հիշեցնում է Սասունյանը եւ շարունակում.

«1982-ին, երբ թուրքական կառավարության ճնշումների տակ Իսրայելի արտգործնախարարությունը խնդրեց նրան չթույլատրել հայ գիտնականներին մասնակցել Երուսաղեմում եւ Թել Ավիվում անցկացվելիք Հոլոքոստին եւ ցեղասպանությանը նվիրված միջազգային համագումարին, նա, չցանկանալով դեմ գնալ իր երկրի կառավարության պահանջներին, նախընտրեց հրաժարվել այդ համագումարի նախագահի իր պաշտոնից: Հետագայում սակայն նա ավելի վճռորոշ է եղել իր դիրքորոշումներում: 1986-ին Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» գրքի ֆրանսիական հրատարակության նախաբանում նա 1915-ի իրադարձությունները նկարագրել է որպես «զանգվածային սպանություններ, որոնք նպատակ են ունեցել բնաջնջելու մի ամբողջ ազգաբնակչություն», եւ վայրագ կոտրածներն անվանել «20-րդ դարի առաջին ցեղասպանությունը»:

Ավելի ուշ, 2000 թվի մարտի 7-ին 126 այլ գիտնականների թվում նա ստորագրել է մի պաշտոնական հաղորդագրություն, որտեղ Հայոց ցեղասպանությունը ներկայացված է որպես «անհերքելի փաստ»: Այս տարվա սկզբներին նա դարձյալ ստորագրեց 50 այլ Նոբելյան մրցանակակիրների հետ նույն բովանդակությամբ մի նոր փաստաթուղթ: 2007-ի օգոստոսի 21-ին Աբրահամ Ֆոխմանը (Հակազրպարտչական ազգային լիգայի տնօրենը) նրան էր դիմել եւ ստացել հաստատական պատասխան, որ կատարվածը «հավատարազոր էր ցեղասպանության»:

Այս բոլորով հանդերձ շատ թերի էր նրա պատասխանը լրագրողի երկրորդ հարցին, որը վերաբերում էր թուրքերի պատասխանատվություն կրելուն:

Պրն Վայզելը պատասխանեց. «Ոչ ոք թուրքերից չի խնդրում պատասխանատվություն կրել: Այն ամենը, ինչ հայերն ուզում են, հիշելու իրավունքն է: Նոթ սերունդ է անցել այն դեպքերից, որոնք տեղի ունեցան Ա աշխարհամարտի օրերին ու ոչ մի խելամիտ անձնավորություն չի ասի, որ այսօրվա թուրքերն են պատասխանատու կատարվածի համար: Հայերը հատուցում չեն պահանջում: Նույնիսկ ներողություն չեն պահանջում: Ցանկանում են միայն հիշելու իրավունք: Թուրքերը շատ կշահեն, եթե պարզապես ընդունեն կատարված իրականությունը: Ես խոսել եմ թուրք առաջնորդների հետ ամենաբարձր մակարդակներում եւ զգնում եմ, որ նրանց վերաբերմունքն այս հարցի նկատմամբ ամբողջովին անտրամաբանական է, բացի մեկ բանից, որը ես հասկանում եմ: Չեն ցանկանում, որ իրենց համեմատեն Հիտլերի հետ: Բայց ոչ ոք էլ չի համեմատում»:

Այս պարբերության գրեթե բոլոր նախադասությունները սխալ են: Հայերը ոչ ոքի թույլտվության կարիքը չունեն հիշելու կամ սգալու իրենց զոհերին: Նրանց հիշելու իրավունքը երբեք էլ ճնշարկման խնդրո առարկա չի դարձել: «Նոթ սերունդներ» արտահայտությունն էլ սխալ է: Հայոց ցեղասպանության ականատեսներ դեռեւս կան մեր շարքերում: Ինքս ցեղասպանությունը տեսածի թոռն եմ (3-րդ սերունդ):

Ինչ վերաբերում է պատասխանատվության խնդրին, թե հայերս պահանջունների համար չենք մեղադրում այսօրվա թուրքերին, արդա պետք է նշել, որ մեղադրում ենք թուրքական պետությանը Հայոց ցեղասպանության փաստը ժխտելու եւ խեղաթյուրելու համար: Ավելին, պնդում ենք, որ համաշխարհային հանրությունը տրվի այն հսկայական վնասների դիմաց, որ մենք կրել ենք: Ինչո՞ւ Հոլոքոստի վերապրողներն իրավունք ունենան հատուցման, իսկ հայերը՝ ոչ: Ի հակադրություն հրեաների, հայերն իրենց պատմական հայրենիքից արմատախիլ եղան, կորցնելով նաեւ իրենց ունեցվածքն ու մշակութային ժառանգությունը:

Մի կետում, այդուհանդերձ, պետք է համաձայնել պրն Վայզելի հետ: Ճիշտ է, որ «թուրքերը շատ կշահեն, եթե պարզապես ընդունեն կատարված իրականությունը»: Բայց անհրաժեշտ է հիշեցնել նրան եւ թուրքական կառավարությանը, որ հայերի եւ թուրքերի միջեւ հաշտություն չի կարող լինել մինչեւ արդարությունը չհաղթանակի, այսինքն՝ մինչեւ չվերադարձվեն թալանված ունեցվածքի արժեքները:

Քանի որ «Ֆիլադելֆիա ջյուիշ վոյսը» պրն Վայզելին ներկայացնում է որպես «արդարության ջատագովի», հույս ենք հայտնում, որ նա իրոք արժանի կլինի այդ հորջորջումին՝ ինչպես հրեական, այնպես էլ հայկական դատի հետապնդման գործում եւ չի խեղաթյուրի արդարության որոնումների հայերի պահանջները», եզրափակում է հոդվածը Հարութ Սասունյանը:

Ն. Ծ.

Հիլարի Քլինթոնը «կոպիտ եւ սխալական» է համարում Ջորջ Բուշի պատմական զուգահեռները

Կոնգրեսում երեկ ունեցած ելույթում նախագահ Ջորջ Բուշը դեմոկրատ կոնգրեսականներին համեմատել է այն մարդկանց հետ, որոնք չէին կարողացել ժամանակին հակազդել Լենինի ու Հիտլերի իշխանության գալուն եւ 2-րդ աշխարհամարտից հետո Արեւելյան Եվրոպայում ԽՍՀՄ-ի ազդեցության տարածմանը:

Բուշը փորձել է կոնգրեսականներին համոզել ընդունելու մի շարք օրինագծեր, որոնք վերաբերում են ազգային անվտանգությանը, մասնավորապես Իրաքի պատերազմի ֆինանսավորմանը եւ ԱՄՆ գլխավոր դատախազի պաշտոնում Մայքլ Մյուքասեյի հաստատմանը:

Նախագահի խոսքերով, տվյալ օրինագծերի շուրջը Կոնգրեսում ծավալված վեճերը հիշեցնում են 20-րդ դարասկզբի իրավիճակը, երբ Լենինը հռչակեց համաշխարհային կոմունիստական հեղափոխության գաղափարը, իսկ Հիտլերն արեց «Երրորդ Ռայխի» կառուցման առաջին քայլերը: Ուստա բեն Լադենը եւս չի թաքցնում իր մտադրությունները:

Ըստ Բուշի, «ժամանակին նրանց խոսքերին պատշաճ ուշադրություն չի դարձվել, եւ այդ սխալի գինը չափազանց թանկ է»:

Նախագահության դեմոկրատ թեկնածու, սենատոր Հիլարի Քլինթոնը նախագահ Բուշի ելույթում արված պատմական համեմատություններն անվանել է «կոպիտ եւ սխալական»: Սենատորի կարծիքով, Բուշի փաստարկները «վերջ չեն դնի Իրաքի պատերազմին, չեն ապահովի Ամերիկայի անվտանգությունը եւ տուն չեն վերադարձնի մեր զորքերը»:

«ԱՄՆ-ը հոգնել է թե՛ այդ պատերազմից եւ թե՛ ազգային անվտանգության հարցերը քաղաքական խաղերի հետ շփոթելու Բուշի փորձերից», ընդգծել է Հիլարի Քլինթոնը:

Ծոցի պետություններն առաջարկում են ստեղծել ուրանի հարստացման բազմազգ կոնսորցիում

Պարսից ծոցի արաբական երկրների համագործակցության խորհրդի անդամ 6 պետություններ հանդես են եկել Իրանի միջուկային ծրագրին առնչվող փոխզիջողական նախաձեռնությամբ, որը կարող է ընդունելի տարբերակ դառնալ թե՛ Արեւմուտքի եւ թե՛ Իրանի համար: Այդ մասին հաղորդում է Ինտերֆաքս գործակալությունը, վկայակոչելով տարածաշրջանային տնտեսագիտական հրատարակություններից մեկը:

Ծոցի երկրները Թեհրանին առաջարկում են ուրանի հարստացման բազմազգ կոնսորցիում ստեղծել Իրանի կարիքների համար:

Սաուդյան Արաբիայի արտգործնախարար, իշխան Սաուդ ալ Ֆեյսալ ալ Սաուդի կարծիքով, այդ ձեւով Իրանը կկարողանա շարունակել սեփական ատոմային էներգետիկայի զարգացումը, միաժամանակ փարատելով Արեւմուտքի երկյուղները, թե տվյալ գործունեությունն ուղղված է միջուկային զենքի ստեղծմանը:

ԲՈՒՐՍԱ

Քրդերը հարձակումների թիրախ են դարձել Թուրքիայում

Վերջին օրերին աշխարհի լրատվամիջոցները բազմաթիվ հաղորդումներ են հրապարակել Իրաքի սահմանի մոտ թուրքական զորքերի կուտակման մասին: Թեեւ թուրքական բանակը դեռ չի մտել Իրաք, բայց այդ երկրի սահմանի մոտ ՔԲԿ գրոհայիններ եւ թուրք զինծառայողների միջեւ մերթ ընդ մերթ բախումներ են տեղի ունենում: Դրանք պատրվակ դարձնելով՝ թուրք ծայրահեղականները թիրախ են դարձրել իրենց ոտդ հայրենակիցներին:

Այս կապակցությամբ Փարիզի «Ֆիգարո» թերթը հաղորդում է մի շարք մանրամասնություններ: Սամբուցից ոչ հեռու գտնվող Բուրսա քաղաքը՝ օսմանցիների առաջին մայրաքաղաքը, իր գեղեցիկ մզկիթներով հիշեցնում է Թուրքիայի կայսերական անցյալը: Երկրի արեւմուտքում գտնվող Բուրսան «Ռենո» եւ «Ֆիատ» ընկերությունների ներկայության շնորհիվ դարձել է ավտոմոբիլաշինության կենտրոն:

Համեմատաբար բարեկեցիկ եւ խաղաղ այդ քաղաքը վերջին օրերին ոտդ համայնքի դեմ ուղղված անդրադարձ կատարեցին Բուրսայի Մարդու իրավունքների ընկերակցության նախագահ Աբդուլլազիզ Ամյոլը միջադեպերի վերաբերյալ հրապարակած զեկուցագրում նշում է, որ վերջին 30 տարում քաղաքում նման բան չէր եղել նույնիսկ քաղաքացիական կռիվների ժամանակ: «Այսօր ոտդ լինելը բավական է թիրախ դառնալու համար: Ի դեպ, ես տեղյակ չեմ ամեն ինչին. մարդիկ վախենում են խոսել», ասել է նա «Ֆիգարոյի» թղթակցին:

Հոկտեմբերի 21-ին ՔԲԿ գրոհայինների կողմից 12 թուրք զինվորների սպանությունը Բուրսայում հակաքրդական ելույթների հրահրման ազդակ ծառայեց: Թուրքիայում այսպես կոչված «հակաահաբեկչական պայքարը» հրահրողներից են երկրի ազգայնական կուսակցությունները եւ ռեանշիստական մամուլը:

Բուրսայի կենտրոնում՝ Աքաքուրի արձանի մոտ հավաքվելով, ազգայնամոլների խմբերը փողոցներով անցնում են ծայրահեղ աջ «գորշ գայլերի» կարգախոսներով: Հակաքրդական հարձակումներին մասնակցում են նաեւ Մեծ միության իսլամական-ազգայնական կուսակցության երիտասարդական թեւի մարտիկները:

Առավել վտանգավոր են համարվում ուսուցիչների կողմից հրահրվող բարձրդասարանցիները, որոնք հակաքրդական ցույցեր են անում «Ալլահ աքբար» եւ «հայրենիքն անբաժանելի է» բղավոցներով: Քրդերը վախենում են, որ այդ մոլեռանդ պատանիները հրաման սանալու դեպքում կդիմեն ամեն տեսակ վայրագությունների:

Քաղաքի ոտդ բնակիչներից շատերը պարբերաբար հաշվեհարդարի նպատակով բռնարարքների ասպարեզ է դարձել. հարձակումներ են կատարվում մարդկանց վրա, սպառնալիքներ են հնչում, խանութներ են ոչնչացվում, տուն է հրկիզվում եւ այլն:

Բուրսայի Մարդու իրավունքների ընկերակցության նախագահ Աբդուլլազիզ Ամյոլը միջադեպերի վերաբերյալ հրապարակած զեկուցագրում նշում է, որ վերջին 30 տարում քաղաքում նման բան չէր եղել նույնիսկ քաղաքացիական կռիվների ժամանակ: «Այսօր ոտդ լինելը բավական է թիրախ դառնալու համար: Ի դեպ, ես տեղյակ չեմ ամեն ինչին. մարդիկ վախենում են խոսել», ասել է նա «Ֆիգարոյի» թղթակցին:

Հոկտեմբերի 21-ին ՔԲԿ գրոհայինների կողմից 12 թուրք զինվորների սպանությունը Բուրսայում հակաքրդական ելույթների հրահրման ազդակ ծառայեց: Թուրքիայում այսպես կոչված «հակաահաբեկչական պայքարը» հրահրողներից են երկրի ազգայնական կուսակցությունները եւ ռեանշիստական մամուլը:

Բուրսայի կենտրոնում՝ Աքաքուրի արձանի մոտ հավաքվելով, ազգայնամոլների խմբերը փողոցներով անցնում են ծայրահեղ աջ «գորշ գայլերի» կարգախոսներով: Հակաքրդական հարձակումներին մասնակցում են նաեւ Մեծ միության իսլամական-ազգայնական կուսակցության երիտասարդական թեւի մարտիկները:

Առավել վտանգավոր են համարվում ուսուցիչների կողմից հրահրվող բարձրդասարանցիները, որոնք հակաքրդական ցույցեր են անում «Ալլահ աքբար» եւ «հայրենիքն անբաժանելի է» բղավոցներով: Քրդերը վախենում են, որ այդ մոլեռանդ պատանիները հրաման սանալու դեպքում կդիմեն ամեն տեսակ վայրագությունների:

Քաղաքի ոտդ բնակիչներից շատերը պարբերաբար հաշվեհարդարի

Վախճանվել է Իգոր Մոիսեեւը

Մոսկվայում 101 տարեկան հասակում մահացել է ՌԴ ժողովրդական պարի պետական ակադեմիական անսամբլի հիմնադիր եւ ղեկավար Իգոր Ալեքսանդրովիչ Մոիսեեւը:

Իգոր Մոիսեեւը ծնվել էր Կիեւում 1906-ին: 1920-ականների առաջին կեսին նա Մոսկվայում պար էր ուսանել մասնավոր ստուդիայում եւ պարարվեստի տեխնիկումում: 1924-ին նրան ընդգրկել էին Մեծ թատրոնի հաստիքակազմում: 1930-ից աշխատել էր որպես բալետմայստեր: Մեծ թատրոնում մասնակցել էր «Ֆուտբոլիստ», «Կարմիր կակաչ», «Երեք հաստլիկներ», «Սալամբո» ներկայացումների բեմադրություններին:

Մոիսեեւը ժողովրդական պարի անսամբլը հիմնել էր 1937-ին: Այդ համույթի հետ պարուսույցը հաջողությամբ շրջագայել էր աշխարհի բազմաթիվ երկրներում: Անսամբլի նշանավոր ներկայացումներից էին «ԽՍՀՄ ժողովուրդների պարերը», «Սլավոնական ժողովուրդների պարերը», «Պարտիզանները», «Խաղաղությունն ու բարեկամությունը», «Պոլովեցյան պարերը» (ըստ Բորոդինի երաժշտության), «Լիսայա լեռան գիշերը» (Մուսորգսկի), «Հունական պարերի շարքը» (Թեոդորակիս):

1930-ականներին Մոիսեեւը հայտնի էր նաեւ որպես Կարմիր հրապարակի ֆիզկուլտուրային շերթների բեմադրիչ:

Իգոր Մոիսեեւը Սալինյան երեք մրցանակի, Լենինյան մրցանակի, ԽՍՀՄ եւ ՌԴ պետմրցանակների, Լենինի շքանշանի, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» առաջին աստիճանի շքանշանի դափնեկիր էր:

Պ. Ք.

Մշակույթ

Անմար արժեքները չեն մոռացվում

Հայ կերպարվեստը խոշոր վարպետների պակաս չի զգացել: Այդ ասողաբույլում անմար է Մարիամ Ասլամազյանի ասողը, արվեստագետ, ով հայտնի է ոչ միայն Հայաստանում, այլեւ արտերկրում: Թվում է, թե վրձինը թաթախված է արեւի մեջ, այնման հարուստ, վառ ու գունեղ են նրա կտավները: Նկարչական ձեռագիրը մատնում է նրա հայ լինելը: Նրա ստեղծագործություններում՝ «Հերոսի վերադարձը», «Հայ կանայք» գերիշխում են աշնանային վառ գույները, պահպանվել է հայկական դիմագիծն ու կոլորիտը: 2006-ին ավարտվեց նկարչուհու երկրային կյանքը: Երեկ Կոմիտասի այգու պանթեոնում հավաքված ընկերները, արվեստագետները ու արվեստասերները հիշատակի տուրք մատուցեցին Մարիամ Ասլամազյանի 100-ամյակին:

Մշակույթի նախարարության մշակութային ֆաղաքականության վարչության պետ **Կարո Վարդանյանը** նշում է, որ իրենք առանձնահատուկ երկյուղածությամբ էին պատրաստվում նկարչուհու 100-ամյա հոբելյանին: «Երջանիկ ձեռքերում է, երբ արվեստագետը տոնում է ծննդյան 100-ամյակը: Ցավոք, ամեն ինչ այլ կերպ դասավորվեց: Հրաշալի հայ նկարչուհի է իր կոլորիտով, ստեղծագործություններով»: Նկարիչ Ալեքսանդր Գրիգորյանը Մ. Ասլամազյանի աշակերտն է եղել: «Հախուռն բնավորություն ուներ, ակտիվ անձնավորություն էր ու այդ ակտիվությունը փոխանցում էր մեզ: Սիրում ու հաճախ էր այցելում Աշտարակ: Սիրում էր բնությունը, ծաղիկները, առօրեականի մեջ տեսնում էր բանաստեղծություն, լիրիկա ու այն փոխանցում կտավներին»:

«Իր արվեստով, իր հայրենասիրությամբ կանգնեց մեր մեծերի կողքին: Հոյաս ֆաղաֆացի էր, ապրելով Ռուսաստանում չկորցրեց հայկական դիմագիծը, չմոռացավ հայրենիքը», ավելացնում է նկարիչների միության քարտուղար **Խաչատուր Ազիզյանը**:

Մ. Ասլամազյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ մշակույթի նախարարությունը կազմակերպել է մի շարք միջոցառումներ: Նոյեմբերի 15-ին նկարչուհու ծննդավայր Գյումրիում նախատեսվում է բացել նրա ստեղծագործությունների ցուցահանդեսը, իսկ նոյեմբերի 23-ին Հայաստանի ազգային պատկերասրահում կանցկացվի նկարչուհուն նվիրված հուշցերեկույթ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ մտավորականի դավանանքը

ՀՀ անդրանիկ նամականիշի հեղինակը 60 տարեկան է

Այսօր լրանում է նկարիչ, դիզայներ, ձեւավորող Հարություն Սամուելյանի ծննդյան 60-ամյակը: Մտավորականի հոբելյանին է նվիրված նրա գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսը, որն այսօր կբացվի պրոֆեսոր Արամ Աբրահամյանի հավաքածու-Ռուս արվեստի թանգարանում:

... Իսկ սկզբում եղել է ֆիզիկան: 1970 թ. ավարտելով Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը, Սամուելյանն աշխատանքի է անցնում Հայաստանի գիտությունների ակադեմիայի ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում, ուր 14 տարի անընդմեջ զբաղվել է գիտությամբ: 1982-ին պատշտպանում է թեզ, տանալով ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Լուրջ գիտությանը չի խանգարում, որպեսզի բացահայտվի շնորհալի երիտասարդի գեղարվեստական ձիրքը: 1973-ից ի վեր նա հաջողությամբ ստեղծագործում է գրաֆիկական դիզայնի ասպարեզում: Սամուելյանը ոչ միայն ձեւավորում եւ նկարազարդում է գրքեր, հանդեսներ, տպագիր այլ արտադրանք, այլեւ նախագծում ու մշակում է ֆիլմային ոճեր, տառատեսակներ: Ուստի պատահական չէ, որ 1984-ին նա դառնում է «Մշակույթ» հանդեսի գեղարվեստական խմբագիր: Գլխավոր խմբագիր Էմիլ Դանielյանի ու Հ. Սամուելյանի ստեղծագործական տանդեմի շնորհիվ այդ պարբերականը ժամանակվա հայաստանյան հանդեսների եւ ամսագրերի մեջ ամենավառն էր ու ինքնատիպը, աչքի ընկնելով ոչ միայն խորը ու հետաքրքրական բովանդակությամբ, այլեւ նուրբ ճաշակով, ժամանակակից, համարձակ ձեւավորմամբ:

1976-ից Սամուելյանը մասնակցել է կերպարվեստի, այդ թվում ծաղրանկարի մոտ 70 ցուցահանդեսների մեր հանրապետությունում, խ. Միությունում եւ դրա սահմաններից դուրս: Նրա գործերը նշվել են հանրապետական ու միջազգային տարաբնույթ մրցանակներով ու դիպլոմներով:

1992-ին Հարություն Սամուելյանն իրականացրեց իր ստեղծագործական կյանքի, մեր կարծիքով, կարեւորագույն գործը: Նա ստեղծեց Հայաստանի նոր անկախ հանրապետության առաջին նամականիշը: Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր, վաղամեռիկ լրագրող Սամվել Շահմուրադյանի առաջարկով նա իր մասնակցությունն է բերում առաջին նամականիշի մրցույթին ու արժանանում գլխավոր մրցանակի: Հավերժական Մասիսների ֆոնին եռագույն ծիածանը թեւեւ այն լավագույն տարրերն էին, որ անպայման պիտի տեղ գտնեին այդ մեր առաջնեկի վրա, եւ Սամուելյան նկարիչը, մտավորական ֆաղաֆացին ու հայն այդ խնդիրը կատարեց փայլուն ձեւով:

1992-2004-ին լինելով «Նամականիշ» ընկերության գլխավոր նկարիչը, նա հեղինակել է ՀՀ ու Լեռնային Ղարաբաղի հանրապետության տասնյակ նամականիշներ, գեղաթերթիկներ, ծրարներ եւ դրոշմակներ, որոնցից շատերն արժանացել են միջազգային հեղինակավոր մրցանակների, փառք ու պատիվ բերելով մեր հանրապետությանը:

Մեր բարեկամի՝ անկախ պետականությանը մատուցած ծառայությունները սրանով չեն ավարտվում: Նա նաեւ Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի ժամանակակից գրաֆիկական մեկնության համահեղինակն է: Մասնակցել է նաեւ Հայաստանի Հանրապետության պետական պարգեւների պարգեւանշանների, ֆաղաֆամայր Երեւանի զինանշանի նախագծերի մրցույթներին, հաղթել է ՀՀ Կենտրոնական բանկի, երկրի մի շարք նախարարությունների ու գերատեսչությունների խորհրդանիշների մշակման մրցույթներում:

Արդեն հինգ տարի է, ինչ նկարիչն իր տաղանդն ի սպաս է դրել Հայաստանի հուշադրամների ստեղծման դժվար ու պատասխանատու գործին: Նրան է պատկանում մի շարք յուրահատուկ ոսկե եւ արծաթե հուշադրամների էսքիզների հեղինակումը: Իսկ 2005-ին Հ. Սամուելյանն սկսեց աշխատել նաեւ հուշամեդալի ժանրում՝ ստեղծելով Հայոց մեծ եղեռնի 90-րդ տարելիցին նվիրված հուշամեդալը, որը հատվել է Երեւանի ոսկերչական գործարանում: Այս գործի թեման օգտագործվել է «Ցեղասպանության ճանաչման գործին մատուցած ավանդի համար» մեդալում:

Հոբելյարը Հայաստանի նկարիչների միության, դիզայներների միության, «Դիզայների միություն» միջազգային ընկերակցության գործում անդամ է: 2001-ին ընտրվել է ֆիլատելիայի ու դրամագիտության համահայկական ակադեմիայի հիմնադիր կազմում:

Շնորհավորելով հոբելյարին 60-ամյակի առթիվ մաղթում ենք նրան նորանոր տաղանդավոր իրագործումներ:

ՏԻԳՐԱՆ ԱՎԱՆՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔ

«Սբ. Սահակ եւ Սբ. Մեսրոպ» մեդալը՝ Չավեն Մսըրյանին

Փասադենայի (Կալիֆոռնիա) Ալեք Մանուկյան կենտրոնում տեղի է ունեցել հարգանքի մի միջոցառում ի պատիվ նվիրյալ եւ սիրելի տնօրեն, ուսուցիչ եւ պատմաբան Չավեն Մսըրյանի, հաղորդում է «Արմինյոն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հոկտեմբերի 20-ի համարը:

Միջոցառումը կազմակերպված է եղել ՀԲԸՄ-ի հարավային Կալիֆոռնիայի շրջանային կոմիտեի կողմից Հյուսիսային Ամերիկայի հայ ավետարանական միության եւ Ավետարանական ֆոլեջի (Արեւմտյան ափի) սանուց միության համագործակցությամբ:

Ավելի քան 600 հոգու ներկայությամբ, որոնց թվում են եղել Հովնան արք. Տերտերյանը, պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը, դոկտ. Վիգեն Ահարոնյանը, վերապատվելիներ Ժոզեֆ Մաթոսյանը, Պարես Երեցյանը եւ մշակութային ու ֆաղաքական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, հանդիսությունը վարել է դոկտ. Գետրգ Քեշիշյանը, որը վեր է հանել Մսըրյանի քառասուն տարիների նվիրվածությունը կրթական եւ եկեղեցական գործին: Գեղարվեստական մասին մասնակցել են Սալբի Գրիգորյանը, Անահիտ Ներսիսյանը (սոպրանո), Լետն Աբրահամյանը (դաշնամուր) եւ Թագուհի Արզումանյանը (արտասանություն):

Վերջում Հովնան արք. Տերտերյանը Գարեգին Բ ամենայն հայոց կաթողիկոսի անունից «Սբ. Սահակ եւ Սբ. Մեսրոպ» մեդալն է նվիրել Չավեն Մսըրյանին առ ի գնահատանք նրա ազգասիրական գործունեության: Պարոն Մսըրյանը, հուզաթաթախ խոսքերով իր շնորհակալությունն է հայտնել ամենայն հայոց հայրապետին, Հովհան արքեպիսկոպոսին, ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանին եւ բոլոր մյուսներին, ովքեր այդ օրվա միջոցառումը հիշարժան են դարձրել նրա համար:

Հ. Ծ.

ԱՐՅԱԳԱՆՔՈՒՄ ԵՆ ԿՍՏԱՐՎԱՍԻՆ

«Եղակի ամոթ մեզ»

«Դու նման բախտի արժանի չէիր, Մարկոս: Մեր ծնողները այդպիսի վերաբերմունքի արժանացան ցեղասպանության ժամանակ: Բայց նրանք թուրքեր էին: Իսկ դու, կարծես, անվտանգ ու աղահով մեր երկրում էիր աղրում: Գնացել էիր այնտեղ վայելելու վաստակած արդար հանգիստդ, եւ ոչ թե սպանվելու հայ մարդասպանի կողմից: Ամոթ մեզ բոլորիս: Երիցս ամոթ», գրում է «Արմինյոն միրոր սփեքթեյթր» թերթի հոկտեմբերի 20-ի համարում Թուրքիայում ծնված եւ այժմ ԱՄՆ-ում ապրող հայտնի նկարիչ եւ ֆիլմարտադրող **Աբո Թորոսյանը**:

«Նա գանձ էր, որին իր ողջությանը չկարողացան գնահատել ամբողջությամբ», շարունակում է նա, ավելացնելով, որ 1930 թվին Ռուսաստանից Իրան գաղթած հայի ընտանիքում ծնված երեխան հետագայում Հռոմում ավարտում է Գեղարվեստի ակադեմիան եւ Թեհրանում բացում էսթետիկայի պատկերասրահը: Որոշ ժամանակ ԱՄՆ-ում ապրելով, նա այնուհետեւ դասավանդում է մի քանի համալսարաններում: Ճանաչված է գլխավորապես 60-ական թվերի իր «Երկիր մոլորակի ստեղծագործություններով», որոնք կավի եւ եղեգի յուրօրինակ միաձուլում են: Այդ ժամանակ դա արվեստի միջազգային շարժման երեւույթներից էր, որն սկիզբ էր առել ամերիկյան աբստրակտ էքսպրեսիոնիզմից անմիջապես հետո: Նյու Յորքի իր պատկերասրահը նա կոչել էր Արշիլ Գորկու անունով:

Նա իսկական փիլիսոփա էր: Մշարթուն ցավ էր կրում իր հոգում, որի մասին չէր արտահայտվում: Դա իր դստեր անժամանակ կորուստն էր: Բայց նա սիրահարված էր Հայաստանին եւ աներեւակայելի է, որ հենց այնտեղ նա նման տխուր վախճան ունեցավ:

Հոդվածի վերջում Թորոսյանը գրում է, որ 2007 թվականը լավ տարի չեղավ եւ մենք կորցրինք տելեւանի տեր երկու մարդկանց՝ Հրանտ Դինքին եւ Մարկոս Գրիգորյանին, որոնց համար, նա հույս է հայտնում, որ հուշարձաններ կկանգնեցվեն Երեւանում:

Հ. Ծ.

Մշակույթը բոլորինն է

Սթիվի Ուոնդեր, Ռեյ Չարլզ, Անդրեա Բոչելի: Այս երգիչները համաշխարհային երաժշտական օլիմպոսի ամենահայտնի դեմքերից են, որոնց սիրում ու մեծարում են նախ եւ առաջ յուրահատուկ ձայնային տեմբրի, մելամաղձոտ ու պրոֆեսիոնալ կատարումների համար: Նշված ու բազմաթիվ այլ արվեստագետների հաշմանդամության դրումը չի խանգարել հասնել մեծ բարձունքների: Հայաստանում, ցավոք, պատկերն այլ է: Բազմաթիվ հաշմանդամ կատարողներ, արվեստագետներ զրկված են մշակութային անցուդարձին մասնակցելու հնարավորությունից: «Վերացնենք խոչընդոտները միասին», «Անարգել տեղաշարժվելն իմ իրավունքն է», «Տարբեր ենք, բայց՝ հավասար», «Թեհահարթակը մուտքի իմ «բանալին է»: Այս եւ նմանատիպ կոչերով երեկ Շառլ Ազնավուրի հրապարակում «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը անցկացրեց «Մշակույթը բոլորինն է» խորագրով ակցիա: Ծրագրի նպատակն էր խթանել հաշմանդամների մշակութային ինտեգրումն ու հասարակության տարբեր շերտերի ուշադրությունը սեւեռել այդ խնդրին:

«Ունիսոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն **Արմեն Ալավերդյանը** նշում է, որ ակցիան ուշացած չէ: «Թեպետ մշակութային օջախները վերանորոգվեցին, ոչինչ չի արվում սայլակով մարդկանց համար: Ա. Խաչատրյան համերգասրահը, մնացած թատրոնները գտնվում են առաջին հարկում, այնպես որ այդ վայրերում թեհահարթակներ կառուցելը ֆինանսական լուրջ դժվարություններ չեն պահանջում»: 27-ամյա **Գոհար Ստեփանյանը** երգում է «Փարոս» կամերային երգչախմբում ու «Նոր ձայներ» կվինտետում: Սխալ վիրահատության պատճառով արդեն 1 տարի շարժվում է անվասայլակով: Ասում է՝ այդ տարիների ընթացքում փոխվել է իր վերաբերմունքը մարդկանց ու կյանքի նկատմամբ: «Մեկ օրով ամեն ինչ չի փոխվի: Հույս ունեմ, որ մենք կշարունակենք ու կհասնենք մեր ուզածին: Ես ուզում եմ հաճախել մշակութային օջախներ, մասնակցել մշակութային կյանքին»:

Ակցիան իրականացվում էր ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանատան աջակցությամբ: «Արդյոք ճիշտ չէ՞ր լինի այդ գումարով թեհահարթակ կառուցել՝ օրինակ ծառայելով մնացած կազմակերպություններին» հարցին, Մեծ Բրիտանիայի փոխդեսպան **Գիդեոն Դրուիցրուսը** նշեց, որ խնդիրն այդ կերպ չի լուծվի: «Մեր նպատակն է բարձրացնել իրազեկությունը ու խնդիրը շոշափելի դարձնել»:

Հ. Հ.

Կարեն Սմբատյանի հոբելյանական ցուցահանդեսը

Ժողովրդական թանգարանում երեկ բացվեց գեղանկարիչ Կարեն Սմբատյանի հոբելյանական ցուցահանդեսը: Այս թանգարանի սրահներում նրա աշխատանքների 4-րդ անհատական ներկայացումն էր: Ցուցադրված էին Կ. Սմբատյանի դիմանկարները, նատյուրմորտները, ազգային հոգեւոր թեմայով գործեր: Գունային վառ արտահայտչականությամբ հայտնի սմբատյանական նկարչությունը վաղուց արդեն իր ուրույն տեղն ունի արդի հայ կերպարվեստի գունապնակում:

Ներկա էին պատշտոնատար անձինք, մտերիմներ, մտավորականներ: Ընդգծվեց մասնավորապես Սմբատյան-արվեստագետին բնորոշ ազգային նկարագիրը, նկարներում արտահայտված հայկականության ներշնչանքները:

Ավելի հանգամանորեն՝ **«Ազգի»** հաջորդ համարում:

Մ. Ռ.

www.azg.am www.azgdaily.com www.azgdaily.eu

Հայ շախմատիստները հաղթեցին թուրքերին ու ադրբեջանցիներին

Հայ շախմատիստներն առանձնակի անհամբերությամբ էին սպասում Եվրոպայի թիմային առաջնության 5-րդ տուրին, քանի որ տղամարդկանց հավաքականը մրցում էր թուրքերի, իսկ հայ շախմատիստուհիներն՝ ադրբեջանցիների հետ: Հուսախություն մեր մարզասերների, Հայաստանի երկու թիմերն էլ հաղթեցին միեւնույն 2,5-1,5 հաշվով:

Տղամարդկանց հավաքականի հաղթանակն առահովեց երկրորդ տեղը: Վրաստանի (14,5), Ռուսաստանի (13,5) եւ Սլովենիայի (13) հավաքականները: Վրաց շախմատիստուհիները 3-1 հաշվով պարտության մատնեցին Հունաստանի 1-ին հավաքականին: Իսկ սլովենացիները 2,5-1,5 հաշվով առավելության հասան հունգարացիների նկատմամբ:

Եվրոպայի թիմային առաջնությունում հաշվարկվում են նաեւ անհատական ցուցանիշները: Տղամարդկանց մրցաշարում բոլորից շատ միավոր է վաստակել ռուսաստանցի Ալեխանդր Մորոզեւիչը, որը 5 հնարավորից ունի 4,5 միավոր: Իսկ ահա իսրայելցի Միխայել Ռոյիզը 100 տոկոսանոց արդյունք ունի: Նա շահել է բոլոր չորս պարտիաները: 5 հնարավորից 4-ական միավոր են վաստակել Մագնուս Կառլսենը (Նորվեգիա), Ֆրանսիսկո Վալեխոն (Իսպանիա), Ֆերենց Բերկեշը (Հունգարիա), Մարկ Հեբդենը (Անգլիա) եւ Լյուդվիգ Համերը (Նորվեգիա): Հայ շախմատիստներից լավագույն արդյունքի է հասել Գաբրիել Սարգսյանը, որը 5 հնարավորից վաստակել է 3,5 միավոր (70 տոկոսը):

Կանանց մրցաշարում 5 հնարավորից 4,5-ական միավոր ունեն Ժաոգին Պենսը (Հոլանդիա), Իվետա Ռայլիխը (Լեհաստան), Աննա Ուշենինան (Սլովենիա), Յուդանիա Հեռնանդեսը (Իսպանիա) եւ Նանա Ջագնիձեն (Վրաստան): Հայ շախմատիստուհիներից լավագույնը էլինա Դանիելյանի արդյունքն է՝ 4 միավոր 5 հնարավորից:

8-ական միավորով հաջորդ տեղերում են Վրաստանի (14,5), Ռուսաստանի (13,5) եւ Սլովենիայի (13) հավաքականները: Վրաց շախմատիստուհիները 3-1 հաշվով պարտության մատնեցին Հունաստանի 1-ին հավաքականին: Իսկ սլովենացիները 2,5-1,5 հաշվով առավելության հասան հունգարացիների նկատմամբ:

Եվրոպայի թիմային առաջնությունում հաշվարկվում են նաեւ անհատական ցուցանիշները:

խաղատախտակի վրա հանդես եկած Վլադիմիր Հակոբյանը, որին նախորդ տուրում հանգստանալու հնարավորություն էր ընձեռվել: Նա հաղթեց Սուաթ Աթալիկին: Մնացած պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Հաշտություն կնքեցին Առնյանն ու Գուրեւիչը, Սարգսյանն ու Հազնեդարոլլուն, Լպուտյանն ու Էդոլլուն: Այս հաղթանակից հետո մեր շախմատիստները 7 միավորով (ընդհանուրը՝ 12 միավոր) ընթանում են 10-րդ տեղում: 6-րդ տուրում մեր հավաքականի մրցակիցը կլինի Հունգարիայի ընտրանին, որը եւս վաստակել է 7 միավոր:

Կանանց հավաքականում մրցակիցների նկատմամբ հաղթանակներ տոնեցին մեր առաջատարները, ինչն էլ կանխորոշեց Ադրբեջանի հավաքականի հետ հանդիպման ելքը: Էլինա Դանիելյանը հաղթեց գրոսմայստեր Զեյնաբ Մամեդյարովային, իսկ Լիլիթ Մկրտչյանը պարտության մատնեց գրոսմայստեր Իլահա Կադիմովային: Երրորդ խաղատախտակի վրա Նելլի Աղինյանը ոչ-ոքի ավարտեց մրցախաղը Թուրկան Մամեդյարովայի հետ: Իսկ ահա Սիրանուշ Անդրեասյանը զիջեց միջազգային վարպետ Նարգիզ Ումուդովային: Մեր հավաքականը 6 միավորով (ընդհանուր՝ 11) զբաղեցնում է 12-րդ տեղը: 6-րդ տուրում հայ շախմատիստուհիները կմրցեն ռումինացիների հետ:

Տղամարդկանց մրցաշարում 5-րդ տուրի կենտրոնական հանդիպումը առաջատարների՝ Ռուսաստանի եւ Ադրբեջանի հավաքականների մրցախաղն էր: Այս թիմերը մինչ այդ չորսական հաղթանակ էին տոնել, ընդհանուր միավորների քանակն էլ հավասար էր: Այնպես որ առաջատարների մրցախաղի արդյունքը չափազանց կարեւոր էր: Ռուսները պարզապես ջախջախեցին ադրբեջանցիներին՝ մրցակցին զիջելով միայն կես միավոր: Սվիդլերը հաղթեց Մամեդյարովին, Մորոզեւիչն առավելության հասավ Ռաջաբովի նկատմամբ, իսկ Ալեխեեւը պարտության մատնեց Հուսեյնովին: Միակ ոչ-ոքին գրանցվեց Գրիշչուկ-Ղասիմով պարտիայում: Այս հաղթանակի շնորհիվ ռուսները վաստակեցին 10 միավոր (ընդհանուրը՝ 15) եւ միանձնյա գլխավորեցին աղյուսակը: ՌԴ հավաքականը մրցաշարի ավարտից չորս տուր առաջ չեմպիոնի տիտղոսը նվաճելու լուրջ հայտ ներկայացրեց: 8-ական միավոր ունեն Սլովենիայի (ընդհանուր միավորները՝ 13), Իսրայելի (12,5) եւ Ադրբեջանի (12) հավաքականները: Սլովենիայի եւ Իսրայելի հավաքականները միեւնույն 2,5-1,5 հաշվով պարտության մատնեցին համապատասխանաբար շվեդներին ու հոլանդացիներին: Առավել ուշագրավ արդյունքներն են՝ Ուկրաինա-Ֆրանսիա՝ 2-2, Բուլղարիա-Չեխիա՝ 2-2, Անգլիա-Իսպանիա՝ 2-2, Դանիա-Հունգարիա՝ 0,5-3,5, Վրաստան-Բելգիա՝ 4-0: 6-րդ տուրում ուշադրության կենտրոնում կլինեն Ռուսաստան-Իսրայել, Սլովենիա-Ադրբեջան, Չեխիա-Ուկրաինա, Ֆրանսիա-Բուլղարիա մրցախաղերը:

Կանանց մրցաշարում 9 միավորով (ընդհանուրը՝ 15) միանձնյա առաջատարը Լեհաստանի հավաքականն է: 5-րդ տուրում լեհերն առաջին միավորը կորցրին՝ ոչ-ոքի խաղալով ռուսների հետ: Ռուսներից հաջողության հասավ Եկատերինա Կոռբուտը՝ հաղթելով Մարթա Պրժեժդզկայային: Լեհերից հաղթեց Իվետա Ռայլիխը՝ պարտության մատնելով Տատյանա Կոսինցեւային: Ոչ-ոքի ավարտվեցին Կոստենյուկ-Սոսկո, Նադեժդա Կոսինցեւա-Զավադզկա պարտիաները:

Տղամարդկանց մրցաշարում բոլորից շատ միավոր է վաստակել ռուսաստանցի Ալեխանդր Մորոզեւիչը, որը 5 հնարավորից ունի 4,5 միավոր: Իսկ ահա իսրայելցի Միխայել Ռոյիզը 100 տոկոսանոց արդյունք ունի: Նա շահել է բոլոր չորս պարտիաները: 5 հնարավորից 4-ական միավոր են վաստակել Մագնուս Կառլսենը (Նորվեգիա), Ֆրանսիսկո Վալեխոն (Իսպանիա), Ֆերենց Բերկեշը (Հունգարիա), Մարկ Հեբդենը (Անգլիա) եւ Լյուդվիգ Համերը (Նորվեգիա): Հայ շախմատիստներից լավագույն արդյունքի է հասել Գաբրիել Սարգսյանը, որը 5 հնարավորից վաստակել է 3,5 միավոր (70 տոկոսը):

Կանանց մրցաշարում 5 հնարավորից 4,5-ական միավոր ունեն Ժաոգին Պենսը (Հոլանդիա), Իվետա Ռայլիխը (Լեհաստան), Աննա Ուշենինան (Սլովենիա), Յուդանիա Հեռնանդեսը (Իսպանիա) եւ Նանա Ջագնիձեն (Վրաստան): Հայ շախմատիստուհիներից լավագույնը էլինա Դանիելյանի արդյունքն է՝ 4 միավոր 5 հնարավորից:

Մարտինա Հինգիսը թողնում է կորտը

Շվեյցարացի հանրահայտ թենիսիստուհի Մարտինա Հինգիսը հայտարարել է մեծ թենիսին հրաժեշտ տալու մասին: Այդ առիթով նա մամուլի ասուլիս էր հրավիրել, որտեղ իր որոշումը պատճառաբանել էր տարիքով ու վնասվածքներով: Սակայն կասկածներ կան, որ թենիսին հրաժեշտ տալու բուն պատճառն Ուիմբլդոնի մրցաշարից հետո անցկացված դոպինգ-սուգման դրական արդյունքն է: Թենիսիստուհու արյան անալիզում կոկաին էր հայտնաբերվել: Այս առնչությամբ Հինգիսը հայտարարել էր, որ երբեք թմրանյութեր չի օգտագործել, ուստի իրեն մեղավոր չի ճանաչում: Ի դեպ, կանանց թենիսի ընկերակցության ղեկավար Լարի Սկոտն էլ նշել է, որ կոկաինի օգտագործման փաստի առնչությամբ ոչ մի պատշաճ փաստաթուղթ չեն ստացել:

Մարտինա Հինգիսը ծնվել է 1980-ի սեպտեմբերի 30-ին չեխական Կոտիզե քաղաքում: Նրա ծնողները, որ անմիջական կապ ունեին թենիսի հետ, ի պատիվ անվանի թենիսիստուհի Մարտինա Նավրատիլովայի, նորածնին Մարտինա անվանակոչեցին: Հինգիսն առաջին անգամ թենիսի ռակետը վերցրեց 3 տարեկանում, իսկ 2 տարի անց մասնակցեց առաջին մրցաշարին: 6,5 տարեկանում նա դարձավ մինչեւ 10 տարեկանների Չեխոսլովակիայի չեմպիոն: 3որ տարեկանում նա երկրորդ անգամ ատելի դարձավ մոր հետ մեկնեց Շվեյցարիա, որտեղ աղջնակով զբաղվեցին թենիսի հմուտ մասնագետները:

1989-1993-ին Մարտինան հաղթող է ճանաչվել Շվեյցարիայում անցկացված բոլոր մրցաշարերում: Այնուհետեւ նա երկրորդ անգամ դարձել է Եվրոպայի չեմպիոն: Առաջին լուրջ հաջողությունը պրոֆեսիոնալ թենիսում 1993-ին էր, երբ Հինգիսը հաղթող ճանաչվեց «Ռոլան Գարոսի» պատանեկան մրցաշարի մենախաղում եւ զուգախաղում: Նա դարձավ «Մեծ սաղավարտի» մրցաշարերի պատանեկան մրցումների ամենաերիտասարդ չեմպիոնը (13 տարեկանում)՝ գերազանցելով Զենիֆեր Կաղրիատիի ռեկորդը: Հաջորդ տարի նա հաջողությունը կրկնեց Ուիմբլդոնի պատանեկան մրցաշարում՝ դառնալով այդ մրցաշարի ամենաերիտասարդ հաղթողը: 1996-ին Հինգիսը Հելենա Սուկովայի հետ զուգախաղում հաղթող ճանաչվեց Ուիմբլդոնի մրցաշարում՝ շահելով «Մեծ սաղավարտի» մրցաշարերում իր առաջին մրցանակը: Մեծ հաջողության հասավ Հինգիսը 1997-ին՝ հանդես գալով «Մեծ սաղավարտի» բոլոր չորս մրցաշարերի եզրափակիչներում՝ զիջելով միայն «Ռոլան Գարոսում»: Այդ տարի նա անցկացրած 80 հանդիպումներից միայն 5-ում էր պարտվել: Ընդհանուր առմամբ Հինգիսը մենախաղում 43 մրցաշարերի հաղթող է ճանաչվել: 2002-ին շվեյցարացի թենիսիստուհին ծանր վնասվածք ստացավ, որի պատճառով վճռեց ավարտել ելույթները մեծ թենիսում: Սակայն 3,5 տարի անց նա կրկին կորտ վերադարձավ՝ իր մրցանակների թիվն ավելացնելով եւ 5-ով: Ինչպես երեւում է, այս անգամ Հինգիսը վերջնականապես է հեռանում թենիսից:

ԱՇԽԱՐՀԻ ՍՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ

Մեր բռնցքամարտիկները դուրս մնացին մեդալների համար պայքարից

Հայաստանի հավաքականի բռնցքամարտիկներն ավարտեցին ելույթները Չիկագոյում ընթացող աշխարհի առաջնությունում: Հովհաննես Դանիելյանը, Հրայր Ջավախյանն ու Էդուարդ Համբարձումյանը, որ նախորդ օրերին օլիմպիական ուղեգիր էին նվաճել, չկարողացան շարունակել պայքարը մեդալների համար:

Քառորդ եզրափակիչում Հովհաննես Դանիելյանը մինչեւ 48 կգ քաշային կարգում 6-18 հաշվով զիջեց թայլանդցի Ամնար Ռուենռոենգին: Կիսաեզրափակիչում թայլանդցին ուժերը կչափի Ֆիլիպինցի Հարի Տանամորի հետ: Վերջինս 17-7 հաշվով առավելության էր հասել ամերիկացի Լուիս Յանեզի նկատմամբ: Կիսաեզրափակիչի մյուս զույգը կազմել են ֆրանսիացի Նորդինե Ջուբալին եւ չինացի Զոու Շիմինգը:

Մինչեւ 60 կգ քաշային կարգում Հրայր Ջավախյանը 12-27 հաշվով զիջեց իտալացի Դոմենիկո Վալենտինոյին: Վերջինս կիսաեզրափակիչում կմրցի ԿԺԴՀ-ի ներկայացուցիչ Կիմ Սոնգ Գուկի հետ, որը 23-6 հաշվով հաղթել էր կոլումբիացի Դաուլեյ Պերեսին: Կիսաեզրափակիչի մյուս մենամարտում կհանդիպեն անգլիացի Ֆրանկ Գավինը եւ ռուսաստանցի Ալեխեյ Տիշչենկոն:

Ցավոք Էդուարդ Համբարձումյանին էլ չհաջողվեց մտնել կիսաեզրափակիչ: Նա համառ մրցապայքարում 6-10 հաշվով զիջեց ճապոնացի Մասասուգու Կավաչիին: Առաջին ռաունդը հայ բռնցքամարտիկը շահեց 3-2 հաշվով, երկրորդում զիջեց 2 միավորի տարբերությամբ (1-3): Երրորդ ռաունդում հաշիվը հավասար էր (2-2): Ամեն ինչ վճռվեց չորրորդ ռաունդում, որում ճապոնացին հաղթեց 3-0 հաշվով: Մինչեւ 64 կգ քաշային կարգում ճապոնացին կմրցի ղազախստանցի Սերիկ Սապիեւի հետ: Մյուս զույգը կազմել են անգլիացի Բրադլեյ Սաունդերսն ու ռուսաստանցի Գենադի Կովալյովը:

Նալբանդյանը կրկին հաղթեց Ֆեդեռերին

Արգենտինահայ թենիսիստ Դավիթ Նալբանդյանն ընթացիկ մրցաշրջանում երկրորդ անգամ հաղթեց թենիսիստների դասակարգման առաջատար Ռոջեր Ֆեդեռերին: Դա տեղի ունեցավ Փարիզում ընթացող թենիսի «Masters» կարգի մրցաշարի 3-րդ փուլում, որի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 2 մլն 825 հազար եվրո է: Հիշեցնենք, որ առաջին անգամ Նալբանդյանը Ֆեդեռերին հաղթել էր Մադրիդի «Masters» կարգի մրցաշարի եզրափակիչում: Եվ ահա պատմությունը կրկնվեց: Առաջին խաղափուլը Նալբանդյանը շահեց 6-4 հաշվով, երկրորդում առավելության հասավ 7-6 հաշվով: Նշենք, որ ընթացիկ մրցաշրջանում Ֆեդեռերը դեռեւս այսքան շուտ պայքարից դուրս չէր մնացել:

Նալբանդյանը քառորդ եզրափակիչում կհանդիպի իսպանացի Դավիթ Ֆեդեռերի հետ: Մինչ այդ Նալբանդյանը պայքարից դուրս էր մղել իսպանացիներ Ալմագրո Նիկոլասին (6-4, 6-4) եւ Կառլոս Մոյային (6-4, 6-4):

Պայքարը կշարունակի նաեւ Միխայիլ Յուժնին, որը հաղթեց Թոմի Հաասին (6-4, 1-6, 6-3): Մարկոս Բագդաթիսն առավելության հասավ Նիկոլայ Դավիդենկոյի նկատմամբ (6-2, 6-2): Քառորդ եզրափակիչ են դուրս եկել նաեւ Դավիթ Ֆեդեռերը, Էնդի Մարեյը, Ռիշար Գասկեն, Տոմի Ռոբրեդոն եւ Ռաֆայել Նադալը:



Հաջիեւսկին կմարզի Ադրբեջանի հավաքականը

Եվրո-2008-ի ընտրական մրցաշարի ավարտական երկու հանդիպումներում ֆուտբոլի Ադրբեջանի հավաքականը կգլխավորի «Բաքվի» գլխավոր մարզիչ Զոկիչ Հաջիեւսկին: Ֆուտբոլի Ֆեդերացիայի մարզչական խորհրդի նիստում բարձրագույն խմբի թիմերի մարզիչներին առաջարկվել էր գլխավորել հավաքականը: Նրանցից միայն մակեդոնացի Հաջիեւսկին էր ցանկություն հայտնել գլխավորել հավաքականը:

Կիարգեն ավիավթարի զոհերի հիշատակը

Այս օրերին «Մանչեսթր յունայթեդի» երկրպագուները զբաղված են բավական հուզիչ արարողությամբ: Նրանք յուրօրինակ ստորագրահավաք են կազմակերպել հօգուտ այն բանի, որ 2008 թ. փետրվարի 9-ին «Մանչեսթր Սիթիի» հետ կայանալիք խաղում Ալեխ Ֆերգյուսոնի սաները խաղադաշտ դուրս գան այնպիսի մարզահագուստով, ինչպիսին կրում էին 50 տարի առաջ ավիավթարի զոհ դարձած «Մանչեսթր յունայթեդի» ֆուտբոլիստները՝ դրանով իսկ հարգելով զոհերի հիշատակը:

Հիշեցնենք, որ 1958 թ. փետրվարի 6-ին Մյունխենի օդանավակայանում թռիչքի ժամանակ վթարի ենթարկված ինքնաթիռում էին նաեւ «Մանչեսթր յունայթեդի» ֆուտբոլիստները: Վթարի հետեւանքով զոհվել էին թիմի 8 ֆուտբոլիստներ, այդ թվում եւ համաշխարհային ֆուտբոլի «ծագող աստղ», 19-ամյա Դանկան Էդվարդսը: Իսկ ահա անգլիական ֆուտբոլի առագա լեգենդ Բոբի Չարլտոնը հրաշքով ողջ էր մնացել:

Եվ ահա այժմ ֆուտբոլասերներն առաջարկում են ֆուտբոլիստներին խաղադաշտ դուրս գալ հատուկ կարմիր մարզաշապիկներով, ընդ որում՝ դրանց վրա չպետք է գրված լինեն ազգանուններ եւ տեղադրված չլինեն հովանավորների գովազդային մակագրություններ: Մեկնարկային կազմի ֆուտբոլիստները պետք է խաղադաշտ դուրս գան 1-11 համարի մարզաշապիկներով, ինչպես ընդունված էր նախկինում: Այդ խաղից ստացվելիք ողջ հասույթն առաջարկվում է փոխանցել ավիավթարի զոհերի ընտանիքներին:

Ֆուտբոլասերների այս քայլը բավական մեծ արձագանք է գտել: Արդեն հավաքվել է մոտ 1500 ստորագրություն: «Մանչեսթր յունայթեդի» պաշտոնական ներկայացուցիչը լավ գաղափար է համարել սկսված ակցիան: Սակայն նա միաժամանակ նշել է, որ միջոցառման կազմակերպման հարցը պետք է քննարկել թիմի հովանավորների հետ, որոնց խորհրդանիշները ներկայում զարդարում են «Մանչեսթր յունայթեդի» ֆուտբոլիստների մարզաշապիկները:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Հայտարարություն**

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՔՍԱ

Քյուրքջյանն ու Ուզունյանն ընդդեմ Աքսայի

Kyurkjian, et. al, v. AXA, S. A., et. al., Case No: CV 02-01750 and Ouzounian, et. al., v. AXA, S. A., et. al., Case No: CV 05-02596 (Collectively, the «Actions»), in the United States District Court, Central District of California, (the «Court»)

Բոլոր նրանք, ովքեր ԱՔՍԱ-ի մոտ ապահովագրություն ունեցող անձանց ժառանգորդներն են եւ շահագրգռված են հայց ներկայացնել վերոնշյալ դատերի կապակցությամբ, կարող են ԱՔՍԱ-ի ապահովագրյալների ցանկը ուսումնասիրել դիմելով

www.armenianinsurancesettlementAXA.com
ինտերնետային կայքին:

Հայցի դիմումը եւ այն լրացնելու կարգը տրված է անգլերենով եւ հայերենով: Հայցի դիմումը պատվիրված փոստով ուղարկել Կարգավորման Հիմնադրամի խորհրդին ոչ ուշ քան **2008 թ. հունվարի 1-ը,** հետեւյալ հասցեով՝

Kurkjian and Ouzounian v. AXA
Settlement Administrator
AXA Settlement Claim Fund
900 Wilshire Blvd, Suit 614
Los Angeles, CA 90017

Բոլոր դիմումները, որոնք նշված ժամկետից ուշ թվական կկրեն ծրարների վրա, հաշվի չեն առնվելու:

Հայաստանի Թեմերյան մշակութային միության
«Բաբկեն եւ Անահիտ Մկրյան»
2006 թ. մրցանակը
ֆանդակագործ
Արսեն Չամամչյանին
հանձնելու հանդիսավոր արարողություն

Արարողությունը տեղի կունենա ***2007 թ. նոյեմբերի 5-ին, ժամը 14:00-ին,*** Թեմերյան կենտրոնի մեծ դահլիճում (Խանջյան 50):

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/308 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կարիքների համար Գեղարքունիքի մարզի Մարտունու թիվ 2 միջ. դպրոցի մարզադահլիճի նորոգման եւ Մաքենիսի միջ. դպրոցի ներքին հարդարման աշխատանքների իրականացման նպատակով:**

Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 1500 ՀՀ դրամ փոխանցել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 1150000088680300 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-27, հանձնաժողովի քարտուղար Ս. Գետրգյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը ժամը 15.00-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/309 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կարիքների համար Ծովագյուղի խմելու ջրատարի գլխամասային կառույցների նորոգման եւ Գեղամաբակի պոմպակայանի վերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով:**

Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 1500 ՀՀ դրամ փոխանցել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 1150000088680300 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-27, հանձնաժողովի քարտուղար Ս. Գետրգյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը ժամը 15.30-ն:

Հովհաննես Այվազովսկուն նվիրված արծաթե հուշադրամն արժանացել է մրցանակի

ՈԴ «Վոսթր Մարկ» հրատարակչության նախաձեռնությամբ անց է կացվել ԱՊՀ եւ բալթյան երկրների մեծաղադամների առաջին «Մեծաղադամների համաստեղություն 2007» մրցույթը, որին մասնակցել են ԱՊՀ եւ բալթյան երկրների կենտրոնական բանկերը եւ դրամահատարանները:

ՀՀ կենտրոնական բանկը եւս մասնակցել է մրցույթին՝ ներկայացնելով 2006թ. թողարկման 3 հուշադրամ, որոնցից մեկը՝ Հովհաննես Այվազովսկուն նվիրված արծաթե հուշադրամն արժանացել է «Օրիգինալ տեխնոլոգիա» մրցանակին եւ դիպլոմի:

ԿԲ մամուլի ծառայություն

Фонд Бориса Ельцина, "Институт Евразийских Исследований" и "Кавказский Институт Демократии" объявляют о начале конкурса "Русская премия" 2007 года

"Русская премия" ежегодно присуждается авторам литературных произведений на русском языке, проживающим в странах СНГ (кроме России) и Прибалтики.

В 2007 г. на конкурс принимаются:

В номинации "крупная проза" - повести и романы (объемом 7 и более авторских листов);

В номинации "малая проза" - повести и сборники рассказов (объемом от 2 до 7 авторских листов);

В номинации "поэзия" - поэтические сборники (объемом от 2 до 4 авторских листов).

К конкурсной работе должны прилагаться краткая биография автора и контактная информация: почтовый индекс, адрес, электронный адрес (при наличии такового), контактный телефон, факс.

Победитель в каждой номинации получает премию в размере $3 000 и право заключить с учредителями договор на издание своих произведений.

К рассмотрению принимаются тексты, изданные или опубликованные в бумажных или электронных средствах массовых коммуникаций в течение 2006-2007 гг., а также рукописи.

Срок подачи произведений на конкурс - с 17 сентября до 17 декабря 2007 года.

Оргкомитет в Москве: +7 (495) 699-92-33, 699-22-13, +7 (915) 367-57-17, info@russpremia.ru

---

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ - ՄԲԱՊՁԲ - 07/52» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ պետության կարիքների համար անհրաժեշտ գույքի ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 700 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ», Հ/Հ 247230066158 «Բեջ-Գալ» ՍՊԸ -ի հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 23-93-25, Հ. Սարգսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրվա ժամը 15:00-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/307 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կարիքների համար Վահան գյուղի գազաֆիկացման աշխատանքների իրականացման նպատակով:

Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 2300 ՀՀ դրամ փոխանցել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 1150000088680300 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-27, հանձնաժողովի քարտուղար Ս. Գետրգյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 14.30-ն:

Վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 5.25 տոկոս

2007թ. նոյեմբերի 2-ի նիստում ԿԲ խորհուրդը վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացրեց 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով այն 5.25%:

2007թ. հոկտեմբերին սեպտեմբերի նկատմամբ արձանագրվել է 3.1% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճը կազմել է 5.7%՝ արդեն իսկ 0.2 տոկոսային կետով բարձր գտնվելով նպատակային 4(1.5% թիրախի վերին սահմանից:

ԿԲ խորհուրդը հաստատեց, որ վերջին ամիսներին շարունակվող նավթամթերքի, ցորենի, կենդանական եւ բուսական յուղի միջազգային գների աննախադեպ աճը, չնայած դրամի փոխարժեքի արժեւորման միտումների պահպանմանը, հանգեցրել է ներքին շուկայում բարձր գնաճային միջավայրի ձեւավորման:

Խորհուրդը համակարծիք է, որ նշված արտաքին գնաճային շոկերի չեզոքացումը մոնետար լծակներով հնարավոր չէ: Սակայն արտաքին միջավայրի նման զարգացումների երկրորդային ազդեցությունը՝ զուգորդվելով մասնավոր սպառման աճի տեմպերի ավելացմամբ եւ ակնկալվող բյուջետային ծախսերի ընդլայնողական ազդեցությամբ, շարունակելու է պահպանել գնաճային ճնշումներ:

Կենտրոնական բանկի այսօրվա եւ հոկտեմբերի 2-ի տոկոսադրույքների բարձրացման քաղաքականությունը նպատակ ունի չեզոքացնելու կուտակված գնաճային ճնշումները եւ հետագա 12-ամսյա ժամանակահատվածում գնաճը պահպանելու նպատակային թիրախի սահմաններում:

ԿԲ մամուլի ծառայություն

ԱՅԴ

Նոյեմբերի 9-ին, ժամը 13.00-ին Նոր Այնթապի «Հասմիկ եւ Արամ Կարամանուկյան» դպրոցի «Գէորգ Գանտահարեան» հանդիսասրահում տեղի կունենա հանդիպում կոմպոզիտոր **Ռոբերտ Ամիրխանյանի** եւ երգչուհի **Սեդա Ամիր-Կարայանի** հետ:

Ներկա գտնվել ցանկացողներին ավտոբուսները կսպասեն «Մեր թաղը» սրճարանի առջեւ (Թումանյան փող., 21/1), ժամը 12.00-ին:

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ «ՆՈՐ ԱՅՆԹԱՊ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Կորել է

Վերժինե Կարապետի Թարխանյանի միջնակարգ կրթության վկայականը N 592743, տրված 1978-79 ուս. տարում Ե.Չարենցի անվ. միջն. դպրոցի կողմից:

Համարել անվավեր:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՍԱՐ ՅԱՆԵԳԱՇՄԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Ավետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրած է տպագրության՝ 2.11.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: